

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՈՒ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՎԻՐՅԱԼԸ

Երևան 2018

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԽԱՉԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ
ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ

ՀԱՅՈՑ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆՎԻՐՅԱԼԸ

Հանրապետական գիտական նստաշրջանի նյութերի ընտրանի, նվիրված
անվանի պատմաբան, թանգարանագետ Լավրենտի Աշոտի Բարսեղյանի
ծննդյան 80-ամյակին
(27 դեկտեմբերի 2017 թ.)

МИНИСТЕРСТВО НАУКИ И ПРОСВЯЩЕНИЯ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
АРМЯНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ ПЕДАГОГИЧЕСКИЙ УНИВЕРСИТЕТ
ИМЕНИ ХАЧАТУРА АБОВЯНА

МИНИСТЕРСТВО КУЛЬТУРЫ РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
«СЛУЖБА ПО ОХРАНЕ ИСТОРИЧЕСКОЙ СРЕДЫ И ИСТОРИКО-
КУЛЬТУРНЫХ МУЗЕЕВ-ЗАПОВЕДНИКОВ» ГНО

ПОДВИЖНИК ИСТОРИИ И КУЛЬТУРЫ АРМЕНИИ

Избранные материалы республиканской научной конференции,
посвященной 80-летию со дня рождения известного историка и музееведа
Лаврентия Ашотовича Барсегяна
(27 декабря 2017 г.)

ԵՐԵՎԱՆ – ЕРЕВАН

2018

ՀՏԴ 902 : 94 (479.25) : 06
ԳՄԴ 63 . 4 + 63 . 3 (5h)

Ժողովածուն հրատարակության է երաշխավորել ՀՀ մշակույթի նախարարության «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի գիտական խորհուրդը:

Գլխավոր խմբագիր՝ պատմ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր **Աշոտ Փիլիպոսյան**

Խմբագիրներ՝ պատմ. գիտ. թեկնածու **Կարեն Փահլևանյան**, պատմ. գիտ. թեկնածու **Կարինե Բազեյան**, **Լիաննա Գևորգյան**, **Մանուշակ Ասլանյան, Լիլիթ Գևորգյան**

Գեղարվեստական ձևավորումը՝ **Հեղինե Հարությունյանի**

Հ 282 «Հայոց պատմության ու մշակույթի նվիրյալը». Հանրապետական գիտաժողով, նվիրված Լավրենտի Բարսեղյանի ծննդյան 80-ամյակին (հոդվածների ժողովածու) - Երևան, «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, 2018.- 160 էջ:

Ժողովածուն ընդգրկում է հոդվածներ նվիրված պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, հնագետ Լավրենտի Բարսեղյանի կյանքին ու գործունեությանը, նրա կողմից իրականացված պեղումների արդյունքների լուսաբանմանը, իր ղեկավարությամբ ու անմիջական մասնակցությամբ իրականացված աշխատանքներին՝ Հայաստանի մի շարք նշանավոր թանգարանների ստեղծման ու կայացման, հայկական պատմամշակութային հուշարձանների պահպանության ու վերականգնման ոլորտում և արհեստավարժ կադրերի պատրաստման գործում: Այն նախատեսված է մասնագետների, բուհերի հումանիտար ֆակուլտետների դասախոսների, ուսանողների և ոլորտով հետաքրքրվող անձանց համար:

ՀՏԴ 902 : 94 (479.25) : 06
ԳՄԴ 63 . 4 + 63 . 3 (5h)

ISBN 987 – 9939 – 867 – 17 - 5

© «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ, 2018

ՍԵԴԱ ԴԵՎԵՋՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ
ՖՐԻՆԱ ԲԱԲԱՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ԳԻՏՆԱԿԱՆԸ, ԹԱՆԳԱՐԱՆԱԳԵՏԸ, ԸՆԿԵՐԸ

1954 թ. սեպտեմբերի 1-ին, Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետի լսարան մտան Հայաստանի արական և իգական դպրոցներն ավարտած շուրջ քառասուն ուսանողներ, որոնք կարկամած, երկչոտ հայացքներով զննում էին միմյանց, մտածելով, թե ինչպես են անցնելու իրենց հինգ տարվա երկար ու ձիգ տարիները: Առաջին կուրսեցիներից էր նաև դպրոցը ոսկե մեդալով ավարտած, 17 տարեկան, խելացի, համարձակ երիտասարդը՝ Լավրենտի Բարսեղյանը, ով անմիջապես նկատվեց և ուսանողական տարիների ընթացքում կարողացավ իր շուրջը համախմբել բոլորին: Օժտված էր կազմակերպչի ու ղեկավարի բնատուր հատկություններով, հումորի զգացումով, սովորում էր գերազանց: Մարդկային այդ բարձր հատկանիշներն էլ ուսանողական տարիներին նրան դարձրին ընկերների սիրելին: Կուրսընկերները լսում, վստահում և հավատում էին նրան, մասնակցում կազմակերպած միջոցառումներին, հետևում նրա նորանոր մտահղացումներին: Այդ էր պատճառը, որ բոլորը նրան քնքշորեն Լավրիկ էին անվանում:

Ուսանողական տարիներին մեզ դասախոսեցին մեծանուն գիտնականներ Վահան Ռշտունին, Աբգար Հովհաննիսյանը, Հայկազ Ժամկոչյանը, Կարո Ղաֆադարյանը և խոնարհանքի արժանի շատ այլ երախտավորներ: Մեր կուրսից յոթ հոգի, Կ. Ղաֆադարյանի դասախոսություններից ոգեշնչված, ընտրեց հնագիտության ասպարեզը՝ պեղումների, պատմամշակութային նոր հայտնագործությունների հրապուրիչ և զարմանահրաշ աշխարհը: Լավրիկը դրանցից մեկն էր, ով նախընտրեց հայոց պատմության հնագույն շրջանի, հինարևելյան պետությունների հետ կապված՝ հայոց նախապատմության ուսումնասիրությունը: Հետագայում սիրելի դասախոսը ուղղորդեց նրան դեպի թանգարաններ: Իսկ միջնադարյան հնագիտությամբ զբաղվողների համար, Կ. Ղաֆադարյանը երկար տարիներ դարձավ նրանց գիտական կյանքի ուղեկիցը:

Լ. Բարսեղյանի ընդունակություններն ու գիտական հետազոտությունները գնահատողներից էր նաև ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի վաղ հնագիտության բաժնի վարիչ, պրոֆեսոր Հարություն Մարտիրոսյանը: Նա մեծ ցանկություն և հույսեր ուներ, որ Լավրիկը կզբաղվի խեթագիտությամբ: Սակայն Բարսեղյանի հախուռն, անհանգիստ, մտահղացումներով լի անհատականությունը նրան տարավ վարչական աշխատանքի:

Պատասխանատու աշխատանքի ծանրաբեռնվածությամբ հանդերձ, նա կարողացավ շարունակել գիտական ուսումնասիրությունները, որի առհավատչյան եղավ 1964 թ. թեկնածուական ատենախոսության փայլուն պաշտպանությունը՝ «Հայկական լեռնաշխարհի ցեղային միությունների պատմությունից մ.թ.ա. XV-XIII դդ. (Հայասա-Ազզի)» թեմայով:

Հայկական լեռնաշխարհում մ.թ.ա. XV դ. ձևավորված Հայասա-Ազզի ցեղային միության և խեթական հզոր պետության քաղաքական, ռազմական, մշակութային փոխհարաբերությունները հայտնի են խեթական սեպագիր աղբյուրներից: Եվրոպական բազմաթիվ նշանավոր արևելագետներ զբաղվել են խեթական գրավոր աղբյուրների վերծանմամբ, Հայասա-Ազզի ցեղային միության պատմությամբ: Հայ իրականության մեջ Գրիգոր Ղափանցյանից, Գևորգ Ջահուկյանից, Նշան Մարտիրոսյանից (Պրահա) հետո, այս բնագավառում մեծ ներդրում ունեցավ Լ. Բարսեղյանը: Նա գտնում էր, որ մ.թ.ա. III հազ. վերջին, հնդեվրոպացի հայասները, ինչպես հնդեվրոպական այլ ցեղեր, հաստատվել են Փոքր Ասիայում: Հայասները բնակվել են հյուսիս-արևելքում՝ պատմական Հայաստանի տարածքում, և մեծ դեր խաղացել հայ ժողովրդի կազմավորման գործում: Հայերի նախապատմության հետ կապված, ունի մի քանի կարևոր հոդվածներ, անդրադարձել է նաև Արմանի, Արմե և Ուրմե երկրների տեղադրությանը Հայկական լեռնաշխարհում՝ մ.թ.ա. XXIII դարում:[1]

Լ. Բարսեղյանի գիտական աշխատանքների ամփոփումը դարձավ «Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտության մեջ» դոկտորական ատենախոսությունը, որը լույս տեսավ 1996 թ.:[2] Այստեղ, նա կարողացավ հավաքել հայերի ծագման և կազմավորման մասին հնարավոր ու անհնարին բոլոր

[1] **Լ. Բարսեղյան**, *Հնագույն ցեղային միավորումը Հայաստանում*, ՏՀԳ, Երևան 1962, էջ 87-90:
[2] **Լ. Բարսեղյան**, *Հայ ժողովրդի ծագման և կազմավորման հարցերը պատմագիտության մեջ,* Երևան, 1996, 304 էջ:

սկզբնաղբյուրներն ու վկայությունները՝ սկսած խեթական, հինարևելյան աղբյուրներից, հունական, արաբական պատմիչների, աշխարհագրագետների երկերից, հայկական սկզբնաղբյուրներից, մարդաբանական տվյալներից, մինչև հայ և օտարալեզու պատմագրության և ժամանակակից հայտնի գիտնականների ուսումնասիրությունների արդյունքները: Այսպիսով, Լ. Բարսեղյանի աշխատանքը դարձավ հիշյալ մութ և խրթին հարցին վերաբերող հարուստ շտեմարան, խթան և ուղեցույց նաև հետագա ուսումնասիրողների համար:

Քննադատական վերաբերմունք ունենալով սկզբնաղբյուրների և որոշ ուսումնասիրողների եզրակացությունների նկատմամբ, Լ. Բարսեղյանը տալիս է հայ ժողովրդի կազմավորման ընթացքի ժամանակագրությունն ու շրջանաբաժանումը չորս փուլով: Հայկական լեռնաշխարհում մարդու գործունեության սկզբնավորումից մինչև մ.թ.ա. VI հազ., ցեղային միավորումների կազմավորումից մինչև Երվանդունիներ և Հելլենիստական ժամանակաշրջան, երբ «Հայկական լեռնաշխարհում գոյություն ուներ մեկ միասնական հայ ժողովուրդ, իր միասնական տարածքով, լեզվով ու մշակույթով»:

Հիշատակության արժանի է անվանի արևելագետ, ակադեմիկոս Գագիկ Սարգսյանի ընդդիմախոսական ելույթը: Նա բարձր է գնահատել Լ. Բարսեղյանի գիտական աշխատանքը, շեշտելով հեղինակի օբյեկտիվությունը, բարեխղճությունը, անաչառությունը, համարելով այն կարևոր ներդրում հայ պատմագրության պատմության մեջ:[3]

Լ. Բարսեղյանը ներդրում ունի նաև ուրարտագիտության ասպարեզում: Նա կարողացավ հավաքել և հրատարակել ուրարտական 190 նշանագիր, որոնք շուրջ 100 տարի առաջ հայտնի դարձան գերմանացի գիտնական Լեհման-Հաուպտի Տոսպ-Վան մայրաքաղաքում կատարած պեղումներից, ինչպես նաև հետագայում բացված ուրարտական մյուս կենտրոններից:[4] Իր հնագիտական շրջագայությունների արդյունքում հայտնաբերել է չորս քարե վիշապակոթող, որոնք լրացրին Ն. Մառի և Յու. Սմիռնովի կողմից հայտնաբերված հավաքածուն:[5]

---

[3] **Գ. Խ. Սարգսյան**, *Պատմագիտական հետազոտություններ*, Երևան, 2006, էջ 235-242:
[4] **Барсегян, Л. А.**, *Об урартской иероглифической письменности,* ԼՀԳ, 1967, N 2, էջ 85-90:
[5] **Լ. Բարսեղյան**, *Գեղամա լեռների «Վիշապները»,* ՊԲՀ, 1967, N 4, էջ 181-188:

Լավրենտի Բարսեղյանի գրչին կարող էին պատկանել բազմաթիվ մեծածավալ գիտական այլ աշխատություններ, եթե աշխատանքի բերումով, կառավարության որոշմամբ, տեղից-տեղ չտեղափոխվեր: Վարչական աշխատանքում ունեցած տարիների փորձը բացահայտեց ղեկավարելու նրա բացառիկ ունակությունը: Օրինակ, նրան վստահվեց Ծիծեռնակաբերդի համալիրի վերականգնման աշխատանքները, որը նա կատարեց կարճ ժամկետում, մեծ նվիրումով ու սիրով:
Լ. Բարսեղյանի մյուս կարևոր ներդրումը եղավ թանգարանաշինությունը: Նա հիմնադրեց Հայաստանի համար շատ անհրաժեշտ մի շարք նոր թանգարաններ, որոնց տնօրինությունը ստանձնեց երկար տարիներ: Հայ հասարակության համար գուցե դա առավել հրատապ էր և այժմեական:

1968 թ. Հայաստանը տոնելու էր Երևանի հիմնադրման 2750-ամյակը: Հարկավոր էր շտապել: Պահանջվում էր բանիմաց, խելացի, գործունյա ղեկավար: Լ. Բարսեղյանը, բոլորիս աչքի առջև, գիշերը ցերեկ դարձրած, իրականացնում էր Էրեբունի ամրոցի վերակազնման աշխատանքները, հնագիտական պեղածոների ցուցադրությունը՝ թանգարանում: Դա համաժողովրդական տոնախմբություն էր, քանի որ Երևանը ստացավ իր՝ մ.թ.ա. 782 թվականով «անձնագիրը»: Այդ նվիրական օրը, թանգարանի բացման նախօրյակին, մենք՝ հնագետ համակուրսեցիներս, Լ. Բարսեղյանի կողքին էինք, որը տեղի տալով մեր խնդրանքին, թույլ տվեց անհնարին մի բան՝ Արգիշթի II-ի սեպագիր անունը կրող բրոնզե թասով, մի կում գինի ըմպել: Որոշ ժամանակ ստանձնեց թանգարանի տնօրինությունը, ապա, նրան տեղափոխեցին Հայաստանի պատմության պետական թանգարան, որպես գիտական գծով փոխտնօրեն (1971-1972 թթ.): Այնուհետև՝ 1973-1978 թթ., նա նշանակվեց Հայաստանի մշակույթի նախարարության մշակութալուսավորչական հիմնարկների վարչության պետ:

1978 թ. նրան տեսնում ենք Սարդարապատում: Դարձյալ հրատապ պետք է բացվեր տաղանդաշատ ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի նախագծով կառուցված, արտաքինից բերդ հիշեցնող թանգարանը: Օրերը սահմանափակ էին, աշխատանքն՝ անսպառ: Լավրենտին, իրեն հատուկ նվիրումով նետվեց աշխատանքի: Վերջապես, 1918 թ. Սարդարապատի ճակատամարտի հիշատակին կառուցված, նմանը չունեցող ճարտարապետական համալիրի այս հոյակապ շենքը,

իր բազմաթիվ սրահներով, ցուցանմուշներով, դռները բացեց որպես համաշխարհային նշանակության Ազգագրության թանգարան: Պետք է ասել, որ մենք, Լավրիկի հնագետ ընկերներս, թանգարան էինք մտնում սիրո և հպարտության զգացումով, քանի որ նախադեպը չունեցող այդ կառույցի ճարտարապետը մեր մտերիմ ընկերուհի, հնագետ Հասմիկ Իսրայելյանի հայրն էր, իսկ տնօրենը՝ մեր սիրելի ընկերը:

Հմուտ թանգարանագետ Լ. Բարսեղյանը, երկար տարիներ դարձավ նաև Հայոց ցեղասպանության թանգարանի տնօրեն, որտեղ գիտական ցուցադրությունը հասցրեց բարձր մակարդակի: Այս խնդրին վերաբերող իր աշխատանքում նա գրում է, որ ի տարբերություն գիտահետազոտական հիմնարկների, գիտական արխիվների և գրադարանների, թանգարանի բնորոշ հատկանիշն է ցուցադրությունը, որ դրա կազմակերպումը պետք է կատարել բարեխղճությամբ և լիարժեքությամբ:[6]

Լ. Բարսեղյանը, որպես մեծ հայրենասեր ու քաղաքացի, արձագանքում էր յուրաքանչյուր համահայկական խնդրի: Ջանք չէր խնայում կորստից փրկելու հայկական մշակութային արժեքները ոչ միայն արդի Հայաստանի տարածքում, այլև արտերկրում: 1990 թ. ապրիլի 12-14-ը Ստրասբուրգում կայացած հայ ճարտարապետական ժառանգությանը նվիրված միջազգային գիտաժողովում մասնակցում է Հայաստանի միջնադարյան մայրաքաղաք Անիի պահպանության մասին հատուկ բանաձևի ընդունմանը (Մշակույթ, Հատուկ բանաձև, N 23-90, մարտ-հունիս, Երևան, էջ 75-91):

1988 թ. դեկտեմբերի 7-ին Հայաստանում տեղի ունեցած սոսկալի երկրաշարժից ցնցված, նա ի մի բերեց հնագույն ժամանակներից մինչև XX դ. սկիզբը Հայկական լեռնաշխարհի երկրաշարժերի վայրերն ու ժամանակը, ըստ համահավաք ցուցակի:[7]

Ռուս հայտնի մարդաբան Վ. Վ. Բունակը 1917 թ. Վանի շրջանի Բինգյոլ Դաղ (Бингёл Даг) վայրից, ուսումնասիրության համար, հավաքել էր Եղեռնի զոհ դարձած հայերի գանգեր, որոնք հիմք դարձան 1927 թ. լույս տեսած նրա "Crania Armenica" գրքի

---

[6] **Լ. Բարսեղյան, Ե. Մարգարյան**, *Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրության կազմակերպման սկզբունքները*, Երևան 2006;

[7] **Լ. Բարսեղյան**, *Պատմագրական վկայություններ Հայկական լեռնաշխարհի երկրաշարժերի մասին (հնագույն ժամանակներից մինչև XIX դարի սկիզբը),* Երևան, 1995, էջ 3-63:

համար:[8] Նա հավաքել էր 152 մեծահասակ տղամարդկանց և 26 երեխայի գանգեր, որը թույլ էր տվել նրան հիմնավորել Արմենոիդ (առաջավորասիական) մարդաբանական տիպի յուրահատկությունը: Այդ գանգերը նա նվիրել է Մոսկվայի Պետական Համալսարանին և ինստիտուտին: Այդ մասին Լ. Բարսեղյանին հաղորդել էր ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող, հնամարդաբան պ.գ.թ. Անահիտ Խուդավերդյանը: 1990-ական թթ. վերջերին, Վ. Վ. Պուտինի Հայաստան այցելության ժամանակ, Լ. Բարսեղյանը խնդրում է նրան, այդ հավաքածուն նվիրել Ցեղասպանության թանգարանին: Վ. Վ. Պուտինը, թեև խոստացավ կատարել նրա խնդրանքը, սակայն, հայտնի է, որ դա տեղի չունեցավ:

Կյանքի վերջին տարիներին, թանգարանագիտության ասպարեզում կուտակած փորձն ու գիտելիքները ներդրեց դասախոսական աշխատանքում, աշխատելով Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում, որպես՝ թանգարանագիտության ամբիոնի վարիչ:

Լավրենտի Բարսեղյանն իր պաշտոնական դիրքը երբեք չչարաշահեց, չմեծամտացավ, ուներ ընկերական մեծ շրջանակ, որոնք ամեն մի չլուծված հարցով դիմում էին իրեն: Իսկ նա, օգտագործելով իր հեղինակությունն ու կապերը, լավ իմանալով օրենքները, աշխատում էր սատարել նրանց:

Աշխատակիցների հանդեպ պահանջկոտ էր, բծախնդիր, չէր հանդուրժում որևէ թերացում, մյուս կողմից պատրաստակամ էր ամեն կերպ օգտակար լինելու նրանց: Այսպիսին էր մեր Լավրիկը, որն իր երկրային կյանքում տքնեց, արարեց և անէացավ, Հայրենիքին թողնելով մնայուն գանձեր:

---

[8] **В. В. Бунак**, *Crania Armenica, Исследование по антропологии Передней Азии*, Труды антропологического НИИ при МГУ, М., 1927, с. 264:

ԱԼՎԱՐԴ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՊՄՀ-ի պատմության թանգարանի տնօրեն

ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԹԱՆԳԱՐԱՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ

Հայաստանի արդի թանգարանագիտության բնագավառում անգնահատելի է Լավրենտի Բարսեղյանի ավանդը: Թանգարանային գործունեության հետ կապված նրա կենսագրական տվյալներում նշվում է՝ հիմնել է, ղեկավարել է, կազմակերպել է, վերանորոգել է ....: Այդ գործունեությունը ամփոփվել է նաև թանգարանագիտությանը նվիրված գիտական աշխատություններում[1] (նկ. 1):

Լավրենտի Բարսեղյանի գործունեությանը ծանոթանալով, չես կարող պատկերացնել որևէ բնագավառ, որը «գերազանցեր իր ուժերը»: Օրինակ, 1978 թ., ուշադրության կենտրոնում ունենալով Հայաստանի ազգագրության պետական թանգարանի կազմակերպումը, Լ. Բարսեղյանը կարևորեց նաև բուհական թանգարանի անհրաժեշտությունը և, հաշվի առնելով, որ համալսարանական թանգարանների դասական սկզբունքը ենթադրում է բուհական դասավանդման գործընթացն արդյունավետ և բազմակողմանի իրականացնելու համար օգտագործել բնօրինակ հավաքածուներն ու արխիվային փաստաթղթերը, կազմակերպեց Մ. Հերացու անվան բժշկական ինստիտուտի թանգարանը: Թանգարանի նպատակներից մեկը հավաքածուների հիման վրա ուսուցման կազմակերպումն էր՝ բուհի բոլոր ուսանողների ու դասախոսների համար, ինչպես նաև համապատասխան գիտական

[1] Տես՝ **Լ. Բարսեղյան**, *Հայաստանի ազգագրության պետական թանգարանում հայ ժողովրդի տնտեսական և հասարակական կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթների ցուցադրության կազմակերպման հիմնական սկզբունքների մասին,* // Թեզեր Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական չորրորդ գիտական կոնֆերանսի զեկուցումների, Երևան, 1979, էջ 20-22: **Բարսեղյան Լ.,** *Գիտական մոտեցումով,* ԳՏ, 1983, թիվ 7, էջ 18-21: **Բարսեղյան Լ. Ա.**, Թանգարանն այցելումով է թանգարան. գիտալուսավորական աշխատանքը թանգարաններում, ԿԼԱ, 1984, թիվ 2, էջ 7-13: **Բարսեղյան Լ.,** *Թելադրում է ժամանակը*, ԿԼԱ, 1984, թիվ 7, էջ 2-7: La sauve garde du parimoine architectonique de l'Armenie, "ICOMOS Informations", N 2-3, Avril-Juin, Roma 1989, p. 1-19. **Բարսեղյան Լ.**, *Հայոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրության կազմա-կերպման մի քանի հարցեր:* // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր, հ. 8, Երևան 2003, էջ 3-18: **Բարսեղյան Լ., Մարգարյան Ե.,** *Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրության կազմակերպման սկզբունքները:* Երևան, 2006, 72 էջ:

հետաքրքրություններ ունեցող մասնագետների՝ թանգարանի ծառայություններից օգտվելը: Լ. Բարսեղյանն իր գործունեության ընթացքում միշտ կարևորել է երիտասարդների մասնագիտական պատրաստումն ու երիտասարդ կադրերին օժանդակելը: Ազգագրության և թանգարանագիտության բնագավառի հայտնի մասնագետները կարող են վկայել, թե ինչպես՝ աշխատելով Հայաստանի ազգագրության պետական թանգարանում և ուղղորդվելով Լ. Բարսեղյանի կողմից, շատ արագ պաշտպանեցին գիտական թեզեր ու դարձան ոլորտի առաջատար մասնագետներ:

Լինելով Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի տնօրեն, Լ. Բարսեղյանը Խաչատուր Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանի (այսուհետև՝ ՀՊՄՀ) Կուլտուրայի ֆակուլտետի Թանգարանագի-տության բաժնի ուսանողների համար կազմակերպում էր վարպետաց դասեր, որոնք հետաքրքիր և ուսանելի էին ոչ միայն ուսանողների, այլ նաև ամբիոնի դասախոսների համար:

2007 թ. Լավրենտի Բարսեղյանը անցավ դասախոսական աշխատանքի և իսկ հետագայում ղեկավարեց ՀՊՄՀ Կուլտուրայի ֆակուլտետի Թանգարանագիտության ամբիոնը (նկ. 2): Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ ՀՊՄՀ-ն հանրապետության համար թանգարանագիտական կադրեր պատրաստող առաջատար բուհն է, Բարսեղյանն առաջնահերթ համարեց ուսումնական ծրագրերի վերանայումն ու արդիականացումը: Կարճ ժամանակում նրա ղեկավարած ամբիոնը համալրվեց նոր մասնագետներով, որոնց աշխատանքը գտնվում էր ամբիոնի վարիչի մշտական ուշադրության տակ: Թանգարանագիտության բնագավառում մեծ վաստակ ունեցող հայտնի մասնագետների հետ մեկտեղ Լ. Բարսեղյանն աշխատանքի ընդունեց նաև երիտասարդ մասնագետների, որոնց ամեն օր ինչ-որ բան էր սովորեցնում և անհանգստանում էր, եթե, օրինակ, թեզի հետ կապված հարցերը ձգձգվում էին: Ականջիս է նրա հռետորական հարցը. «Բա ով է մեզանից հետո աշխատելու», երբ ասում էինք, թե երիտասարդներին շատ է ծանրաբեռնում: Այս տարիներին Լ. Բարսեղյանը խմբագրեց ամբիոնի դասախոսների հեղինակած մի շարք ուսումնական և մեթոդական ձեռնարկներ:

Առանձնահատուկ վերաբերմունք ուներ ուսանողների հանդեպ: Լինելով խստապահանջ, միաժամանակ ամեն կերպ օգնում, աջակցում և պաշտպանում էր նրանց: Ուսանողներն էլ մեծ սիրով էին պատասխանում նրան: Որպես ամբիոնի վարիչ, ուսուցման ընթացքում Լ. Բարսեղյանը մեծ տեղ էր հատկացնում գործնական պարապմունքներին, ուսումնական պրակտիկային: Այդ տարիների ընթացքում ուսանողներն ամբիոնի դասախոսների ուղեկցությամբ պարտադիր այցելում էին Հայաստանի թանգարաններն ու պատմամշակութային հուշարձանները:

Թանգարանագիտական կրթության շրջանակներում վերջին տարիներին անհրաժեշտություն դարձավ նաև թանգարանային մանկավարժի պատրաստումը: Լ. Բարսեղյանի հետ քննարկում էինք տարբեր հարցեր. որ լավագույն տարբերակն է, երբ այն իրականանում է մանկավարժական կրթության շրջանակներում, որտեղ ուսուցման հնարավորություններն ավելի լայն են, որ թանգարանային մանկավարժական կրթությունը, թերևս, կարող է լինել լրացուցիչ և ձեռք բերվել նաև մանկավարժական համալսարանի մագիստրատուրայում: Հիմնվելով իրադրության վերլուծության և քննարկումների վրա, պարզ դարձավ, որ անհրաժեշտ է մասնագետների պատրաստում և վերապատրաստում իրականացնել ՀՊՄՀ-ում: Քննարկվում էր նաև այն, որ թանգարանային մանկավարժություն առարկան պետք է դասավանդել բոլոր ապագա մանկավարժներին, որոնք հետագա գործունեության ընթացքում կկարողանան այդ գիտելիքները կիրառել թանգարանների հսկայական կրթական ներուժը սովորողներին ներկայացնելու համար:

Թանգարանագիտության ամբիոնին կից Լ. Բարսեղյանը հիմնեց կաբինետ, որի գրադարանը համալրեց արժեքավոր մասնագիտական գրականությամբ, տեխնիկական միջոցներով, ինչը հնարավորություն տվեց ուսուցումը կազմակերպել արդիական մեթոդներով: Կարծում եմ, բնական է, որ այդ կաբինետն անվանակոչվեց «Պրոֆեսոր Լավրենտի Բարսեղյանի անվան կաբինետ-լսարան»:

Առանձին ուզում եմ անդրադառնալ այն աշխատանքին, որ Լ. Բարսեղյանն իրականացրեց ՀՊՄՀ-ի պատմության թանգարանի ստեղծման ուղղությամբ:

Համալսարանի պատմության ֆակուլտետում դասախոս, հնագետ Վարշամ Ավետյանի կողմից կազմակերպված կաբինետի նյութերի հիման վրա 2004 թ. ստեղծվեց թանգարան, որն ամփոփված էր մեկ սենյակում և ավելի շուտ

ֆոնդապահոց էր, քանի որ չուներ ցուցադրություն: 2008 թ., ստանձնելով թանգարանի տնօրենի պարտականությունները, սկսեցինք համալրել ֆոնդերը նաև Մանկավարժական ինստիտուտի, իսկ հետագայում՝ համալսարանի պատմությանը նվիրված նյութերով: 2010 թ. համալսարանի նորանշանակ ռեկտոր Ռուբեն Միրզախանյանը որոշեց թանգարանում ստեղծել հայկական մանկավարժության պատմության, ինչպես նաև համալսարանի հարուստ ավանդույթները ներկայացնող ցուցադրություն, որպեսզի մեր ուսանողները և բուհի հյուրերը տեղեկանան համալսարանի պատմությանն ու գործունեությանը՝ սկզբնավորումից մինչև մեր օրերը, շեշտելով դրա տեղն ու նշանակությունը Հայաստանի բուհական համակարգում և երկրի պետականության կայացման գործում: Բնականաբար, թանգարանի ցուցադրության ստեղծման գործին հենց սկզբից ընդգրկվեց Լ. Բարսեղյանը, ով ցուցադրության թեմատիկ պլանը հաստատելուց հետո, որպես թանգարանի ցուցադրության նկարիչ-ձևավորող հրավիրեց փորձառու մասնագետ Հայկազ Քոչարին: Այդ պահից սկսած աշխատանքի յուրաքանչյուր պահ համաձայնեցվում էր Լ. Բարսեղյանի հետ (նկ. 3): Արդյունքում, նրա օգտակար խորհուրդները նպաստեցին, որ 2012 թ. նոյեմբերի 19-ին՝ բուհի հիմնադրման 90 ամյակի առթիվ, բացվի մանկավարժական համալսարանի պատմության թանգարանի ներկայիս ցուցադրությունը: Թանգարանում ներկայացված է բուհի պատմությունը՝ սկսած դրա հիմնադրումից մինչև մեր օրերը: Այն ակտիվ գործող կրթամշակութային կենտրոն է, որն իրականացնում է տարաբնույթ ծրագրեր ու միջոցառումներ տարբեր տարիքի լսարանների համար, ակտիվորեն համագործակցում նման գործունեություն ծավալող մի շարք հաստատությունների հետ:

ՀՊՄՀ-ի պատմության թանգարանը, հաշվի առնելով Լ. Բարսեղյանի առաջարկությունը, իրականացնում է նաև բուհի թանգարանագետ կադրերի պատրաստման մասնագիտական բազային կենտրոնի գործառույթ՝ սերտ համագործակցելով համապատասխան ամբիոնի հետ:

2012 թ. թանգարանի վերակառուցված նոր, մշտական ցուցադրությունը հնարավորություն տվեց բուհի պատմությունն առավել լիարժեք ու համակողմանի ներկայացնելու այցելուներին, ինչի շնորհիվ թանգարանը վերածվեց կրթական

լրացուցիչ տարածքի: Ելնելով թանգարանի գիտական զարգացման հայեցակարգից, կազմակերպվել են մի շարք կրթական ծրագրեր՝ թեմատիկ ցուցահանդեսներ համալսարանի պատմության և գործունեության վերաբերյալ, ճանաչողական էքսկուրսիաներ, տարբեր տարիքի այցելուների համար թեմատիկ էքսկուրսիաներ՝ «Հայ գրերի գյուտը» խաղ-էքսկուրսիա, «Ճանաչենք Աբովյանին» թեմատիկ էքսկուրսիա, մասնագիտական կողմնորոշմանն ուղղված էքսկուրսիա և այլն:

Կարևորելով ուսանողների տեղեկացվածությունը համալսարանի պատմությանն ու ավանդույթներին, թանգարանն առաջին կուրսի ուսանողների համար կազմակերպում է ճանաչողական էքսկուրսիա: Այն իրականացվում է ոչ միայն թանգարանի աշխատակիցների, այլև բուհի բարձր կուրսերի ուսանողներից ձևավորված թանգարանի կամավորների միջոցով, որոնք նորեկներին ծանոթացնում են բուհի պատմությանն ու ուսանողական կյանքի առանձնահատկություններին: Որպես կրթամեթոդական կենտրոն՝ թանգարանը համագործակցում է բուհի տարբեր ֆակուլտետների և հանրապետությունում գործող տարբեր կրթամշակութային կառույցների հետ:

Այս շրջանակներում թանգարանում կազմակերպվել է «Բուհ-ի պրոֆեսորադասախոսական կազմի և ուսանողների մասնակցությունը Հայրենական պատերազմին և Արցախի ազատագրմանը» խորագրով թեմատիկ ցուցադրություն, որի թե՛ ճանաչողական, և թե՛ դաստիարակչական նշանակությունը դժվար է գերագնահատել: Նույն համատեքստում ցուցահանդես և տարաբնույթ միջոցառումներ են իրականացվում Համալսարանի պատմության ֆակուլտետի հետ՝ նվիրված Մեծ եղեռնի 90-ամյակին, հուշարձանների պահպանության միջազգային օրվան: Ցուցահանդեսի համար նյութերը կազմել և թանգարանին է տրամադրել Լ. Բարսեղյանը: Հայոց Մեծ Եղեռնի 100-ամյա տարելիցին ընդառաջ կազմակերպվեց «100-ամյա ասեղնագործ հիշողություն» խորագիրը կրող միջոցառում, որի շրջանակներում ցուցադրվեցին Արևմտյան Հայաստանից գաղթած և Սիրիայում բնակություն հաստատած հայ կանանց ասեղնագործ աշխատանքները: Միջոցառումը եզրափակվեց «Հանդիպում ցուցահանդեսում» (ռեժիսոր՝ համալսարանի դասախոս Ներսես Հովհաննիսյան), ֆիլմի ցուցադրությամբ, որը Հայոց ցեղասպանությունը վերապրած և կորցրած հարազատին գտնելու հույսը վերագտած ընտանիքի մասին է:

Հավատարիմ մնալով համալսարանական թանգարանների ավանդույթներին՝ կազմակերպվում են ժամանակավոր ցուցահանդեսներ՝ նվիրված բուհի նշանավոր շրջանավարտներին և երախտավորներին:

Տեղայնացնելով նորագույն տեխնոլոգիաները կրթական ծրագրերի մասսայականացման գործընթացում կիրառելու առաջավոր փորձը՝ Համալսարանի պատմության թանգարանում իրականացվել է “Խաչատուր Աբովյան“ 3D անիմացիան, “*աուդիոգիդ*“ միջազգային ծրագիրը, որի շնորհիվ՝ թանգարանի ցուցադրությունն ու տարբեր լեզուներով էքսկուրսիոն ծրագրերն արդեն հասանելի են նաև վիրտուալ տիրույթում:

Համագործակցելով հանրապետության և արտերկրի համալսարանական թանգարանների հետ՝ թանգարանը համատեղ ծրագրեր է իրականացնում ԻԿՕՄ-ի համալսարանական և ակադեմիական թանգարանների կոմիտեի (ՅՈՒՄԱԿ) հետ, ինչպես նաև հրավիրյալ փորձագետի կարգավիճակով՝ ակտիվ մասնակցում է ՀՀ բուհական և ակադեմիական թանգարանների աշխատակիցների համար կազմակերպվող փորձի փոխանակման դասընթացների և խորհրդատվական պարապմունքներին: Դրանցից՝ գերմանացի թանգարանագետ Կարմեն Բեկենբախի, ԻԿՕՄ-ի Գիտության և կրթության կոմիտեի (ՍԵԿԱ) նախագահ, Իտալիայի Հռոմ-3 համալսարանի պրոֆեսոր Էմմա Նարդիի, Լուվրի Դպրոցի ղեկավար Մարի Կլարտե Օ՛Նեյլի, ԻԿՕՄ-ի համալսարանական և ակադեմիական թանգարանների կոմիտեի (ՅՈՒՄԱԿ) նախագահ, Ստրասբուրգի համալսարանի պրոֆեսոր Հյուգ Դրեսսեի հետ հանդիպումներին ակտիվ մասնակցություն է ցուցաբերել նաև Լ. Բարսեղյանը:

Թանգարանային ոլորտում թողած հետքի, նորովի լուծումների, մասնագիտական հզոր կարողությունների դրսևորումների համար Լ. Բարսեղյանը պարգևատրվել է շքանշաններով, արժանացել պետական մրցանակի դափնեկրի կոչման և պետական այլ պարգևների, սակայն նրա ամենամեծ պարգևը գործընկերների և աշակերտների հարգանքն ու բարձր գնահատականն է, որ նույնիսկ իր բացակայության պայմաններում հիշում են նրա խոսքերն ու մտածում, թե ինչ կասեր ընկեր Բարսեղյանը այս կամ այն առիթով:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Բարսեղյան Լ. Ա.,** *Հայաստանի ազգագրության պետական թանգարանում հայ ժողովրդի տնտեսական և հասարակական կենցաղի, նյութական և հոգևոր մշակույթների ցուցադրության կազմակերպման հիմնական սկզբունքների մասին:* // Հայաստանի մշակույթի և արվեստի պրոբլեմներին նվիրված հանրապետական չորրորդ գիտական կոնֆերանսի զեկուցումների թեզեր: Երևան, 1979, էջ 20-22:
2. **Բարսեղյան Լ. Ա.**, *Գիտական մոտեցումով:* // ԳՏ, 1983, թիվ 7, էջ 18-21:
3. **Բարսեղյան Լ.Ա.,** *Թանգարանն այցելումով է թանգարան. գիտալուսավորական աշխատանքը թանգարաններում:* // ԿԼԱ, 1984, # 2, էջ 7-13:
4. **Բարսեղյան Լ. Ա.,** *Թելադրում է ժամանակը:* // ԿԼԱ,1984,# 7, էջ 2-7:
5. **La sauve garde du parimoine architectonique de l'Armenie,** "ICOMOS Informations", Avriv-Juin, # 2-3, Roma, 1989.
6. **Բարսեղյան Լ. Ա.,** *Հ այոց ցեղասպանությանը նվիրված թանգարանային ցուցադրության կազմակերպման մի քանի հարցեր:* // Հայոց ցեղասպանության պատմության և պատմագրության հարցեր: հ. 8, Երևան 2003:
7. **Բարսեղյան Լ., Մարգարյան Ե.,** *Հայոց ցեղասպանության թանգարանի գիտական ցուցադրության կազմակերպման սկզբունքները*, Երևան, 2006:
8. ***Թանգարանային գործիչների աստղաբույլը,*** ԹԳՄԱՀ, # 1, Երևան 2009, էջ 229-230:
9. **Գրիգորյան Ա. Ֆ, Հարոյան Մ. Հ., Ավագյան Ա. Է.**, *Հայաստանի թանգարանների կրթական գործունեության պատմությունը*: ԻԿՕՄ-ՍԵԿԱ-ի տարեկան միջազգային գիտաժողով, Ե., 2012, էջ 18-27:
10. **Մկրտչյան Մ.,** *Համալսարանական թանգարանների առաջացման հարցի շուրջ,* ԹԳՄԱՀ, # 1, Երևան 2009:
11. **Григорян А. Ф.**, *Проблемы подготовки музейных кадров*, «Музей», # 11, М., 2014,

ALVARD GRIGORYAN

ASPU, Director of the Museum

LAVRENTI BARSEGHYAN'S MUSEOLOGICAL ACTIVITY IN THE ARMENIAN STATE PEDAGOGICAL UNIVERSITY AFTER KHACHATUR ABOVYAN

(Summary)

The role of museological activity of Lavrenti Barseghyan in the formation and development of Armenian museums is undeniable. For whatever work in this area he took, success was assured. Training and preparing of museum specialists was of great importance for L. A. Barsegyan. His work at the Armenian State Pedagogical University after Khachatur Abovian and, in particular, his assistance in creating of the university history museum is of particular importance.

Լավրենտի Աշոտի Բարսեղյան

ՀՊՄՀ-ի պատմության թանգարանում

ՀՊՄՀ թանգարանագիտության բաժնի մի խումբ շրջանավարտների հետ

ԼՈՒՍԻՆԵ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ
«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԱՍՊԱՐԵԶՈՒՄ

Անվանի հասարակական գործիչ, պատմաբան, հուշարձանագետ Լ. Բարսեղյանը մեծ ներդրում է ունեցել հայ ժողովրդի մշակութային ժառանգության պահպանման և զարգացման բնագավառում: Նրա շնորհիվ հիմնադրվել են թանգարաններ [Հայաստանի ազգագրության պետական թանգարանի հիմնադիր-տնօրեն (1978-1986 թթ.), ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի Հայոց ցեղասպանության թանգարան-ինստիտուտի հիմանդիր-տնօրեն (1995-2006 թթ.)],[1] ստեղծվել են գիտական ցուցադրություններ [«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանի I գիտական ցուցադրությունը (1968-1982 թթ.)], վերականգնվել են պետական նշանակության մի շարք կարևոր հուշարձաններ: Բարձր գնահատելով մեծ գործչի դերը պատմամշակութային արժեքների, ճարտարապետական կոթողների պահպանման գործում, անդրադարձել ենք նրա գործունեությանը հուշարձանների վերականգնման ասպարեզում:

1967 թ. Լ. Բարսեղյանը նշանակվում է հանրապետության շինարարության պետական կոմիտեի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության (այսուհետ՝ Վարչություն) պետի տեղակալ:[2] Արդեն 1968 թ. նրա օժանդակությամբ իրականացվում են Էրեբունի ամրոցի և Գնդեվանքի վերականգնման աշխատանքները: Իր եռանդուն գործունեության շնորհիվ՝ 1969 թ. Լ. Բարսեղյանը նշանակվում է ՀՍՍՀ շինարարության պետական կոմիտեի հուշարձանների պահպանության և վերականգնման հատուկ գիտաարտադրական արվեստանոցի (այսուհետ՝ Արվեստանոց) տնօրեն: Նրա ղեկավարման տարիներին (1969-1972 թթ.) հուշարձանների վերականգնման և պահպանության գործը մեծ վերելք ապրեց: Այդ մասին է վկայում Վարչության պետի տեղակալ Ս. Տ. Սաղումյանի՝ Հայկական ՍՍՀ Պետշինի նախագահ Գ. Գ. Աղաբաբյանին ուղղված գրությունը (1969 թ.), որի մեջ նշված է. «Պետք է խոստովանել, որ Արվեստանոցի

[1] **Լավրենտի Բարսեղյան** . կենսագրական տեղեկատվություն, էջ 9, 12:
[2] Նույնը, էջ 2:

գործունեությունը միանգամայն բարձր հիմքերի վրա դրվեց, երբ նրա ղեկավարությունը հանձնվեց ընկ. Լ. Բարսեղյանին: Եռանդուն դիրեկտորի նախաձեռնությամբ ընդլայնվել են Արվեստանոցի գործունեության շրջանակները և, չնայած այն բանին, որ հուշարձանների վերանորոգման նպատակով հատկացվող գումարներն աճել են մի քանի անգամ, սակայն պլանները պարբերաբար կատարվում և գերակատարվում են»:[3]

1968-1972 թթ. Լ. Բարսեղյանի անմիջական ղեկավարությամբ վերականգնվում են Էրեբունի ամրոցը, Գառնիի տաճարը և Հ. Թումանյանի տուն-թանգարանը Լոռու մարզի Դսեղ գյուղում:[4]

1969 թ. նշանավորվում է Արվեստանոցի կողմից իրականացված հուշարձանների վերականգնման լայնածավալ աշխատանքներով, որոնք կատարվում էին մեծ վարպետությամբ՝ պահպանելով հուշարձանների սկզբնական ճարտարապետական ձևերն ու հորինվածքների ինքնատիպությունը: Հունվար ամսին Արվեստանոցը սկսում է Գառնիի հեթանոսական տաճարի վերականգնման աշխատանքները՝ ականավոր ճարտարապետ Ա. Սահինյանի կողմից ստեղծված նոր նախագծի հիման վրա: Կազմավորվում է Գառնիի շինարարական հատուկ տեղամաս, որի ղեկավարությունը հանձնվում է Ա. Սահինյանին, ով և իրականացնում էր վերականգնումը: Տեղամասի ընթացիկ մյուս աշխատանքների գծով նրա օգնականներ էին ճարտարապետներ՝ Ռ. Սարգսյանը (1969 թ.), Ա. Հարությունյանը (1970 թ.), Հ. Գասպարյանը (1971 թ.), Վ. Խաչատրյանը (1972 թ.): Տաճարի վերականգնումը բավականին բարդ և աշխատատար գործընթաց էր: Աշխատանքները սկսվում են աստիճաններից. դրանք վերաշարվում են, իսկ բացակայող քարերը փոխարինվում են Փարաքարի որձաքարով: Պատվանդանի հարավային ճակատի խարիսխների քայքայված հատվածները նորացվում են նույն ձևանմուշով մշակված նոր քարերով: Որձաքարից պատրաստվում են նաև խարիսխներ: Ամբողջապես իր սկզբնական քարերով վերականգնվում է պատերի արտաքին պարագծով արված քանդակազարդ գոտին: Տաճարի բեկորները միմյանց միացվում են երկաթե գամերով և ամրացվում կապարով: Նույնությամբ տեղադրվում

[3] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 826, էջ 101:
[4] **Լավրենտի Բարսեղյան**. կենսագրական տեղեկատվություն, էջ 2:

են սյունասրահի առաստաղի քանդակազարդ սալերը:[5] Տաճարի վերականգնման աշխատանքները շարունակվում են մինչև 1973 թ:[6] Արդյունքում վերականգնվում է տաճարի սկզբնական հատակագծային և տարածական-ծավալային կառուցվածքը: Արվեստանոցի կողմից շարունակվում էին հանրապետության տարբեր վայրերում իրականացվող վերականգնման աշխատանքները: Այդ նպատակով կազմվում էին հատուկ շարժական արվեստանոցներ, որոնք միաժամանակ համապատասխան աշխատանքներ էին կատարում մի քանի հուշարձաններում: Հիշարժան են հատկապես 1969 թ. ապրիլից մինչև սեպտեմբեր ընկած ժամանակահատվածում, հայ մեծ գրող Հ. Թումանյանի 100-ամյա հոբելյանի կապակցությամբ կազմակերպված միջոցառումների շրջանակում, Լոռու մարզի Դսեղ գյուղում իրականացված վերականգնման աշխատանքները: Այս միջոցառումների ընթացքում վերակառուցվում են գյուղի կենտրոնում գտնվող բազիլիկ եկեղեցու ծածկն ու պատերը, սալահատակվում է հատակը,[7] վերականգնվում է Հ. Թումանյանի տուն-թանգարանը:

Հսկայական աշխատանքներ են իրականացվում նաև Էրեբունի ամրոցում: Նախագծերի հեղինակն ու աշխատանքների ընդհանուր ղեկավարն էր ճարտարապետ Կ. Հովհաննիսյանը, շինարարության ղեկավարը՝ Լ. Բարսեղյանը: Այստեղ, հուշարձանի տարբեր հատվածների ինքնատիպ հորինվածքների պահպանման անհրաժեշտությունից ելնելով, իրականացվում են ինչպես կոնսերվացման, այնպես էլ առանձին մասերի ճարտարապետական ձևերի վերականգնման աշխատանքներ: Ամրոցի սկզբնական տեսքը պահպանելու նպատակով՝ վերականգնումը կատարվում է համապատասխան շինանյութով և կառույցների կոնստրուկտիվ միջոցներով: Այս եղանակով ամրոցի կառույցներից վերականգնվում են շքամուտքը, Խալդիի տաճարը՝ մասնակիորեն, պերիստիլ բակը, փոքր դահլիճն ու արտաքին պարիսպների առանձին հատվածներ: Համաձայն տեղում պահպանված մնացորդների՝ կոպիտ մշակված տուֆ քարով վերաշարվում են շքամուտքի մոտ գտնվող աստիճաններն ու պատերը: Վերականգնվում է նաև միջնաբերդի դահլիճների փայտյա հեծաններից բաղկացած ծածկերի կոնստրուկտիվ

[5] **Սահինյան Ա. Ա.,** *Գառնիի անտիկ կառույցների ճարտարապետությունը*, Երևան, 1983, էջ 184-197:
[6] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 967, էջ 6:
[7] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 863, էջ 5:

համակարգը: Մասնակի վերականգնումներ են տեղի ունենում նաև ամրոցի մյուս կառույցներում: Վերականգնման աշխատանքները շարունակվում են նաև հետագա տարիներին և ավարտվում 1974 թ:[8]

Լ. Բարսեղյանին մեծապես մտահոգում էր Ամաղուի Նորավանքի վերականգնման հարցը: Ուստի, 1969 թ. հոկտեմբերի 23-ին, Հայկական ՍՍՀ Պետշինի նախագահ Գ. Աղաբաբյանին ներկայացնում է առաջարկ, որի մեջ գրված է. «Նորավանքը եղել է միջնադարյան Հայաստանի, մասնավորապես Սյունիքի մշակութային և հոգևոր խոշոր կենտրոններից մեկը: Ընդհանուր կոմպլեքսի մեջ մտնող հուշարձանները իրենց արվեստով, ճարտարապետությամբ և կառուցողական ձևերով Հայաստանի նշանավոր կոթողների շարքին են դասվում: Չնայած այս հանգամանքին, հուշարձանները գտնվում են խիստ ավերակ վիճակում և փլուզման վտանգի տակ են: Հաշվի առնելով հուշարձանի խիստ կարևորությունը հայ ազգային ճարտարապետության ուսումնասիրության ուղղությամբ և հուշարձանի նկատմամբ եղած մեծ հետաքրքրությունը լայն հասարակության կողմից, հուշարձանների վերականգնման հատուկ Գիտաարտադրական արվեստանոցը առաջարկում է սկսել Նորավանքի կոմպլեքսի վերականգնման և բարեկարգման աշխատանքները»:[9] Առաջարկը քննարկվում է Վարչության կողմից և որոշվում է Նորավանքի վերականգնման աշխատանքներն ընդգրկել առաջիկա տարիների աշխատանքային պլանում:

Հաջորդ հուշարձանը, որն անհապաղ վերականգնման կարիք էր զգում՝ Գնդեվանքն էր: Վերջինիս վերականգնման նախագծի հեղինակն էր ճարտարապետ Ա. Միրիջանյանը, սակայն հետագայում այն մասնակիորեն վերամշակվում է ճարտարապետներ՝ Ա. Հարությունյանի և Յու. Թամանյանի կողմից: Այստեղ վերաշարվում են հուշարձանի վնասված պատերը և իրականացվում է նոր քարերով շարվածք: Պատերի որմածքի ամբողջական ամրացումից հետո, վերականգնվում են ծածկերը, քանի որ դրանց առանձին հատվածները գտնվում էին կախված վիճակում՝ առանց հենապատերի: Այս ուղղությամբ հիմնական աշխատանքներ են տարվում հատկապես գավթում, որտեղ գրեթե լիովին ավերված էր ժամանակին երկու

---

[8] **Հովհաննիսյան Կ.,** *Ճարտարապետական հուշարձանների վերանորոգումը Սովետական Հայաստանում*, Երևան, 1978, էջ 85-86:

[9] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 826, էջ 80:

կամարների վրա նստած՝ սլաքաձև կտրվածքով թաղը: Ամբողջապես վերաշարվում են եկեղեցու ծածկերն ու խիստ քայքայված գմբեթը: Հակասեյսմիկ դիմադրությունն ապահովելու նպատակով, վերաշարի ժամանակ, թմբուկի ստորին և վերին հատվածներում տեղադրվում են երկաթբետոնե գոտիներ: Այնուհետև վերանորոգվում են եկեղեցու ծածկերը՝ հուշարձանի վրա պահպանված կիսակլոր ելունավոր ծածկասալերի օրինակով: Այս բոլոր աշխատանքներն ավարտվում են 1970 թ.: Արդյունքում հուշարձանն ամբողջությամբ վերականգնվում է:[10]

1969 թ. նոյեմբերից-դեկտեմբեր ընկած ժամանակահատվածում Վարչության ճարտարապետ Շ. Մակյանի կողմից վերականգնման են ենթարկվում Գնդեվանքի կամուրջն ու Վայոց Ձորի Արենի գյուղի ս. Աստվածածին եկեղեցին:[11]

Նույն թվականին վերականգնման է ենթարկվում նաև Աշտարակի շրջանի Եղվարդ գյուղի ս. Աստվածածին եկեղեցին՝ ճարտարապետ Ս. Մաթևոսյանի նախագծի հիման վրա: Եկեղեցու վեղարը, կամարները, սյուներն ու խարիսխները գտնվում էին խարխուլ վիճակում: Երկրաշարժերի հետևանքով հուշարձանի գմբեթային համակարգում տեղի էր ունեցել քարերի զգալի տեղաշարժ, ուստի կատարվում է գմբեթի վերաշար: Սյուները նույնպես ամբողջությամբ վերաշարվում են: Այնուհետև երկաթ-բետոնի միջոցով վերականգնվում է եկեղեցու վեղարը: Նշված բոլոր աշխատանքները կատարելուց հետո վերանորոգվում են հուշարձանի լանջերը: Վերանորոգման աշխատանքներ են իրականացվում նաև հուշարձանի ներքին տարածքում. երկրորդ հարկում վերաշարվում է քայքայված բեմահարթակը:[12] Աշխատանքներն ավարտվում են 1971թ.:[13]

1970 թ. Արվեստանոցը վերանորոգման աշխատանքներ է իրականացնում Սյունիքի մարզի Տաթևի վանքում (վերականգնող-ճարտարապետ Շ. Մակյան):[14] Նույն տարում ճարտարապետ Ա. Հարությունյանի կողմից վերականգնման է ենթարկվում նաև Երևանի Կարմիր կամրջի (Խոջա-Փլավի) աջ ափի հյուսիսային և հարավային խելը, ինչպես նաև կառույցի երթևեկային մասը, որն իր ամբողջ լայնությամբ տեղ-տեղ քայքայվել էր: Վերականգնման համար նոր քարեր ձեռք բերելու

[10] **Հովհաննիսյան Կ.,** նշվ. աշխ., էջ 134-135:
[11] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 864, էջ 7:
[12] **Հովհաննիսյան Կ.**, նշվ. աշխ., էջ 112-114:
[13] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 967, էջ 7:
[14] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 894, էջ 2:

անհրաժեշտություն չի առաջանում, քանի որ կառույցի սկզբնական բոլոր քարերը պահպանվել էին: Վերականգնվում է նաև Սիսիանի շրջանի Աղուդի գյուղում գտնվող Աղուդիի մահարձանը (վերականգնող-ճարտարապետ Ա. Ստեփանյան):[15]

1971 թ. Վարչության նախաձեռնությամբ կազմակերպվում է հուշարձանների վերանորոգման շարժական արվեստանոց, որի գլխավորությամբ համապատասխան աշխատանքներ են կատարվում Ազիզբեկովի, Եղեգնաձորի շրջաններում և Արթիկ քաղաքում: Վերանորոգվում է Արթիկի գլխավոր եկեղեցին:[16]

1972 թ. հուշարձանների վերականգնման և կոնսերվացիայի հիշարժան աշխատանքներ են կատարվում նաև Մաքրավանքում, Թալինի Մեծ եկեղեցում, Ամբերդում, Լոռի բերդում, Կամոյի շրջանի Նորատուսի ս. Աստվածածին եկեղեցում, Մարտունու շրջանի Զորագյուղի հուշարձանախմբում և Կոշում:[17]

Այսպիսով, ուսումնասիրելով Արվեստանոցի 1969-1972 թթ. գործունեությունը, կարող ենք փաստել, որ Լ. Բարսեղյանի կազմակերպչական մեծ ձիրքի և անմիջական աջակցության շնորհիվ հուշարձանների վերականգնման ասպարեզում կատարվել են հսկայական աշխատանքներ: Մեծ գործչի ակտիվ նախաձեռնության և ճարտարապետների ջանադիր աշխատանքի արդյունքում, հանրապետության տարբեր հատվածներում վերականգնվել և դարերի խորքից մեզ են հասել ազգային ճարտարապետության եզակի հուշարձաններ:

---

[15] **Հովհաննիսյան Կ.**, նշվ., աշխ., էջ 139-140 և 152:
[16] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 921, էջ 5:
[17] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 1, գ. 948, էջ 13:

ՍԵՐԺԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆ
ՀՀ մշակույթի նախարարություն

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԻ ԴՐՎԱԾՔԸ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1980-ԱԿԱՆ ԹԹ. ՎԵՐՋԵՐԻՆ

Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գործը խորհրդային տարիներին ունեցել է զարգացման մի քանի փուլեր: Դրանցից առ այսօր, ինչպես ցույց տվեցին անցած տարիները, հիմնարար են շարունակում մնալ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1988 թ. հունիսի 14-ի «Հանրապետությունում պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության, վերականգնման և օգտագործման գործի հետագա բարելավման միջոցառումների մասին» N 380 որոշումով պայմանավորված գործընթացները, որոնք ընդգրկեցին այս ոլորտի գրեթ բոլոր բնագավառները:

Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության այդ տարիների (1988-1991 թթ.) ղեկավար՝ վարչության պետ Լավրենտի Աշոտի Բարսեղյանի նախաձեռնությամբ հուշարձանների պահպանության և օգտագործման ոլորտում, այս որոշումով պայմանավորված, իրականացվեցին վերափոխումներ. նպատակը՝ զարգացնել համակարգի մասնագիտացված կազմակերպությունների ցանցը, հզորացնել դրանց կադրային և նյութատեխնիկական բազաները, սահուն, առանց «ալեկոծումների» և ընդհատումների իրականացնել համակարգում մասնագիտական սերնդափոխությունը, ընդլայնել միջազգային համագործակցության աշխարհագրությունը, բնագավառում ներդնել և տարածել աշխատանքների կազմակերպման, իրականացման առաջավոր ձևերն ու մեթոդները, նպաստել, աջակցել երիտասարդ մասնագետների մասնագիտական հմտությունների կատարելագործմանը և այլն:

Շրջադարձային համարվող այս որոշումով գլխավոր վարչության համակարգում առաջնահերթ իրականացվեցին կառուցվածքային վերափոխումները, որոնց նախորդել էին համակարգում գործող կառույցների կանոնադրական գործառույթների սահմանման, դրանցից յուրաքանչյուրի խնդիրների ու

նպատակների հստակեցման, ճշգրտման աշխատանքները: Արձանագրված արդյունքների, համակարգում գոյություն ունեցող, ինչպես նաև այլ կառույցների ենթակայությունից գլխավոր վարչությանը հանձնված կառուցվածքային ստորաբաժանումների, պետական հիմնարկների հենքի վրա ստեղծվեցին.

- «Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց-թանգարանների միացյալ դիրեկցիա»,
- «Պատմության և կուլտուրային հուշարձանների պահպանության, ուսումնասիրման և օգտագործման գիտաարտադրական արվեստանոց»,
- «Թանգարանային ցուցադրությունների և սարքավորումների ձևավորման ու պատրաստման գիտաարտադրական արվեստանոց» պետական հիմնարկները:

«Հուշարձանների նախագծային գրասենյակ»-ը վերակազմակերպվեց «Հայռեստավրացիա» նախագծային ինստիտուտ» պետական հիմնարկի: Պատմության և մշակույթի հուշարձանների վերականգնման բնագավառում մասնագիտացված այս նախագծային ինստիտուտում, որպես առանձին ստորաբաժանումներ, ստեղծվեցին «Արագածոտնի», «Այրարատի», «Գեղարքունիքի», «Զանգեզուրի», «Լոռու», «Շիրակի», «Վայոց ձորի», «Տավուշի» նախագծային արվեստանոցները:

Հանրապետության վարչական տարբեր շրջաններում այդ տարիներին ստեղծվեցին նաև հուշարձանների վերականմգնման տնտհաշվարկային ինքնուրույն տեղամասեր («Արագածոտն», «Այրարատ», «Արևիք», «Գեղարքունիք», «Սիսական», «Տավուշ» և այլն), իսկ գոյություն ունեցող «Վերականգնման հանրապետական հատուկ գիտաարտադրական արվեստանոց»-ը վերանվանվեց «Պատմության և կուլտուրայի հուշարձանների վերականգնման Երևանի հատուկ գիտաարտադրա-կան արվեստանոց»:

Անդրադառնալով համակարգում 1980-ական թթ. վերջերին կատարված կառուցվածքային վերափոխումներին, հիշատակման է արժանի թանգարանային ցուցադրությունների կազմակերպման գործի նկատմամբ ցուցաբերած մոտեցումը: Այն ուշագրավ է նրանով, որ այդ վերափոխումների արդյունքում համակարգում ստեղծվեց հանրապետությունում իր տեսակի մեջ առաջին, պետական հոգածության

ներքո գտնվող մասնագիտացված մի կառույց, որը պետք է զբաղվեր հուշարձան - թանգարաններում թանգարանային մշտական ցուցադրությունների, ժամանակավոր ցուցադրությունների ձևավորման նախագծերի մշակման, ցուցադրությունների ու ցուցահանդեսների կազմակերպման համար անհրաժեշտ ցուցադրական կահույքի, սարքավորումների, հարմարանքների և այլնի պատրաստման, պատմա-ճարտարապետական, գեղարվեստի, քանդակազարդման առումով բացառիկ համարվող խաչքարերի ապահովագրական կրկնօրինակների ստեղծման, գեղազարդման բացառիկ նմուշների բնօրինակ չափագրումների կատարման աշխատանքներով: Գիտաարտադրական այդ արվեստանոցի կողմից կարճ ժամանակահատվածում պատրաստվեցին Հառիճավանքում՝ Շիրակի հնագույն կենցաղին ու մշակույթին, Նորավանքում՝ Մոմիկ ճարտարապետի գործունեությանը նվիրված մշտական ցուցադրությունների ձևավորման նախագծերը, կրկնօրինակ-վեցին մեկ տասնյակից ավելի բացառիկ համարվող խաչքարեր: Փորձառու քարգործ վարպետների կողմից կերտվեցին Զվարթնոց տաճարի մասնակի վերականգնման համար անհրաժեշտ բացակայող սյուներն ու խոյակները:

Կառուցվածքային վերափոխումներից զատ, ելնելով նորաստեղծ հիմնարկների նպատակներից ու խնդիրներից, հստակեցվեցին նաև համակարգում գործող պետական հիմնարկներից յուրաքանչյուրի գործունեության ոլորտները, ճշգրտվեցին յուրաքանչյուրի գործառույթները: Գործընթաց, որի արդյունքում գլխավոր վարչության կենտրոնական ապարատին, համակարգում գործող այլ պետական հիմնարկներին վերապահված որոշ գործառույթներ փոխանցվեցին նորաստեղծ պետական հիմնարկներին, որի նպատակը փոխանցվող գործառույթներին առնչվող աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպումն էր: Մասնավորապես հուշարձանների պահպանության գլխավոր վարչությանը, տարբեր տարիներին «Էրեբունի», «Զվարթնոց», «Մեծամոր» թանգարաններին վերապահված հանրապետության անշարժ հուշարձանների պահպանության գործառույթն ամբողջությամբ փոխանցվեց նորաստեղծ «Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց - թանգարանների միացյալ դիրեկցիա» պետական հիմնարկին: Բարեփոխումների արդյունքում փոխվեց հուշարձանների պահպանության գործի կազմակերպման և իրականացման ողջ ընթացքը: Տեղերում

ստեղծվեցին նոր կառուցվածքային միավորներ, որոնցում ներգրավված աշխատակիցներին՝ հուշարձանների պահապաններին, մեկ կամ երկու հուշարձանի փոխարեն ամրագրվեցին մի քանի բնակավայրերից կազմված «հուշարձանների պահպանական տարածքներ»՝ պահաբաժիններ: Այդ պահաբաժիններում եղած պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանությունը պահապանները սկսեցին և մինչև այժմ էլ շարունակում են իրականացնել շրջայցերի միջոցով: Ստեղծվեց աշխատանքի կազմակերպման մի նոր համակարգ, որն ամբողջությամբ տնօրինում և իրականացնում էր Խորհրդային Հայաստանի տարածքում պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գործը, համակարգում և վերահսկում դրանցում կատարվող գործընթացների համապատասխանությունը գործող օրենքներին և սահմանված կարգերին:

Հուշարձանների պահպանության գործառույթից զատ, նորաստեղծ պետական այս հիմնարկին փոխանցվեց նաև հուշարձաններին վերապահված ֆոնդային հավաքածու ստեղծելու գործառույթը: Գլխավոր վարչության և նրա համակարգի պետական հիմնարկներում՝ նախագծային ինստիտուտում, թանգարաններում, համահավաքի բաժնում առկա փաստավավերագրական նյութերը, որոնք վերաբերում էին հուշարձանների պահպանության, վերականգնման, գիտական ուսումնասիրության խնդիրներին, հանձնվեցին «Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց - թանգարանների միացյալ դիրեկցիա» պետական հիմնարկին: Գոյություն ունեցող փաստավավեագրական նյութերը, որոնք վերը նշված կառույցներում շրջանառվում էին «արխիվ» եզրույթով, նորաստեղծ պետական հիմնարկում վերաարժևորվեցին որպես ֆոնդային հավաքածուներ և այժմ, այդ նախաձեռնության շնորհիվ, հանրապետությունում առկա է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների վերականգնմանը, նորոգմանը, ամրակայմանը, փաստագրմանը վերաբերող մասնագիտացված ամենահարուստ ֆոնդային հավաքածուն: Հավաքածու, որը հնարավորություն է տալիս պատկերացում կազմելու հանրապետությունում խորհրդային տարիներին իրականացված վերականգնման աշխատանքների ծավալների, զարգացման ընթաց-քի, այդ աշխատանքներում կիրառվող մեթոդների և այլնի վերաբերյալ ու, ըստ տարի-ների, ներկայացնելու Խորհրդային Հայաստանում հուշարձանների նախագծման և

վերականգնման գործի պատմությունը: Այս նախաձեռնության արդյունքն էր, որ «կրակի ճիրաններից» փրկվեցին տասնյակ հազարավոր նախագծեր, չափագրություններ, տեղահանույթներ և այլ բնույթի փաստավավերագրական նյութեր, որոնք այժմ, որպես ելակետային նյութեր, բնագավառով հետաքրքրված մասնագետներն օգտագործում են հուշարձանների վերականգնման, պատմամշակութային հիմնավորման նախագծերի պատրաստման, առանձին թեմատիկ ուսումնասիրությունների կատարման ժամանակ:

Հարկ ենք համարում նշել, որ հուշարձաններին վերաբերող ֆոնդային հավաքածուների կենտրոնացումն ու վերադասավորումը համակարգում չէր կատարվում՝ «որոշված է, պետք է կատարել» սկզբունքով: Գլխավոր վարչության և նրա համակարգի կազմակերպությունների արխիվներում, արգելոց-թանգարաններում եղած հուշարձաններին վերաբերող փաստավավերագրական նյութերի, հուշարձանների տարածքներից պեղումներով հայտնաբերված գտածոների տեղաշարժերը, փոխանակումները կազմակերպությունների միջև կատարվեցին յուրաքանչյուր կառույցի կանոնադրությամբ ամրագրված խնդիրներից ու նպատակներից ելնելով: Այն փաստավավերագրական նյութերը, հնագիտական հավաքածուները, որոնք թեմատիկ առումով վերաբերում կամ առնչվում էին տվյալ կազմակերպություններին, մնացին տեղում, տեղափոխվեցին այն նյութերը, որոնք ո'չ թեմատիկ և ո'չ էլ ժամանակագրական չափորոշիչներով չէին առնչվում տվյալ կազմակերպության նպատակներին ու խնդիրներին: Այսինքն, գլխավոր վարչության համակարգում նոր ֆոնդային հավաքածու ձևավորվեց, իսկ գոյություն ունեցողները «խմբագրվեցին» թեմատիկ - ժամանակագրական չափորոշիչներով:

Գոյություն ունեցող ֆոնդային հավաքածուներից զատ, ինչպես նշեցինք վերը, հիմք ընդունելով թեմատիկ - ժամանակագրական չափորոշիչները, գլխավոր վարչության համակարգում ստեղծվեց ֆոնդային մասնագիտացված նոր հավաքածու, որը, 2017 թ. առ 1 հուլիսի դրությամբ, ունի 331487 միավոր թանգարանային առարկա: Այդ ընդհանուր թվից պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններին առնչվող միայն փաստավավերագրական նյութերը կազմում են 208479 միավոր, որից չափագրություն - 43198 միավոր, նախագիծ/նախահաշիվ - 23480 միավոր, սևանկար - 62976 միավոր, լուսանկար - 74498 միավոր, տեղագրական հանույթ – 4327 միավոր:

Մասնագիտական առումով կարևորելով նման ֆոնդային հավաքածուի ստեղծումը, անհրաժեշտ ենք համարում նշել, որ այս հավաքածուն հանրապետության թանգարանային հավաքածուների մեջ քանակական առումով խոշորագույներից է և դրանում հաշվառված, մշտական պահպանության վերցված փաստաթղթերից շատերն այսօր արդեն ձեռք են բերել սկզբնաղբյուրի կարգավիճակ, քանի որ տասնամյակներ առաջ կատարված փաստագրումներում այդ հուշարձաններից շատերն այսօր պահպանվածության առումով չունեն այն «ճարտարապետական կերպարը», նկարագիրը, որը փաստագրված է այդ նախագծերի ելակետային նյութերում, չափագրություններում և այլ կարգի վավերագրումներում:

Վերը ներկայացված վերափոխումներին զուգահեռ, գլխավոր վարչության ղեկավարությունն առանձնակի ուշադրություն էր դարձնում միջազգային համագործակցությամբ աշխատանքների իրականացման ավանդույթի ձևավորմանը: Ձգտում էր որոշակի աշխատանքներ կատարել եվրոպացի մասնագետների մասնակցությամբ, ովքեր առավել հմտացած ու փորձառու էին հուշարձանների վերականգնման այս կամ այն բնագավառում: Մասնավորապես. բուլղարացի մասնագետների մասնակցությամբ իրականացվեցին 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժից հետո պահպանության առումով վտանգված Մինաս Ավետիսյանի «Հանդիպում» որմնանկարի ամրակայման և դրա՝ ամբողջ ծավալով նոր վայր տեղափոխման աշխատանքները: Որմնանկարը Լենինականի (ներկայում՝ Գյումրի) «Անալիտիկ սարքերի» ավերված գործարանի տարածքից տեղափոխվեց և տեղադրվեց քաղաքի Վարդան Աճեմյանի անվան պետական դրամատիկական թատրոնի ճեմասրահում: Նման աշխատանք հանրապետությունում կատարվում էր առաջին անգամ: Այս նախաձեռնությամբ, ինչպես հետագայում ցույց կտա ժամանակը, հիմք դրվեցին 1988 թ. Սպիտակի երկրաշարժի հետևանքով քաղաքի փլուզված, վթարային կամ կիսալքված արտադրական նշանակության շինություններում գտնվող Մինաս Ավետիսյանի, Ռաֆայել Աթոյանի, Հակոբ Հակոբյանի հեղինակած շուրջ մեկ տասնյակ որմնանկարների՝ ոչնչացումից փրկման, հանրության համար մատչելի մշակութային, հասարակական նշանակության վայրերում դրանց ներկայացման՝ ցուցադրման աշխատանքներին:

Գլխավոր վարչության այդ տարիների ղեկավարությունը համագործակցության եզրեր էր փնտրում նաև եվրոպական պետությունների անշարժ հուշարձանների, մասնավորապես միջնադարյան բերդերի, ամրոցների, դղյակների վերականգնման բնագավառում մասնագիտացած կազմակերպություն-ների հետ: Փոխադարձ այցելությունների արդունքում Գերմանիայի Ֆեդերատիվ Հանրապետության Հեսսենի երկրամասի մասնագետների հետ ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ իրենց մասնակցությամբ Ամբերդ ամրոցի ուսումնասիրման, ամրակայման, մասնակի վերականգնման աշխատանքների իրականացման հարցում: Գլխավոր վարչության այդ տարիների ղեկավարությունն ամեն ինչ անում էր վերականգնման ծավալներով աննախադեպ համարվող այս նախաձեռնության մեկնարկի համար: Առաջնահերթ, բավականին կարճ ժամանակահատվածում, «Հայռեստավրացիա» նախագծային ինստիտուտ»-ում պատրաստվեց ամրոցի վերականգնման աշխատանքների կազմակերպման նախագիծը: Ցավոք, այս նախաձեռնությունն այս նախագծով էլ ավարտվեց, որի պատճառը՝ 1988 թ. Սպիտակի ավերիչ երկրաշարժի հետևանքով հանրապետությու-նում ստեղծված սոցիալ-տնտեսական իրավիճակն էր:

Հիմնական գծերով ներկայացնելով գլխավոր վարչության համակարգում 1980-ական թթ. վերջերին կատարված վերափոխումները, հարկ ենք համարում նշել, որ ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի վերը հիշատակված որոշումով նախատեսված որոշ գործընթացներ չիրականացվեցին հանրապետությունում ստեղծված սոցիալ - տնտեսական, քաղաքական իրավիճակից ելնելով: Այնուամենայնիվ, մեկուկես տարիների ընթացքում կատարված վերափոխումներն իրենց ծավալով և ուղղվածությամբ, ինչպես ցույց տվեց ժամանակը, եղան արմատական: Ձեռնարկված այդ բարեփոխումների հիմքում նախաձեռնողը՝ Լավրենտի Աշոտի Բարսեղյանը, դրել էր վարչակառավարական, գիտալուսավորչական, հուշարձանների ուսումնասիրման և վերականգնման աշխատանքների բնագավառում տասնամյակների ընթացքում կուտակած իր հարուստ փորձը, մասնագիտական խորը գիտելիքները, գիտական պրպտումներ կատարելու անհանգիստ խառնվածքը, հայկական մշակութային դարավոր ժառանգությունը հանրահռչակելու անսահման ձգտումը:

SERZHIK ARAKELYAN
Ministry of Culture of the Republic of Armenia

THE STRUCTURE OF THE PROTECTION FOR IMMOVABLE MONUMENTS OF HISTORY AND CULTURE AT THE END OF 1980S IN THE SOVIET ARMENIA

Lavrenti Ashot Barseghyan, the Director of the General Department for the protection and use of the monument of history and culture at the Council of Minister of the ArmSSR (1988-1991), initiated fundamental reforms in the sphere of protection and use of immovable monument of history and culture. Those reforms were conditioned by the Decision of the Council of Ministers as of 14 June, 1988 N 380 «On the measures for further improvement of the protection, restoration and use of the monuments in the Republic». The aim was to strengthen the network of professional institutions, empower human resource and logistical facilities, implement the change of generations without any shakings and interruption, enlarge the geography of international cooperation, introduce leading methods of the work organization, assist the enhancement of skills of young professionals, etc.

The accumulated aadministrative, scientific educational experience, deep professional knowledge, scientific research desire of decades, and the aspiration to promote millennia-old heritage in the sphere of study and restoration of monuments were put by Lavrenti Ashot Barseghyan at the basis for those reforms.

ԴԱՎԻԹ ՊՈՂՈՍՅԱՆ
«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ,
ՀՊՄՀ թանգարանագիտության ամբիոն

ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ՑԱՆՑԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1980-1990-ԱԿԱՆ ԹԹ.

Պատմամշակութային արգելոցների և արգելոց-թանգարանների միասնական կառավարման համակարգի ստեղծումը մեզանում պատմամշակութային ժառանգության պահպանության և կառավարման կարևոր ձեռնարկումներից էր: 1970–ական թթ. սկսվեց նախկինում տարբեր կառույցների ենթակայությամբ գործող հուշարձանների հիմքի վրա ստեղծված թանգարանների և դրանց հիման վրա գործող կուլտուր-պատմական արգելոցների կենտրոնացված կառավարման համակարգի ձևավորումը Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչության համակարգում: 1978 թ. կառավարության որոշումով վերջինիս ենթակայությանը հանձնվեցին «Էրեբունի» թանգարանն իր մասնաճյուղերով, «Զվարթնոց» արգելոցը[1]: ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի 1979 թ. սեպտեմբերի 20-ի որոշմամբ վարչությանը հանձնվեցին նաև Հայաստանի պատմության պետական թանգարանի Մեծամորի և Հառիճի պատմահնագիտական ու ճարտարապետական թանգարան-մասնաճյուղերը[2]: Սույն որոշման հավելված 3-ում Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչության ենթակա բյուջետային կազմակերպությունների ցանկում նշված էին.

1. «Էրեբունի» թանգարանը իր մասնաճյուղերով,
2. «Զվարթնոց» արգելանոցն իր Գառնիի մասնաճյուղով,
3. Մեծամորի պատմահնագիտական ու ճարտարապետական թանգարան-մասնաճյուղը,

[1] ՀԱԱ, ֆ. 1063, ց.2, գ. 46, թ. 3:

[2] Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1979 թվականի 20-ը սեպտեմբերի նո. 564 որոշում Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանումն ու վերականգնումը բարելավելու միջոցառումների մասին, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշումներ և կարգադրություններ, Եր., 1979, էջ 92:

4. Հառիճի պատմահնագիտական և ճարտարապետական թանգարան-մասնաճյուղը»[3]:

1980թ. դրությամբ վարչության ենթակայությամբ արդեն իսկ գործում էին 16 թանգարաններ, որոնք առավել ընկալելի էին «հուշարձան թանգարաններ» եզրով[4]: Սակայն պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լավրենտի Աշոտի Բարսեղյանի (1937-2014 թթ.) նախաձեռնությամբ տեղի ունեցավ արգելոց-թանգարանների միասնական կառավարման նոր համակարգի ձևավորում: Լ. Բարսեղյանը, 1988-1991 թթ. նշանակվելով Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության պետ, թանգարանային գործի իր հարուստ փորձը ներդրեց նաև հուշարձանների պահպանության ոլորտում:

Այսպես. Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1988թ. հուլիսի 14-ի «Հանրապետության պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության, վերականգնման և օգտագործման գործի հետագա բարելավման միջոցառումների մասին» որոշման 9-րդ կետում նշվում էր. «Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության, դրանց գիտական հաշվառման և նկարագրման, թանգարանային և գեղարվեստական արժեքների վերականգնման, հուշարձանների օգտագործման ու դրանց տարածքներում կազմակերպված թանգարանների աշխատանքների հետագա բարելավման նպատակով Հայկական Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության, նրա համար սահմանված աշխատողների թվաքանակի լիմիտի և պահպանման ծախսերի սահմաններում, առանց լրացուցիչ հատկացումների թույլատրել՝ … գ) գլխավոր վարչության համակարգի ինքնուրույն հաշվեկշռով գործող թանգարանների և պատմամշակութային արգելոցների բազայի վրա կազմակերպել պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց-թանգարանների միացյալ դիրեկցիա՝ ինքնուրույն հաշվեկշռով: Վերջինիս իրավահաջորդն այսօր ՀՀ մշակույթի նախարարության

[3] Հավելված №3 Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի 1979 թ. սեպտեմբերի 20-ի նո. 564 որոշման, Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առնընթեր Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման վարչության ենթակա կազմակերպությունների ցանկը, նշված տեղում, էջ 98:

[4] **Համբարձումյան Ռ.,** *Թանգարան Գառնիի ֆոնին*, ԿԼԱ, 1980, № 5, էջ 7:

համակարգում գործող «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ն է։

Նշված որոշման հավելվածի համաձայն դիրեկցիայի մասնաճյուղերը դարձան հետևյալ արգելոցները և արգելոց-թանգարանները. *Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի» թանգարան, «Կարմիր բլուր» պատմահնագիտական թանգարան («Էրեբունի» թանգարանի մասնաճյուղ), «Շենգավիթ» պատմահնագիտական թանգարան («Էրեբունի» թանգարանի մասնճյուղ)* /Երևան քաղաք/; *«Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան* /Լենինական քաղաք/; *«Վաղարշապատ» պատմամշակութային արգելոց-թանգարան, «Զվարթնոց» պատմաճարտարապետական թանգարան* /Էջմիածին քաղաք/; *«Աշտարակի» պատ-մամշակութային արգելոց-թանգարան* /Աշտարակ քաղաք/; *Դիլիջանի ժողովրդական ճարտարապետության թանգարան, «Հաղարծին» պատմաճարտարապետական արգելոց-թանգարան, «Գոշավանք» պատմաճարտարապետական արգելոց-թանգարան* /Դիլիջան քաղաք/; *«Գառնի» պատմահնագիտական արգելոց-թանգարան, «Կոտայք» պատմամշակութային արգելոց-թանգարան* /Աբովյանի շրջան/; *«Գնդեվանք» պատմամշակութային արգելոց-թանգարան* /Ազիզբեկովի շրջան/; *«Արտաշատ» պատմահնագիտական արգելոց-թանգարան* /Արարատի շրջան/; *«Հառիճ» պատմամշակութային արգելոց-թանգարան* /Արթիկի շրջան/; *«Դվին» պատմահնագիտական արգելոց-թանգարան* /Արտաշատի շրջան/; *«Տաթև» պատմա-մշակութային արգելոց-թանգարան* /Գորիսի շրջան/; *«Գլաձոր» պատմաճարտարա-պետական արգելոց-թանգարան, «Արենի» պատմամշակութային արգելոց-թանգարան* /Եղեգնաձորի շրջան/; *«Թալին» պատմամշակութային արգելոց-թանգարան* /Թալինի շրջան/; *«Օձուն» պատմամշակութային արգելոց-թանգարան, «Սանահին» պատմաճարտարապետական թանգարան, «Հաղպատ» պատմաճարտարապետական թանգարան* /Թումանյանի շրջան/; *«Մակարավանք» պատմա-մշակութային արգելոց-թանգարան* /Իջևանի շրջան/; *«Կապան» պատմամշակութային արգելոց-թանգարան* /Ղափանի շրջան/; *«Կեչառիս» պատմամշակութային արգելոց-թանգարան* /Հրազդանի շրջան/; *«Արգիշտիխինիլի» պատմահնագիտական թանգարան, «Արմավիր» պատմահնագիտական արգելոց* /Հոկտեմբերյանի շրջան/; *«Արևիք» պատմա-մշակութային արգելոց-թանգարան*

/Մեղրու շրջան/; *«Սևան» պատմամշակութային արգելոց-թանգարան* /Սևանի շրջան/; *«Որոտնավանք» պատմամշակութային արգելոց-թանգարան* /Սիսիանի շրջան/; *«Մեծամոր» պատմա-հնագիտական թանգարան* /Էջմիածնի շրջան/; *«Կողբափոր» պատմամշակութային արգելոց-թանգարան*_/Նոյեմբերյանի շրջան/[5]: Նույն որոշմամբ ստեղծվեց նաև նոր տիպի՝ բնապատմական արգելոց, որը ներառում էր Եղեգնաձորի շրջանի Արփի գյուղի տարածքում գտնվող «կարստային ծագում ունեցող երեք քարանձավները» և կոչվում էր «*Եղեգնաձորի բնապատմական արգելոց*»[6]: Որոշման ընդունումից 4 օր անց Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության հրամանով կազմավորվեց «Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց-թանգարանների միացյալ դիրեկցիան»: Հրամանի մեջ մասնավորապես նշվում էր, որ դիրեկցիան «իր կազմի մեջ մտնող բոլոր թանգարանների և արգելոցների համար հանդիսանում է գիտամեթոդական կենտրոն և կենտրոնացնում ու ղեկավարում է թանգարանների կողմից տարվող գիտա-ցուցադրական, գիտաֆոնդային, գիտալուսավորական և գիտահետազոտական աշխատանքները, կենտրոնացված կարգով կազմակերպում թանգարանային արժեքների հաշվառումը, նրանց վերականգնումը և կոնսերվացումը, պարբերաբար ուսումնասիրում է թանգարանների աշխատանքների վիճակը, միջոցառումներ է ձեռնարկում այն ավելի արդյունավետ դարձնելու համար»[7]: Սույն հրամանով «Էրեբունի» և «Զվարթնոց» թանգարանների մասնաճյուղերը (Սևան, Գառնի, Հառիճ, Գլաձոր, Սանահին, Տաթև, Մուղնի, Գնդեվանք, Հաղբատ, Կեչառիս) ևս սկսեցին անմիջապես ենթարկվել դիրեկցիային:

Ինչպես տեսնում ենք, նախկինում առկա հուշարձանների հիմքով ստեղծված թանգարանների և արգելոց-թանգարանների քանակը գրեթե եռապատկվեց՝ ընդգրկելով հանրապետության գրեթե բոլոր շրջանները: 1988 թ. շարունակում էին

---

[5] ՀԱԱ, ֆ. 113, ց. 160, գ. 349 , թ. 14-17:

[6] Նույն տեղում, թ.12:

[7] Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության հրաման ՆՈ. 289, 19. 07. 1988թ. «Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց-թանգարանների միացյալ դիրեկցիա կազմակերպելու մասին», «Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն» ՊՈԱԿ-ի անձնակազմի կառավարման բաժին, գործ № 11, ներքին օգտագործման:

գործել դրանցից 13-ը, որոնց ղեկավարները նույն թվականի սեպտեմբերին Գլխավոր վարչության նիստում ներկայացրեցին իրենց մասնաճյուղերում առկա իրավիճակը և անելիքները[8]:

Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց-թանգարանների միացյալ դիրեկցիայի 1988 թ. առաջին հաշվետվությունից տեղեկանում ենք, որ նույն թվականի վերջում այն դեռևս ուներ հետևյալ մասնաճյուղերը.

1. Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի» թանգարան,
2. «Կարմիր բլուր» պատմահնագիտական թանգարան,
3. «Շենգավիթ» պատմահնագիտական թանգարան,
4. «Կումայրի» պատմամշակութային արգելոց-թանգարան,
5. «Զվարթնոց» պատմաճարտարապետական թանգարան,
6. «Մեծամոր» պատմահնագիտական թանգարան,
7. Դիլիջանի ժողովրդական ճարտարապետության թանգարան,
8. «Հաղարծին» պատմաճարտարապետական արգելոց-թանգարան,
9. «Գոշավանք» պատմաճարտարապետական արգելոց-թանգարան,
10. «Գառնի» պատմահնագիտական արգելոց-թանգարան,
11. «Հառիճ» պատմամշակութային արգելոց-թանգարան,
12. «Տաթև» պատմամշակութային արգելոց-թանգարան,
13. «Գլաձոր» պատմաճարտարապետական արգելոց-թանգարան,
14. «Սանահին» պատմաճարտարապետական թանգարան,
15. «Հաղպատ» պատմաճարտարապետական թանգարան,
16. «Սևան» պատմամշակութային արգելոց-թանգարան,
17. «Կեչառիս» պատմամշակութային արգելոց-թանգարան:

Ենթադրվում էր հաջորդ տարիներին կազմակերպել կառավարության որոշմամբ նախատեսվող ևս 16 արգելոց-թանգարաններ:[9] Հաշվետվության սկզբում ծավալուն անդրադարձ է կատարվում նաև դիրեկցիայի կանոնադրական նպատակներին ու խնդիրներին, ինչպես նաև հետագա անելիքներին: Այսպես, նշվում է, որ. «Պատմական միջավայրի պահպանության և պատմամշակութային արգելոց-

[8] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 2. , գ. 82 , թ. 4-6:
[9] ՀԱԱ, ֆ. 1063, ց.2. , գ. 336, թ. 5-6:

թանգարանների միացյալ դիրեկցիան, Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության կողմից 1988 թ. օգոստոսի 3-ին հաստատված կանոնադրությամբ համարվելով կենտրոնացված հաստատություն, ղեկավարում է իր համակարգի մեջ մտնող թանգարանների գործունեությունը՝ պլանավորելով ինչպես նրանց գիտահետազոտական, տնտեսական, այնպես էլ ֆոնդերի պահպանության ու հաշվառման միասնական համակարգի ստեղծման ուղղությամբ տարվող աշխատանքները»:[10] Դիրեկցիայի հիմնական գիտամեթոդական աշխատանքներն ի սկզբանե սկսեցին կազմակերպվել խորհրդային թանգարանագիտության դասական հիմնական ուղղություններով՝ գիտացուցադրական, գիտալուսավորական, կուլտուր-մասսայական, գիտահետազոտական, գիտաֆոնդային, հավաքչական գործունեության տարաբաժանմամբ։ Վերջինս հիմնավորվում էր նրանով, որ կառույցը «նախ և առաջ ստեղծվել է անհրաժեշտ մեթոդական օգնություն ցույց տալու, ղեկավարելու և պլանավորելու Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության համակարգում գտնվող թանգարանների գործունեությունը, որոնք իրենց թեմատիկայով ու պրոֆիլով դասակարգվում են պատմահնագիտական, պատմաճարտարապետական և պատմամշակութային» բնույթի:[11] Դիրեկցիայի առաջին տնօրեն Սերժիկ Առաքելյանի կողմից կազված սույն հաշվետվությունը որոշակիորեն վերլուծական նյութ է տալիս ինչպես գործող արգելոց-թանգարանների պրոֆիլային ընդգրկման, այնպես էլ տարվող թանգարանային գործունեության վերաբերյալ՝ առանձնացնելով այն արգելոց-թանգարանները, որոնք մինչ դիրեկցիան մեթոդական կենտրոնների դեր էին կատարում։ Դրանք էին՝ «Մեծամոր» պատմահնագիտական, Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի», «Դիլիջան» ժողովրդական ճարտարապետության, «Զվարթնոց» պատմաճարտարապետական արգելոց-թանգարանները, որոնց գործունեությունը և վիճակը բավարար չէին ցուցադրության կազմակերպման, հավաքածուների հաշվառման, պահպանման, գիտամասսայական գործունեության և այլ տեսանկյունից։ Հաշվետվության մեջ հրատարակչական, շինարարական, վերանորոգման և կազմակերպչական

[10] Նույն տեղում։
[11] Նույն տեղում, թ. 10։

գործունեությունից բացի, թվարկվում էին նաև այն թանգարանները, որոնք պետք է ստեղծվեին: Մասնավորապես.

1. Ժողովրդական գեղարվեստական արհեստագործությունների թանգարան Անիի շրջանի Սառնաղբյուր գյուղում,

2. Սյունիքի ճարտարապետության պատմության թանգարան Գորիս քաղաքում,

3. Ժողովրդական ճարտարապետության և կենցաղի թանգարաններ Մեղրիում, Գորիսում, Աշտարակում,

4. Դվինի պատմահնագիտական արգելոց-թանգարան,

5. Եղեգնաձորի բնապատմական արգելոց-թանգարան,

6. «Կողբափոր» պատմամշակութային արգելոց-թանգարան Նոյեմբերյանի շրջանում,

7. «Մակարավանք» պատմամշակութային արգելոց-թանգարան Իջևանի շրջանում,

8. Ռազմական արվեստի պատմության թանգարան Դաշտադեմի ամրոցում,

9. Միջնադարյան մոնումենտալ արվեստի թանգարան Երևանում;

10. Դեկորատիվ մոնումենտալ արվեստի թանգարան Երևանում:[12]

Այդուհանդերձ, նշվածների մեծ մասն այդպես էլ իրականություն չդարձավ: 1990 թ. հաշվետվության մեջ արդեն կազմակերպությունը ներկայանում է իր բոլոր արգելոց-թանգարան մասնաճյուղերով, ինչպես նաև հուշարձանների պահպանության տեսչություններով՝ ընդհուպ Լեռնային Ղարաբաղում ստեղծված կառույցը:[13] Սակայն նոր ստեղծված արգելոց-թանգարանները («Արևիք» , «Արենի», «Գեղարքունիք», «Սոդք», «Այրիվանք», «Օձուն», «Որոտնավանք» և մյուս պատմամշակութային արգելոց-թանգարաններ) ենթադրում էին հանրապետության առանձին շրջաններում հաշվառված հուշարձանների ամբողջական պահպանության գործառույթներ: 1990 թ. մշակված Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության համակարգի պետական պատմամշակութային արգելոց-թանգարանի տիպային կանոնադրության (հեղինակ՝ Լ. Բարսեղյան) մեջ արգելոց-

[12] Նույն տեղում, թ. 13:
[13] ՀԱԱ, ֆ. 1063, ց.2. , գ. 335, թ. 1-28:

թանգարանի հետևյալ բնորոշմանն ենք հանդիպում. «2. Արգելոց-թանգարանը կազմակերպվում է պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների համալիրների և պատմականորեն, էթնիկական, լանդշաֆտային, գեղագիտական տեսակետներից միմյանց փոխկապակցված տարածքների բազայի վրա, որոնք իրենցից ներկայացնում են պատմական, գիտական, ճարտարապետական, գեղարվեստական և մշակութային արժեք: Արգելոց-թանգարանի կազմում կարող են նաև մտնել պատմության և մշակույթի հուշարձանների հետ համակցված բնության եզակի համալիրները: <…> Արգելոց-թանգարանի տարածքի մեջ ընդգրկվում են պատմության և մշակույթի հուշարձաններին օրգանապես փոխկապակցված՝ հիշարժան վայրերը, պատմակա-նորեն ձևավորված քաղաքային կառուցապատումները, քաղաքատեղիները, դաստակերտերը, «մշակութային» լանդշաֆտները, (զբոսայգիներ-պուրակներ) բնության լանդշաֆտները, ջրային մակերեսները և նրանց պահպանական գոտիները: <…> 3. Արգելոց-թանգարանը հանդիսանում է գիտա-հետազոտական, գիտալուսավորական հաստատություն, նյութական և հոգևոր մշակույթի հուշարձանների պետական պահպանողը և պրոպագանդողը: Արգելոց-թանգարանի հիմնական խնդիրն է անձեռնամխելիորեն պահպանել, կամ էլ խիստ գիտականորեն հիմնավորվածությամբ վերաստեղծել պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններն իրենց ներքնատեսքով, պատմական միջավայրով, հիշարժան վայրերով և դրանց հետ կապված տարածքով, բնօրինակ թանգարանային հավաքածուների հիման վրա կազմակերպել գեղարվեստական-արտահայտչական և գիտականորեն հիմնավորված ցուցադրություններ»:[14] Փաստորեն, արգելոց-թանգարանի գործնական դաշտում այլևս շեշտադրվում էր ժառանգության բոլոր դրսևորումների համալիր, տարածական և լանդշաֆտային պահպանությունն ու համակարգային կառավարումը: Վերջինս այսօր էլ արդիական է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոմիտեի՝

[14] Տիպային կանոնադրություն Հայկական ԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության համակարգի պետական պատմամշակութային արգելոց-թանգարանի: Հավելված Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդին առընթեր Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության 1990թ. փետրվարի 7-ի Նո. 59 հրամանի, Ընդհանուր դրույթներ, կետ 3 // Պատմամշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի պահպանության ծառայություն ՊՈԱԿ-ի գիտաօժանդակ ֆոնդ:

1992 թ. 16-րդ նստաշրջանում ձևակերպված «մշակութային լանդշաֆտ» հասկացության առանձին կատեգորիաների (i; ii) կիրառման առումով:[15] Ավելին, 2006 թ. Ռուսաստանի Դաշնության Դ. Լիխաչովի անվան բնական և մշակութային ժառանգության ռուսական գիտահետազոտական ինստիտուտի կողմից մշակված ՌԴ տեսարաժան վայրերի, պատմամշակութային արգելոցների և արգելոց-թանգարանների պետական ռազմավարության մեջ տեղ գտած դրույթները[16] լիովին համահունչ են 1990 թ. մեզանում մշակված պատմա-մշակութային արգելոց-թանգարանի սահմանմանը: Սույն ռազմավարության մեջ առաջարկվող համակարգային կառավարման մեխանիզմները պատմամշակութային արգելոցների և արգելոց-թանգարանների ցանցի ձևավորման համար մեզանում, փաստորեն, արդեն իրականացվել էին 1988-1990 թթ.:

Այսպիսով, 1980-ական թթ. վերջին ՀՀ պատմամշակութային ժառանգության պահպանման ոլորտում «արգելոց-թանգարան» հասկացությունը նորովի մեկնաբանվեց՝ ընդգրկելով նախկինում առանձին հուշարձանախմբերի հիման վրա ստեղծված թանգարանները, ինչպես նաև աշխարհագրական, լանդշաֆտային կամ այլ սկզբունքներով փոխկապացված, պետական պահպանության վերցված հուշարձանները և դրանց հետ կապված բնապատմական միջավայրն ու նյութական և ոչ նյութական բաղադրիչները: 1980-ական թթ. ձևավորված կառավարման համակարգով արգելոց-թանգարանները վերածվեցին երկրով մեկ սփռված պատմամշակութային ժառանգության պահպանության և օգտագործման արդյունավետ և հեռանկարային կազմակերպությունների: Վերջիններս հիմք դարձան երկրով մեկ ժառանգության պահպանության օղակների ստեղծման և համակարգված կառավարման, թանգարանային գործառույթներով օգտագործման համար: Պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության համակարգում ստեղծված մեթոդական և կառավարման կենտրոնի միջոցով որոշակի պրոֆիլավորվեցին երեք հիմնական տիպի արգելոց-

[15] Annex 3, Guidelines on the inscription of specific types of properties on the World Heritage List, Operational Guidelines for the Implementation of the World Heritage Convention (WHC), 12/01 July 2012, pp. 88-89. Web site of UNESCO World Heritage Centre, date of use 04.08. 2014, http://whc.unesco.org/en/guidelines/ .

[16] **Веденин Ю. А., Шульгин П. М., Штеле О. Е.,** *Государственная стратегия формирования системы достопримечательных мест, историко-культурных заповедников и музеев-заповедников в Российской Федерации,* НС, вып. 13, М. 2006, с. 4-6, 8-10, 13-16:

թանգարաններ՝ ելնելով ժառանգության պահպանման ժամանակի խնդիրներից։ Նման պրոֆիլավորմամբ առանձին հուշարձանախմբերի հիման վրա կամ դրանց կից գործում էին պատմահնագիտական կամ պատմաճարտարապետական թանգարանները, օրինակ՝ «Զվարթնոց» պատմաճարտարապետական թանգարանը, Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի» թանգարանը, «Մեծամոր» պատմահնագիտական թանգարանը, Դիլիջանի ժողովրդական ճարտարապետության թանգարանը և այլն։ Այս թանգարաններն ու Դիրեկցիայի գիտամեթոդական բաժինը մասնաճյուղերի համար նաև մեթոդական կենտրոնների դեր ունեին։ Դրանք գործում էին որպես գիտահետազոտական ու գիտալուսավորական հաստատություններ։ Դիրեկցիայի կազմում գործող Երևանի հիմնադրման պատմության «Էրեբունի» թանգարանը 1995 թ. իր ներքին կառուցվածքում ուներ «Գիտա-հետազոտական, Ֆոնդերի հաշվառման և պահպանման, Գիտամասսայական և տնտեսական» բաժինները։[17] Նույն թվականի հաշվետվության մեջ «Մեծամոր» պատմահնագիտական թանգարանն իրականացրել էր գիտահետազոտական, գիտամասսայական, ֆոնդային, տնտեսական և վարչական աշխատանքներ։[18] 1994 թ. դրությամբ դիրեկցիայի կազմում աշխատում էր 399 մարդ, որից 52-ը՝ կենտրոնական ապարատում, 121-ը՝ գործող 7 թանգարաններում, իսկ 226-ը՝ արգելոց-թանգարաններում։[19] 1995 թ. մեկ այլ հաշվետվության մեջ նշվում է, որ 31 արգելոց-թանգարաններից միայն երեքն ունեն մշտական գործող ցուցադրություն, իսկ «Զվարթնոց» պատմաճարտարապետական թանգարանի ցուցադրությունը փակ է՝ շենքային վերանորոգումների պատճառով։ Միաժամանակ թվարկվում է շարժական թանգարանային հավաքածուներ պահպանող 8 մասնաճյուղ, բացի դիրեկցիայից։[20] Փաստորեն դիրեկցիայի կազմում միտում կար առանձնացնել շարժական հավաքածուներ և մշտական ցուցադրություն ունեցող դասական թանգարաններն ու արգելոց-թանգարանները, որոնք առավելապես անշարժ հուշարձանային համալիրների հիմքով էին գործում։ Սակայն նման տարանջատումն այնքան էլ սկզբունքային չէր։ «Կումայրի» պատմա-ճարտարապետական արգելոց-թանգարանն իր պահպանության ենթակայության 220 հա տարածքում ուներ 1672 հուշարձան,

[17] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 2. , գ. 340, թ. 10։
[18] Նույն տեղում, թ. 19։
[19] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 2. , գ. 337, թ. 1։
[20] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 2. , գ. 340, թ. 1։

որոնցից 1227-ը բնակելի տներ էին, ընդ որում 1072-ը՝ մասնավոր սեփականության իրավունքով էին պահպանվում:[21] Վերջինս հետևյալ կառուցվածքն ուներ՝ Վարչակառավարչական անձնակազմ, Գիտա-ֆոնդային աշխատանքների բաժին, Պատմաճարտարապետական և պատմահնագիտական հուշարձանների ուսումնասիրման բաժին, Ազգագրական և բանահյուսական ուսումնասիրությունների բաժին, Ասլամազյան քույրերի պատկերասրահ, տնտեսական մաս, արտաբյուջետային մասով՝ Պատմաճարտարապետական և պատմահնագիտական հուշարձանների պահպանության և շահագործման բաժին:[22] Սույն արգելոց-թանգարանը, փաստորեն, մեկ տարածքի շարժական, անշարժ, նյութական և ոչ նյութական մշակութային ժառանգության համալիր պահպանության թանգարանային եղանակ էր: Արգելոց-թանգարանի 1990 թ. հաշվետության մեջ քաղաքաշինական, ճարտարապետական, հնագիտական հուշարձան կառույցների պահպանությանից զատ, նշվում էին նաև քաղաքային կենցաղին, սովորություններին, ծեսերին, արհեստներին, տոներին վերաբերող նյութերի հավաքման և ձայնագրման աշխատանքներ:[23] Նմանատիպ բացօթյա թանգարանի մոդելը ներառում էր մշակութային լանդշաֆտի և էկոթանգարանի հայեցակարգային հիմնական բաղադրատարրերը, որն այսօր էլ արդիական է, սակայն, ցավոք, երկրաշարժի և կառուցվածքային վերափոխումների պատճառով հետագայում զարգացում չունեցավ:

Արգելոց-թանգարանների երրորդ հիմնական տիպը ներառում էր առավելապես հուշարձանների խմբային պահպանության և հանրահռչակման եղանակներ՝ ելնելով երկրի վարչատարածական բաժանումից և հուշարձանների փոխկապակցվածությունից: Այս տիպի արգելոց-թանգարանները ստեղծվեցին 1980-ական թթ. դիրեկցիայի կազում՝ շարունակելով նախկին հուշարձան-թանգարանների կազմակերպման միտումը: Նման սկզբունքով էին կազմակերպված «Աշտարակ», «Կոտայք», «Գնդեվանք», «Թալին», «Կեչառիս», «Արևիք», «Որոտնավանք» «Կողբափոր», «Տաթև» պատմամշակութային արգելոց-թանգարանները և այլք: «Կեչառիս» պատմա-մշակութային արգելոց-թանգարանի 1996 թ. առաջին կիսամյակի հաշվետվության մեջ որոշակի նկարագրվում է այս տիպի արգելոց-թանգարանի

[21] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 2. , գ. 411, թ. 1:
[22] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 2. , գ. 252, թ. 2-4:
[23] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 2. , գ. 253, թ. 7:

հիմնական կառուցվածքը։ Մասնավորապես նշվում է, որ սույն արգելոց-թանգարանը «ընկած է նախկին Հրազդանի շրջանի ամբողջ վարչական տարածքի վրա։ Բացի Չարենցավան քաղաքից, հուշարձաններ կան բոլոր բնակավայրերում և բնակավայրերին հարող տարածքներում։ Արգելոց-թանգարանում գրանցված է 1166 հուշարձան։ «Կեչառիս» պատմամշակութային արգելոց-թանգարանը բաժանված է 6 պահպանական գոտիների, յուրաքանչյուր գոտու հուշարձանների պահպանությունը հանձնված է մեկ վերակացուի։ Յուրաքանչյուր վերակացու ունի իր գոտու բոլոր հուշարձանների ցուցակը։ Յուրաքանչյուր վերակացու հետևում է շուրջ 200 հուշարձանի խնամքին ու պահպանությանը», իսկ պահպանության հիմնական եղանակներից էին շրջայցերը։[24] «Տաթև» պատմամշակութային արգելոց-թանգարանի (որի գրասենյակը Գորիս քաղաքում էր) նույն ժամանակահատվածի հաշվետվության մեջ տրվում է հետևյալ տեղեկատվությունը. «արգելոց-թանգարանում աշխատում են 13 հոգի՝ տնօրեն և թանգարանի 10 վերակացուներ, որոնցից մեկը՝ կես դրույքով և երկուսը՝ արտահաստիքային։ 1996 թ. արգելոց-թանգարանը, առաջնորդվելով տիպային կանոնադրությամբ, որոշակի աշխատանք է կատարել շրջանի տարածքում գտնվող 1220 հուշարձանների պահպանության, նորերի հայտնաբերման, պահպանության և վերանորոգման ուղղությամբ»։ Սույն հաշվետվության մեջ նկարագրվում են նաև հուշարձանների բարեկարգման, վերահսկողական աշխատանքներ։[25]

1980-1990-ական թթ. ձևավորվեց հուշարձանների թանգարանացման միջոցով ստեղծված պատմամշակութային արգելոցների և արգելոց-թանգարանների գործունեության համակարգման ու զարգացման միասնական համակարգ։ «Արգելոց-թանգարան» հասկացությունը սկսվեց կիրառվել պաշտոնապես, և այդ հասկացությունն ընդլայնվեց՝ ներառելով պատմամշակութային ժառանգության տարաբնույթ դրսևորումների համալիր և իրենց բնապատմական միջավայրով պահպանության, հետազոտման և մեկնաբանման կայուն գործառույթների իրականացում։ Ստեղծված գիտամեթոդական և կառավարման համակարգը թույլ տվեց նաև նախկինում կազմակերպված հուշարձան-թանգարաններից զատ, տարբեր սկզբունքերով հուշարձանների խմբային և տարածական պահպանության նոր

[24] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 2. , գ. 322, թ. 1:
[25] ՀԱԱ, ֆ. 1063, ց. 2. , գ. 323, թ. 1-3:

մոդելներ մշակել և ավելացնել գործող արգելոց-թանգարանների քանակը։ Ձևավորված համակարգում արգելոց-թանգարանների երեք հիմնական տիպային դրսևորումներ են առանձնացվում.

1. հնավայրերին կից *պատմահնագիտական թանգարաններ,* որոնք դասական թանգարանային գործառույթներ ունեն, մեթոդական կենտրոններ են մասնաճյուղերի համար,

2. *հուշարձան-թանգարաններ*, որոնք առավելապես հանդես էին գալիս առանձին հուշարձանի կամ դրա առանձին հատվածների թանգարանային օգտագործման եղանակով,

3. *տարածական արգելոց-թանգարաններ*, որոնք ենթադրում են առանձին շրջանների կտրվածքով հուշարձանների առանձնացում, պահպանություն և օգտագործում։

ՍՎԵՏԼԱՆԱ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀԱԱՊՊԹ, ՀՀ ԳԱԱ ՀԱԻ

ԼԱՎՐԵՆՏԻ ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ԱՎԱՆԴԸ ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՀԻՄՆԱԴՐՄԱՆ ԵՎ ԿԱՅԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Հայաստանի ազգագրության պետական թանգարանը, որի իրավահաջորդը Հայոց ազգագրության ազգային թանգարանն է, ազգային մշակույթի գանձարան է, հանրապետական նշանակության միակ խոշոր ազգագրական թանգարանը Հայաստանի Հանրապետությունում: Ազգագրական բնույթի թանգարանները տվյալ էթնիկական հանրության մշակույթը ներկայացնում են անցյալը կապելով արդի մշակույթի հետ և բացահայտում առանձին մշակութային երևույթների և տարրերի արմատները, իսկ պատմության թանգարանները պատմական իրադարձությունները մեկնաբանում են ժամանակագրական կապերով: Ազգագրության թանգարանի խնդիրն է ապահովել մշակութային ժառանգորդումը՝ սերունդներին փոխանցելով ազգային ավանդույթները: Ազգագրական թանգարանների ցուցադրությունում դրսևորվում են ազգային ինքնության խորհրդանիշները: Ազգագրության և ազգագրական հավաքածուներ ու ցուցադրություններ ունեցող թանգարանները, որպես սոցիալական հիշողության պահպանման ինստիտուտ, իրենց ձևավորման և զարգացման ընթացքում, հավաքածուների և ցուցադրությունների միջոցով, սերունդներին են փոխանցում նյութական և ոչ նյութական մշակույթի տարրերը՝ ազդելով հայերի ազգային ինքնության ձևավորման, վերականգնման և զարգացման վրա:[1]

Հայոց ազգագրության թանգարանի առաքելությունն է հավաքել, պահպանել, համալրել, ուսումնասիրել, հանրահռչակել և սերունդներին փոխանցել հայոց ազգային մշակույթին և 1918 թ. մայիսյան հերոսամարտերի պատմությանը վերաբերող թանգարանային առարկաները և հավաքածուները: Թանգարանում ներկայացված է հայոց ազգային մշակույթը հնագույն ժամանակներից մինչև XX

[1] **Լ. Գևորգյան**, *Ազգագրական ցուցադրություններն արդի հայոց ինքնության ձևավորման գործում*, Ատենախոսության սեղմագիր, Երևան, 2017, էջ 10:

դարը:[2] Ցուցադրված է հայոց ավանդական մշակույթի համակարգը՝ կենսապահովման, սոցիալական, հոգևոր ենթամշակույթների տարրերով հանդերձ:

1968 թ. ստեղծված Սարդարապատի հուշահամալիրը խորհրդանշում է հերոսամարտի պատմական վիթխարի նշանակությունը հայրենիքի և հայոց հնագույն մշակույթի փրկության գործում:[3] Եթե Սարդարապատի հուշահամալիրի ստեղծման գործում անուրանալի է Վլադիմիր Դարբինյանի դերը, ապա Հայաստանի ազգագրության թանգարանի հիմնադրման մեջ հսկայական է հիմնադիր տնօրեն Լավրենտի Բարսեղյանի ավանդը: Այս սրբազան տարածքում Հայոց էթնիկ մշակութային ժառանգությանը նվիրված թանգարանի ստեղծումը մեծ խորհուրդ ունի: Թանգարանը հայոց ազգային մշակույթի մերօրյա տաճարն է, մշակույթի գանձարանը:[4] Թանգարանի «թանգ-» արմատը վերաբերում է հայոց ազգային մշակույթին՝ բացահայտելով ազգի անցյալն ու վկայագրելով ներկան: Այստեղ պահպանվում, ցուցադրվում, ուսումնասիրվում և հանրահռչակվում են հայ էթնոսի մշակութային ժառանգությանը վերաբերող բարձրարժեք թանգարանային մասունքներ, պատմամշակութային արժեքներ:

Հայաստանի ազգագրության պետական թանգարանը դռները բացել է այցելուների առաջ 1978 թ. սեպտեմբերի 13-ին, սակայն դրան նախորդել է կազմակերպչական հսկայական աշխատանք: Ի սկզբանե, Հոկտեմբերյանի շրջսովետի գործադիր կոմիտեի 1968 թ. թիվ 18 արձանագրությամբ, որոշվել է Սարդարապատի ճակատամարտի պարկ-հուշարձանի՝ սեղանատնից դեպի արևելք ընկած տարածքում մեկ հեկտար հողամաս հատկացնել թանգարան կառուցելու համար, իսկ տուրիստական բազայի կառուցման համար նախատեսվել է հողային տարածություն՝ պարկ-հուշարձանի արևմտյան մասում նախատեսվող անտառային գոտում:

Հայկական ՍՍՀ Կուլտուրայի մինիստրության 1977 թ. նոյեմբերի 10-ի՝ Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդին ուղղված Մկ-3/62 գրության մեջ նշված է, որ Հայաստանի պատմության (1300 ք.մ) և և Հեղափոխության (1200 ք.մ) թանգարանները,

---

[2] **Ս. Պողոսյան**, *Հայաստանի ազգագրության թանգարանը՝ ազգային մշակույթի գանձարան. թանգարանի 30-ամյա ուղին*, Նայիրի տարեգիրք, Թեհրան 2010, էջ 398-410; **Ս. Պողոսյան, Ա. Մելիքյան,** *Սարդարապատ. 90-ամյակ,* Թեհրան, 2010, էջ 390-398:

[3] **Ս. Պողոսյան, Ա.Մելիքյան,** *Սարդարապատ՝ հաղթանակների բնօրրան*, Երևան, 2008, էջ 9-10:.

[4] **Ս. Պողոսյան**, նշվ. աշխ, էջ 399:

ցուցադրական համապատասխան մակերեսներ չունենալու հետևանքով, ի վիճակի չեն ամբողջությամբ ցուցադրելու Հայաստանի բնակչության նյութական ու հոգևոր մշակույթը, հասարակական և տնտեսական կենցաղը, սոցիալ-տնտեսական հարաբերությունները, ժողովրդական արվեստը, գեղարվեստական արհեստագործությունը, ժողովրդական ճարտարապետության հուշարձաններն ու թանգարանային արժեքները: Դրանից ելնելով, Հայկական ՍՍՀ Կուլտուրայի նախարարությունը նպատակահարմար է գտել Սարդարապատի հուշարձան-զբոսայգու թանգարանային շենքի բազայի վրա կազմակերպել Հայաստանի ազգագրության պետական թանգարան: Նախատեսվում էր թանգարանում առանձին սրահներ հատկացնել Սարդարապատի ճակատամարտի հետ կապված նյութերի ցուցադրությանը: Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Ֆ. Սարգսյանը ՀԿԿ Կենտկոմին ուղղված գրության մեջ ընդգծել է, որ Մինիստրների խորհուրդը հնարավոր է համարում Կուլտուրայի մինիստրության առաջարկությունը, քանի որ ստեղծվելիք թանգարանը կծառայի հայ ժողովրդի նյութական և հոգևոր մշակույթի, կենցաղի, ազգային կիրառական արվեստի ու ժողովրդական ճարտարապետությունն արտացոլող մանր ձևերի ու քարակերտ կոթողների լայն ցուցադրմանն ու պրապագանդմանը և դրանց գիտական ուսումնասիրմանը: 1978 թ. հունվարի 2-ին ՀԿԿ Կենտկոմ քննարկման է ուղարկվել ՀՍՍՀ Մինիստրների խորհրդի որոշման նախագիծը: Յու. Խոջամիրյանի ստորագրությամբ ՀՍՍՀ Մինիստրների Սովետի պետական պլանային կոմիտեն նպատակահարմար է գտել նման թանգարանի կազմակերպումը: Միաժամանակ, ազգագրական թանգարանը գիտական կազմակերպությունների խմբում դասելու նպատակով, անհրաժեշտ է համարվել այդ հարցը սահմանված կարգով համաձայնեցնել ՍՍՀՄ կուլտուրայի մինիստրության, ՍՍՀՄ ֆինանսների մինիստրության և Արհմիության համապատասխան Կենտկոմի հետ: ՀՍՍՀ Մինիստրների Սովետի նախագահության 1977 թ. դեկտեմբերի 30-ի թիվ 51 արձանագրության 5-րդ կետը վերաբերում է Հայաստանի պետական ազգագրական թանգարան կազմակերպելու հարցին: Հավանություն տալով ՀՍՍՀ Կուլտուրայի մինիստրության առաջարկությանը՝ Հոկտեմբերյանի շրջանի Սարդարապատի ճակատամարտի վայրում ստեղծված հուշարձան–զբոսայգու տարածքում կառուցված թանգարանային շենքի բազայի վրա Հայաստանի պետական

ազգագրական ինքնուրույն թանգարանի կազմակերպմանը, առաջարկվել է հարցը ներկայացնել ՀԿԿ Կենտկոմ: ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1978 թ. փետրվարի 16-ի թիվ 82 որոշմամբ ստեղծվում է Հայաստանի պետական ազգագրական թանգարանը, որպես Կուլտուրայի մինիստրությանը ենթակա կազմակերպություն:[5] Ուշագրավ է, որ ռուսալեզու այս գրության մեջ հատուկ ընդգծված է Կոմկուսի՝ մշակութային ժառանգության նկատմամբ մշտական խնամքի և սովետական եղբայր ժողովուրդների համերաշխության և փոխհարստացման մասին: ՀՍՍՀ Մինիստրների Խորհրդի 1978 թ. հունիսի 27-ի թիվ 437 որոշման մեջ արդեն թանգարանի անունը նշված է Հայաստանի ազգագրության պետական թանգարան:[6] «Հայաստանի ազգագրության պետական թանգարանի հարցերը» որոշման մեջ նախատեսվել է թանգարանի պահպանման ծախսերը կատարել հանրապետության բյուջեով Մինիստրության համար նախատեսված հատկացումների սահմաններում: Նույն որոշմամբ Հուշարձան–զբոսայգին իր ճարտարապետական կոթողներով և մնացած հիմնական միջոցներով ժողովրդական դեպուտատների Հոկտեմբերյանի շրջսովետի գործադիր կոմիտեի կուլտուրայի բաժնի հաշվեկշռից հանձնվել է Հայաստանի ազգագրության պետական թանգարանին: Կարևոր են նաև Որոշման 4-րդ և 5-րդ կետերը, որոնցից առաջինում հրատարակչությունների, պոլիգրաֆիայի և գրքի առևտրի պետական կոմիտեին հանձնարարվում է 1978 թ. պատվերի կարգով հրատարակել ՀԱՊԹ-ի կողմից կազմված ուղեցույցները, բուկլետները և բացիկները: 5-րդ կետը վերաբերում է 1979 թ. Ժողովրդատնտեսական պլանում ՀԱՊԹ-ի աշխատողների համար բնակելի և օժանդակ շենքի շինարարությանը:

1978 թ., Սարդարապատի հուշահամալիրի և թանգարանային համակառույցի շինարարական աշխատանքներն ավարտելու և թանգարան կազմակերպելու նպատակով, Հայաստանի ազգագրության պետական թանգարանի տնօրեն է առաջադրվել Լ. Բարսեղյանը: Հայկական ՍՍՀ Կուլտուրայի մինիստր Ռ. Պարսամյանի 1978 թ. մայիսի 16-ի հրամանով նա նշանակվել է թանգարանի դիրեկտոր՝ ազատվելով ՀՍԱՀ Կուլտուրայի մինիստրության կուլտուր-լուսավորական հիմնարկների պետի պարտականություններից: Լավրենտի Աշոտի Բարսեղյանը եղավ Հայաստանի ազգագրության թանգարանի հիմնադիր տնօրենը:

[5] Թանգարանի գիտական գործունեության արխիվից:
[6] Թանգարանի գիտական գործունեության արխիվից:

Լավրենտի Բարսեղյանը ծնվել է 1937 թ. հունվարի 7-ին, Երևան քաղաքում: 1954 թ. արծաթե մեդալով ավարտել է Քաջարանի միջնակարգ դպրոցը:[7] 1954-1959 թթ. սովորել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետում: Ուսանողական տարիներին գերազանց ուսման համար ստացել է անվանական կրթաթոշակ, գլխավորել է համալսարանի ուսանողական գիտական ընկերության խորհուրդը, ընտրվել շրջանային խորհրդի պատգամավոր: Համալսարանն ավարտելուց հետո, 1959 թ. ընտրվել է կոմերիտմիության Սպանդարյանի շրջանային կոմիտեի առաջին քարտուղար: 1961 թ. աշխատանքի է անցել Հայաստանի գիտությունների ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտում: 1964 թ. պաշտպանել է թեկնածուական թեզ և ստացել պատմական գիտությունների թեկնածուի աստիճան: 1984 - 1985 թթ. համատեղության կարգով գլխավորել է նաև Հեղափոխության պետական թանգարանը: 1985 թ. նշանակվել է Երևանի մարզա-համերգային համալիրի տնօրեն և ղեկավարել վերականգնման աշխատանքները, որոնց ավարտից հետո, 1986 թ. նշանակվել է «Հայգլխհամերգ» հյուրախաղային-համերգային միավորման գլխավոր տնօրեն և Հայկական ԽՍՀ մշակույթի նախարարության կոլեգիայի անդամ:

Լ. Բարսեղյանը, լինելով հայ ժողովրդի հնագույն շրջանի պատմության և մշակույթի խոշոր մասնագետներից մեկը, հեղինակ է տասնհինգ մենագրությունների և 100-ից ավելի գիտական հոդվածների: Զբաղվել է պատմամշակութային արժեքների պահպանության, հուշարձանների վերականգնման և թանգարանագիտական աշխատանքներով:

Լ. Բարսեղյանը հանրապետությունում գործող մի շարք թանգարանների կազմակերպիչն ու գիտական ցուցադրությունների հեղինակն է: 1978 թ. ստեղծված և առ այսօր գործող Սարդարապատի հուշահամալիրում կազմակերպված Հայաստանի ազգագրության պետական թանգարանի գիտական ցուցադրության հեղինակն է: Դրանցից առաջինն ազգագրության թանգարանի գիտական ցուցադրությունն է, որն ընդգրկում է հայոց հնագույն մշակույթը, ավանդական զբաղմունքներն ու օժանդակ տնտեսաձևերը, արհեստները, գեղարվեստական գործվածքի տարբեր ճյուղերը և հոգևոր մշակույթը: 1978 թ. սեպտեմբերի 13-ին բացված առաջին ցուցադրությունը

[7] **Լավրենտի Բարսեղյան** (կենսագրական տեղեկատվություն),Երևան, 2007, էջ 2:

նվիրված էր Հայկական լեռնաշխարհի բնակիչների կիրառական և գեղազարդման արվեստին, որի առաջին այցելուները հայ արվեստին նվիրված Միջազգային երկրորդ գիտաժողովի մասնակիցներն էին:[8]

Մեծանուն ճարտարապետ Ռ. Իսրայելյանի նախագծով Սարդարապատի հուշահամալիրի փոքր բարձունքի վրա կառուցված թանգարանի շենքը, որ շահագործման է հանձնվել հուշահամալիրից շուրջ 10 տարի հետո, իր ծավալով ու գաղափարով լրացնում ու ամբողջացնում է համալիրը:[9] Ինչպես նշվեց, այդ գործի կազմակերպիչը թանգարանի հիմնադիր տնօրեն, 41-ամյա հնագետ, պատմաբան, թանգարանային գործի խոշոր գիտակ, Լավրենտի Աշոտի Բարսեղյանն էր: Ընկեր Բարսեղյանը հմուտ կառավարիչ էր, գործող և աշխատեցնող տնօրեն, խստապահանջ իր և շրջապատի, անձնակազմի նկատմամբ: Նա ընկալունակ էր նորի, արդիականի հանդեպ, անընդհատ ստեղծագործական որոնումների և փնտրտուքի մեջ էր, չէր գոհանում ձեռք բերածով: Նրա շնորհիվ կարճ ժամանակահատվածում թանգարանը դարձավ միութենական նշանակության կարևոր թանգարան:

Թանգարանի ստեղծման առաջին իսկ ամիսներից կազմակերպվել են ազգագրական գիտարշավներ և իրականացվել դաշտային հետազոտություններ, ձեռք բերվել թանգարանային նշանակություն ունեցող մշակութային արժեքներ: Երիտասարդ հնագետները ևս մասնակցել են կազմակերպված գիտարշավներին: Արդյունքում թանգարանային հիմնական ֆոնդային հավաքածուում ընդգրկված թանգարանային առարկաների թիվը հասել է 40000-ի:[10]

Ընկեր Բարսեղյանի անմիջական ղեկավարությամբ 1981 թ. կազմակերպվեց հայոց հնագույն մշակույթին և հայ ժողովրդի XIX-XX դդ. ավանդական կենցաղին ու մշակույթին նվիրված հիմնական ցուցադրությունը: Հայաստանի ազգագրության պետական թանգարանի գիտական ցուցադրության համար Լ. Բարսեղյանը 1981 թ. արժանացել է ԽՍՀՄ Մինիստրների խորհրդի մրցանակին և դափնեկրի կոչման: 1981-1982 թթ. կազմակերպված մշտական ցուցադրությունը, տարեցտարի համալրվելով և ամբողջանալով, առանձին թեմատիկ համալիրներով ներկայացնում է

---

[8] **Ա. Պողոսյան, Ա. Հովհաննիսյան,** *Հայաստանի ազգագրության թանգարանի քսանամյա գործունեությունը (համառոտ ակնարկ),* ՆԱՀ, Երևան, 2005, էջ 89:

[9] **Ա. Իսրայելյան,** *Սարդարապատի հուշահամալիրը. հիմնադրման 30-ամյակի առթիվ,* Նայիրի տարեգիրք, Թեհրան, 2010, էջ 416:

[10] Նույն տեղում, էջ 90:

հայոց մշակույթը՝ հնագույն ժամանակներից մինչև XX դ. ներառյալ: Ցուցադրության մեջ մշակութային երևույթները և տարրերը ներկայացվում են ըստ պատմազգագրական մարզերի, համահայկական ընդհանրություններին զուգահեռ ցուցադրվում են նաև մշակութային տեղական առանձնահատկություններ:

1980-1988 թթ. ընթացքում Լ. Բարսեղյանի անմիջական մասնակցությամբ կազմակերպվեցին հայկական կիրառական արվեստի և ճարտարապետությանը նվիրված ժամանակավոր ցուցահանդեսներ Ավստրիայում, ԱՄՆ-ում, Արգենտինայում, Հունաստանում և Գերմանիայում: 1980 թ. Վիեննայում (Ավստրիա) կազմակերպել է «Հայաստանի կիրառական արվեստը XIX դ. վերջին և XX դ. սկզբին» ժամանակավոր ցուցահանդեսը: 1982 թ. Նյու Յորքում (ԱՄՆ) ներկայացրել է Հայաստանի ազգագրության պետական թանգարանի նյութերից կազմված «Հայաստանի կիրառական արվեստը» ժամանակավոր ցուցահանդեսը, որոնց վերաբերյալ ուշագրավ արխիվային նյութեր են պահպանվում թանգարանում: 1985թ. Բուենոս Այրեսում (Արգենտինա) կազմակերպել է «Հայաստանի ժողովրդական արվեստը» ժամանակավոր ցուցահանդեսը, 1987-ին՝ Աթենքում (Հունաստան) Հայաստանի ճարտարապետությունը ներկայացնող լուսանկարների ցուցահանդեսը: Հայաստանի մշակութային կյանքի մասին զեկուցումներով հանդես է եկել Ավստրիայում (1980թ.), Արգենտինայում (1985 թ., 1988 թ.), Հունաստանում (1987 թ.) և այլուր: 1998 թ. նա պաշտպանել է դոկտորական թեզը և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան: Թանգարանի եռախորան դահլիճում կազմակերպվել են հայոց ավանդական մշակույթին և ժամանակակից արվեստին նվիրված, ինչպես նաև այլ ժողովուրդների էթնիկական մշակույթին վերաբերող ժամանակավոր ցուցադրություններ: Ժամանակավոր ցուցահանդեսներ կազմակերպվել են նաև նախկին Խորհրդային Միության հանրապետություններում և այլ երկրներում:

Թանգարանում կազմակերպվել են նաև նախկին Խորհրդային Միության հանրապետություններից և յոթ երկրից բերված ցուցահանդեսներ, որոնցից նշանակալի են Օվկիանոսքի էթնիկական ընդհանրությունների մշակույթը և արվեստը, Ռումինիայի, Մեքսիկայի, Բուլղարիայի բնակիչների կիրառական արվեստը, Մոսկվայի տիեզերագիտության թանգարանի հավաքածուները ներկայացնող ցուցադրությունները:

Հայոց ազգագրության թանգարանը, որպես ազգագրական բնույթի հանրապետական նշանակության միակ խոշոր թանգարան, ունեցել է մի շարք մասնաճյուղեր հանրապետության շրջաններում: 1984 թ. Լ. Բարսեղյանի գլխավորությամբ ստեղծվեցին Գյումրիի քաղաքային կենցաղի և ժողովրդական ճարտարապետության թանգարանի և քանդակագործ Սերգեյ Մերկուրովի տուն-թանգարանի գիտական ցուցադրությունները: 1985 թ., «Կումայրի» պատմա-մշակութային արգելոցի ստեղծման գիտական հիմնավորման և վերոհիշյալ երկու թանգարանների ցուցադրությունները ստեղծելու համար, Լ. Բարսեղյանը արժանացել է Հայաստանի պետական մրցանակի դափնեկրի կոչման: Պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և արժանացել պետական այլ պարգևների: ՀԱՊԹ մասնաճյուղեր էին նաև Ռուս-հայկական բարեկամության թանգարանը Մոսկվայի Լազարյան ճեմարանի շենքում, Տավուշի պատմության և կենցաղի թանգարանը Բերդում, Լոռվա կենցաղի և մշակույթի թանգարան Ստեփանավանի շրջանի Կուրթան գյուղում, Անդրկովկասի ժողովուրդների բարեկամության թանգարանը Իջևանի շրջանի Ազատամուտ գյուղում, որոնք 1990-ական թթ. հանձնվել են այլ ենթակայության: Կազմակերպության մասնաճյուղերից առկա է «Մուսա լեռան հերոսամարտի պատմության և մուսալեռցիների ազգագրության թանգարան» մասնաճյուղը, որի առաջին ցուցադրությունը բացվել է 1983 թվականին: Թանգարանում ներկայացվում են մուսալեռցու ավանդական կենցաղը, ծեսերը, սովորույթներն ու հերոսամարտը ներկայացնող ցուցանմուշներ:

2005 թվականին, որոշ ընդմիջումից հետո, ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալի փետրվարի 3-ի թիվ 286 ա/1 հրամանով, Լ. Ա. Բարսեղյանը կրկին նշանակվել է ՀՀ ՊՆ Ազգային-ազատագրական պայքարի պատմության և ազգագրական համալիրի գլխավոր տնօրեն:[11] 2005-2007 թթ. Լավրենտի Բարսեղյանի ղեկավարությամբ կազմակերպվել և իրականացվել են մի շարք միջոցառումներ և ցուցահանդեսներ:

- 2005-ին կազմակերպվել է «Կորուսյալ Էրգրի մասունքներ» ցուցահանդեսը:
- 2006-ին կազմակերպվել են հետևյալ ցուցահանդեսները՝ «Գրի մոգական զորությունը», «Հայուհու հմայքը»՝ ապրիլի յոթի կապակցությամբ: Թանգարանի

[11] Թանգարանի գիտական արխիվ:

բացման օրը՝ սեպտեմբերի 13-ին բացվել է «Բնության ցոլքերը ժողովրդական արվեստում» ցուցահանդեսը: ՀՀ անկախության 15-ամյա հոբելյանի առիթով, սեպտեմբերի 21-ին բացվել է «Քաղաքակրթությունների շնորհանդես. Աշխարհը և մենք» ցուցահանդեսը: Թանգարանին կից գործող հայկական ժողովրդական տան ավանդական ոճով կառուցված Հացատանը կազմակերպվել են ավանդական բնակարանի ներքնատեսքը և ուտեստը հայ ժողովրդի կենցաղում թեմատիկ ցուցադրությունները:

- Թանգարանի կենտրոնական եռախորան դահլիճի առաջին սրահում կազմակերպվել է 1918 թ. մայիսյան հերոսամարտերին նվիրված ցուցադրություն[12]:

ՀԱՊԹ-ի հնագիտական հավաքածուի տվյալների շտեմարան կազմելու նպատակով, Discovery ծրագրի շրջանակներում, 2007 թ. իրականացվել է թանգարանի հնագիտական առարկաների գիտական անձնագրերի վերավկայագրում՝ ՀՀ ԳԱԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի հնագետների կողմից:

2005 թ. հրատարակվել է թանգարանի «Նոր ազգագրական հանդես»- ի անդրանիկ համարը՝ պրոֆ. Դ. Վարդումյանի գիտական խմբագրությամբ: Հանդեսը նպատակ ունի շարունակել 1916 թ. ընդհատված «Ազգագրական հանդեսի» ավանդույթները:[13]

2005-2007 թթ. կազմակերպված ժամանակավոր ցուցահանդեսները, «Նոր ազգագրական հանդես»-ի լույս ընծայումը, հիմնական ցուցադրության մեջ կատարված փոփոխությունները և համալրումները, եռալեզու բացատրագրերի տեղադրումը, ի թիվս այլ գործերի, վկայություն են այն բանի, որ Հայաստանի ազգագրության թանգարանում թանգարանային գործունեությունը վերելք է ապրել: 2007 թ. փետրվարից ապրիլին, 21 տարվա դադարից հետո, «Ֆրանսիայում Հայաստանի ազգային տարի» ծրագրի շրջանակներում, թանգարանը, Մարսել քաղաքի Արվեստի և արհեստների տանը (համադրող՝ Ս. Պողոսյան, թարգմանիչ՝ Ա. Մուսիկյան) բացեց «Հայաստանի արհեստները / Հայաստանի գանձերը» խորագրով ժամանակավոր ցուցահանդես: Նախորդող միջազգային ցուցահանդեսը կազմակերպվել էր դեռևս 1986 թ., Արգենտինայում, «Հայաստանի դեկորատիվ

[12] Տես՝ Թանգարանի 2005-2007 թվականների գիտական գործունեության հաշվետվությունները:
[13] ՆԱՀ, *Գիտական աշխատություններ*-Ա, Երևան 2005,141 էջ:

կիրառական արվեստը» խորագրով՝ ընկեր Բարսեղյանի գլխավորությամբ: 2007 թ. Մարսելում (փետրվարի 8 - մարտի 22-ը) կազմակերպված ցուցահանդեսը նոր շունչ հաղորդեց թանգարանի ցուցահանդեսային գործունեությանը: Ցուցահանդեսում ներկայացվել են համահայկական մշակութային խճանկարը և պատմազգագրական առանձնահատկությունները բացահայտող արհեստագործական մեծարժեք ցուցանմուշներ:[14]

Լավրենտի Բարսեղյանը, ասես նախախնամությամբ, լինելով հայոց ազգային մշակույթի մերօրյա տաճարի՝ Հայաստանի ազգագրության թանգարանի հիմնադիրը և նպաստելով այս կարևոր պատմամշակութային կազմակերպության կայացմանը, տարիներ անց կրկին զորավիգ եղավ թանգարանի վերածննդին: Նա առաքելություն ունեցող, խարիզմատիկ և օժտված անհատականություն էր, մեծ գիտնական և հմուտ կառավարիչ: Լինելով մեծ ուսուցիչ՝ ստեղծել է բարսեղյանական թանգարանագիտական դպրոց: Մշտապես աջակցել է և հպարտացել իր սաների հաջողություններով:

Հայոց ազգագրության թանգարանը կայացած, գործուն և կենսունակ գիտա-ցուցադրական, գիտահետազոտական, մշակութային կազմակերպություն է և, ազգագրության, հնագիտության բնագավառում հայտնի շատ մասնագետներ իրենց աշխատանքային մկրտությունն ստացել են այս թանգարանում:

Ամփոփելով նշենք, որ Ե. Լալայանի երազանքն իրականություն դարձրած թանգարանի՝ Հայաստանի ազգագրության թանգարանի հիմնադրումը և շուրջ 40-ամյա գործունեությունը լուրջ ավանդ է Հայոց մշակութային ժառանգության պահպանության, ուսումնասիրման, ցուցադրման և ներկայացման գործում: Թանգարանն ունի 74000-ից ավելի թանգարանային առարկաներից բաղկացած հավաքածու, որը ներկայացնում է հայոց մշակութային ժառանգության նյութական (բնակարան, կահկարասի, ուտեստ, տարազ, արհեստներ և այլն) և ոչ նյութական (հոգևոր մշակույթ, երաժշտարվեստ, ժողովրդական ներկայացում և այլն) մասերը: Հայոց ազգագրության թանգարանի հիմնական ցուցադրությունում իր ուրույն տեղն ուտեստի ցուցադրանքը: Ցուցադրության մեջ ներկայացված են հայոց ավանդական ուտեստի համակարգում մշակված և ժառանգված ավանդույթներն ու ժողովրդական

[14] .**Ս. Պողոսյան**, *Հայաստանի ազգագրության թանգարանը՝ ազգային մշակույթի գանձարան*, էջ 402-403:

հմտությունները: Թանգարանում կազմակերպվել և կազմակերպվում են հայոց մշակութային ժառանգությանը և ժամանակակից մշակույթին, 1918 թ. մայիսյան հերոսամարտերին վերաբերող ժամանակավոր ցուցահանդեսներ: Հիմնական ցուցադրության սրահներին հաջորդում է ժամանակավոր ցուցադրությունների համար նախատեսված եռամաս ցուցասրահը: Ազգագրագետ Ե. Լալայանի անվան դահլիճում կազմակերպվում են հանդիպումներ, դասախոսություններ, կլոր սեղաններ, քննարկումներ, դասընթացներ և այլն:

Դրանով հանդերձ, լուրջ ձեռքբերումների հետ մեկտեղ, կան որոշակի խնդիրներ, որոնց լուծումն առավել լիարժեք կդարձնի համազգային նշանակության, ազգագրական բնույթի միակ խոշոր կազմակերպության թանգարանային բազմաբնույթ գործունեությունը:

Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրում և Հայոց ազգագրության թանգարանում ժամանցի ու հանգստի մշակույթը բարելավելու, տեղացիների և հյուրերի համար հարմարավետ պայմաններ ստեղծելու ակնկալիքով և թանգարանային զբոսաշրջությունը խթանելու նպատակով անհրաժեշտ է, թանգարանային գործունեության այլ ուղղություններին զուգահեռ, իրականացնել Սարդարապատի հուշահամալիրի Զանգաշտարակի զանգերի համակարգչային հնչեցումը: Ժամանակն է կյանքի կոչելու Ռաֆայել Իսրայելյանի մտահղացումները. Հուշապատի հրապարակում քանդվող-հավաքվող տրիբունաների տեղադրում և «հուշարձան-զբոսայգում հյուրանոցի» ստեղծում, որով կապահովվի զբոսաշրջությանն անհրաժեշտ ենթակառուցվածքների բարեկարգումն ըստ «Հոկտեմբերյանի հուշարձան-զբոսայգու թանգարանը և հյուրանոցը» թիվ 588 նախագծային առաջադրանքի, որ նախատեսում էր կառուցել վեց հարկանի աշտարակային մասով հյուրանոցը, սեղանատանը կից, արևելյան մասում՝ նույն կարմիր տուֆից: Հացատուն և Վարդավառ ռեստորաններում ավանդական կերակուրների պատրաստումը և մատուցումը այցելուին հնարավորություն կտան ծանոթանալ հայկական ազգային խոհանոցի առանձնահատկություններին: Սարդարապատյան թեմաներով և ազգագրական եզակի ու հազվագյուտ առարկաների կրկնօրինակների և հուշանվերների արտադրությունը թանգարանն ու համալիրը գովազդելու բացառիկ հնարավորություն կընձեռնի: Զբոսաշրջային

գրավչությունն ապահովելու համար կարելի է հուշահամալիրի տարածքում կազմակերպել ձիերով կամ հետիոտն տուրեր և էքսկուրսիաներ:

Զբոսաշրջության ոլորտի զարգացման համար կարևոր մշակութային միջավայրը, համապատասխան ենթակառուցվածքի ու սպասարկման համակարգի (փոխադրամիջոց, կապի ու հաղորդացության միջոցներ, հյուրանոց և ռեստորան, բանկոմատ և տերմինալ, կինոդահլիճ և համերգասրահ, հանգստյան գոտի) առկայությունը Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիրը և Հայոց ազգագրության թանգարանը կդարձնեն թանգարանային զբոսաշրջության յուրատեսակ կենտրոն:

ԱՐԱՄ ԳՐԻԳՈՐՅԱՆ
ՀՀ ԱԳՆ, Մշակույթի և հումանիտար համագործակցության վարչության խորհրդական

Լ. ԲԱՐՍԵՂՅԱՆԻ ՄՈՍԿՈՎՅԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

Հետադարձ հայացք գցելով Լավրենտի Բարսեղյանի հայանպաստ գործունեությանը, հասկանում ես, թե ինչ ահռելի աշխատանք է կատարել այդ անզուգական մարդը մասնավորապես թանգարանաշինության բնագավառում: Բավական է միայն նշել, որ նրա բացառիկ աշխատասիրության, նպատակամղվածության ու հայրենասիրության շնորհիվ մենք ունեցանք արդի լավագույն թանգարաններից երկուսը՝ Ազգագրության ու Հայոց ցեղասպանության թանգարանները, որոնց հիմնադիրն ու առաջին տնօրենը եղավ Լավրենտի Բարսեղյանը:

Չծանրանալով նշված թանգարանների ստեղծման ու գործունեության հետ կապված վիթխարի աշխատանքի մանրամասների վրա, ներկա հոդվածում կուզենայինք առանձնացնել Լ.Բարսեղյանի արդյունավետ ջանքերն Ազգագրության թանգարանի (այսուհետ ՀԱՊԹ) մասնաճյուղերի հետ կապված կարևորագույն ու խրթին հարցում: ՀԱՊԹ-ն ուներ վեց մասնաճյուղ, որոնք բոլորն էլ գտնվում էին Երևանից դուրս, իսկ մեկը՝ Հայաստանից երկու հազար կիլոմետր հեռավորության վրա՝ ԽՍՀՄ մայրաքաղաք Մոսկվայում: Ահա այս մասնաճյուղի ստեղծման ու գործունեության մասին էլ ուզում ենք պատմել ավելի մանրամասն: Համարձակորեն իր վրա վերցնելով հերթական մասնաճյուղի ստեղծման ու աշխատեցման հետ կապված բարդությունները, Լ. Բարսեղյանն ամուր ձեռքով սկսեց իրագործել նախանշվածը, ու գործն արագորեն առաջ գնաց: Հարկ է նշել, որ եթե նշված մասնաճյուղերը գտնվում էին Հայաստանում և առնչվում էին ազգագրությանը, ապա այն մարտահրավերը, որը նա ընդունեց շուրջ 33 տարի առաջ, շատ դժվար էր աղերսել ազգագրության հետ: Խոսքը գնում էր Մոսկվայում հայ-ռուսական բարեկամության թանգարան հիմնադրելուն:

Մոսկվայի կենտրոնում գտնվող Հայկական նրբանցք 2 (Армянский переулок 2) հասցեով փառահեղ առանձնատունը, ուր ներկայումս գործում է Ռուսաստանյան Դաշնությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունը, ստեղծման

օրվանից առնչություն է ունեցել հայերի ու Հայաստանի հետ, և հնչել է հայերեն լեզուն: 1815 թ., Ռուսաստանի մեծահարուստներ Լազարյանների (Եղիազարյանների, Լազարևների) ջանքերով, խոշոր ձեռնարկատեր ու հայրենասեր Հովակիմ Աղազարի Լազարյանի առանձնատանը, հիմնականում նրա ավագ եղբոր՝ Հովհաննես Լազարյանի միջոցներով հիմնվեց մի ուսումնական հաստատություն, որը կոչվեց Հայկական Լազարյան (Եղիազարյան) ուսումնարան: Լազարյանների մտահղացմամբ այն կոչված էր դառնալու Ռուսական Կայսրության՝ գլխավորապես հայ մանուկների լուսավորության օջախը: Հիմնադրման օրվանից այն եղել է տարրական ուսումնական հաստատության տիպի մասնավոր դպրոց, ուր ուսանել են միայն Լազարյանների կողմից որդեգրված երեխաները: Դպրոցի ուսումնական ծրագրի մակարդակը մի քանի տարի անց համապատասխանեցվել է ռուս գիմնազիաների ծրագրերին: Այստեղ հայերենից ու ռուսերենից բացի դասավանդվել են եվրոպական ու արևելյան մի քանի լեզուներ: Դպրոցում միաժամանակ դիմորդներ են կրթվել՝ համալսարան ընդունվելու համար: Ուսումնարանը եղել է նաև պաշտոյաների ու հայերենի ուսուցիչների պատրաստման դարբնոց: Հենց Հովակիմ Աղազարի Լազարյանն էլ եղել է նորաբաց ուսումնական հաստատության առաջին հոգաբարձուն մինչև (1826 թ.-ն):

1827-ին այն վերանվանվել է Արևելյան լեզուների Լազարյան ճեմարան, կամ, ըստ հայկական աղբյուրների, Լազարյան ճեմարան՝ գործելով Ժողովրդական կրթության Կայսերական նախարարության ենթակայության ներքո: 1830-ականներին ստացել է երկրորդ աստիճանի ուսումնական հաստատության կարգավիճակ՝ հնգամյա ուսուցմամբ: 1841 թ. Լազարյան ճեմարանին առնթեր հիմնվել է հոգևոր բաժին՝ հայ եկեղեցու սպասավորներ և հոգևոր դպրոցների ուսուցիչներ պատրաստելու համար: 1848 թ. կանոնադրությամբ ճեմարանը դասվել է պետական առաջին աստիճանի դպրոցների՝ լիցեյների շարքը, 8-ամյա ուսուցմամբ: Վերջին երկու դասարաններում դասավանդվել են արևելյան լեզուներ ու, նոր կանոնադրության համաձայն, Լազարյան ճեմարանին տրվել է ընդգծված արևելագիտական բնույթ, ուր պատրաստվել են թարգմանիչներ, դիվանագետներ, արևելյան լեզուներ ուսուցանողներ: 1851 թ. բացվել է ճեմարանի նախապատրաստական բաժինը, որտեղ ուսումնառելուց հետո երեխաներն ընդունվում էին ճեմարանի գիմնազիական բաժին:

Իր գոյության ողջ ընթացքում ճեմարանը պահպանել է հայկական դիմագիծը՝ առավել ևս, որ ինչպես մանկավարժների, այնպես էլ սաների մեծ մասը եղել են հայեր: Տարբեր տարիներին ճեմարանում դասավանդել են Հարություն Ալամդարյանը, Սարգիս Կարնեցին, որն, ի դեպ, ճեմարանի առաջին ռեկտորն էր, Միքայել Նալբանդյանը, Սմբատ Շահազիզը, անվանի արևելագետ, բանաստեղծ-թարգմանիչ, ակադեմիկոս Ֆեդոր Կորշը, Ռուսաստանում արևելագիտական կրթության հիմնադիր, 1897-1911 թթ. ճեմարանի ռեկտոր Վսևոլոդ Միլլերը և այլոք, որոնց մի մասը ճեմարանականներ էին: Լազարյան ճեմարանում տարբեր ժամանակներում ուսումնառել են հայ անվանի բանաստեղծներ՝ Վահան Տերյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Ռաֆայել Պատկանյանը, Գևորգ Դոդոխյանը, մանկավարժներ՝ Գևորգ Աբովյանը, Ամիրան ու Սեդրակ Մանդինյանները, նկարիչներ՝ Վարդգես Սուրենյանցը, Եղիշե Թադևոսյանը, Հովհաննես Պատկանյանը, դերասաններ ու թատերական գործիչներ՝ Ռուբեն Սիմոնովը, Սարգիս Տիգրանյանը, Էմին Տեր-Գրիգորյանը, Գևորգ Չուբարը, պետական ականավոր գործիչ՝ Ալեքսանդր Մյասնիկյանը, գիտնականներ՝ Յոլակ Խանզադյանը, Պողոս Մակինցյանը, Կարապետ Մելիք-Օհանջանյանը և այլոք: Ճեմարանի սաներ են եղել ռուսական մշակույթի այնպիսի հսկաներ, ինչպիսիք էին Լև Տոլստոյը, Իվան Տուրգենևը, Կոնստանտին Ստանիսլավսկին, Ալեքսանդր Գլինկան, Յուրի Վեսելովսկին և այլոք: 1834 թ. ճեմարան է այցելել ռուս մեծագույն բանաստեղծ և այն ժամանակ պետական պաշտոնյա Ալեքսանդր Պուշկինը:

1919 թ. մարտի 4-ի դեկրետով Լազարյան ճեմարանը վեր է ածվել Հայկական, այնուհետ՝ Առաջավոր Ասիայի ինստիտուտի, մեկ տարի անց՝ Արևելյան կենդանի լեզուների կենտրոնական ինստիտուտի, հաջորդ տարի՝ Մոսկվայի արևելագիտական ինստիտուտի, իսկ 1921 թ. հոկտեմբերին ընդունված որոշմամբ ճեմարանի շենքում ստեղծվել է Խորհրդային Հայաստանի մշակույթի տուն ու տրամադրվել Հայկական ԽՍՀ-ին: 1977 թ. այնտեղ է տեղակայվել Հայկական ԽՍՀ Մինիստրների Խորհրդի մշտական ներկայացուցչությունը, իսկ 1994-ից ցայսօր՝ Ռուսաստանում ՀՀ դեսպանությունը: Ահա այս փառապանծ շենքի տարածքում պետք է բացվեր Հայաստանի ազգագրության պետական թանգարանի հերթական ու ամենահեռավոր մասնաճյուղը:

Հայկական ՍՍՀ Մշակույթի նախարարության 1985 թ. փետրվարի 25-ի թիվ 92 հրամանի առաջին կետում ասված է. «Ի կատարումն Հայկական ՍՍՀ Մինիստրների խորհրդի համապատասխան հանձնարարության, Մոսկվա քաղաքի «Արմյանսկի» նրբանցքում գտնվող Լազարյանների ինստիտուտի և նրան հարակից շենքերում հատկացված մակերեսների վրա կազմակերպել հայ և ռուս ժողովուրդների բարեկամությանը նվիրված մշտական թանգարանային ցուցադրություն՝ հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը:» Հրամանը, որը զարկ տվեց ապագա թանգարանի ստեղծման նախապատրաստական աշխատանքներին, ստորագրված էր ՀՍՍՀ այն ժամանակվա մշակույթի փոխնախարար Մարատ Խարազյանի կողմից:

Մասնաճյուղի համար անհրաժեշտ էր գտնել մոսկվայաբնակ հայազգի տնօրեն, որը պետք է կազմեր ապագա ցուցադրության հայեցակարգն ու անհրաժեշտ իրերի ցուցակը, հավաքեր ապագա աշխատակազմը: Տողերիս հեղինակն այն ժամանակ ապրում ու աշխատում էր Մոսկվայում, որի համար մեծագույն պատիվ ու բարձր պատասխանատվություն էր 1985-ի հունվարին ստանալ Լավրենտի Բարսեղյանի առաջարկը՝ վերոհիշյալ աշխատանքները ստանձնելու հանձնարարականով: Ապագա թանգարանը նախատեսված էր տեղակայել հանրահայտ առանձնատանը կից, ռուսական ուշ միջնադարի ոճով կառուցված

17-րդ դարի՝ Ալեքսեյ Միխայլովիչ ցարի ժամանակների շինությունում, որը հիմնովին վերանորոգման կարիք ուներ: 1985 թ. հունվարի 31-ին մեկնեցի Երևան, ուր հանդիպելով Լավրենտի Բարսեղյանին, ստացա այդ պատվավոր հանձնարարականը: Նա հայտնեց, որ շուտով Ազգագրության թանգարանում կստեղծվի «Հայ-ռուսական բարեկամության թանգարանի կազմակերպման» բաժին՝ իմ գլխավորությամբ: Այն պետք է համալրվեր աշխատակիցներով ու մեկ ամսվա մեջ պատրաստեր ապագա ցուցադրության նախագիծը: Լ.Բարսեղյանի խոսքն ու գործը միշտ համընկնում էին, ու շատ չանցած բաժինը ստեղծվեց: Շատ շուտով այն համալրվեց ևս երկու աշխատակիցներով՝ Արտաշես Կրկյաշարյանով ու Արմեն Մակյանով, և սկսվեց ապագա թանգարանի ցուցադրության հայեցակարգի նախապատրաստումը: Նախատեսվում էր ցուցադրությունը սկսել 1366 թ.՝ հիմք ընդունելով ռուսական սկզբնաղբյուրներում ռուսաստանաբնակ հայերի մասին առաջին հիշատակությունը: Նույն թվի մայիսին ՀԱՊԹ գիտխորհուրդը քննարկեց ու

հաստատեց հայեցակարգի նախնական տարբերակը, սակայն այդ ընթացքում պարզվեց, որ Մոսսովետն առայժմ չի կարող միջոցներ տրամադրել հայ-ռուսական բարեկամության թանգարանի համար նախատեսված XVII դ. շինությունը վերանորոգելուն, ու Լ.Բարսեղյանի պրպտուն միտքն անմիջապես նոր ուղղություն ընտրեց: Հաշվի առնելով Լազարյանների վեհանձն տոհմի բացառիկ վաստակը հայ ժողովրդի ու հայ ազգային-ազատագրական պայքարի համար և, ի նկատի ունենալով, որ երկար տարիներ այդ հանրահայտ շենքում գործել է Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանը, որոշվեց ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի մշտական ներկայացուցչության շենքի երկու սենյակներում բացել Լազարյաններին ու ճեմարանին նվիրված ցուցադրություն, իսկ ներկայացուցչության ընդարձակ և չօգտագործվող սրահներում շարունակաբար կազմակերպել հիմնականում հայ նկարիչների ու քանդակագործների ստեղծագործությունների ժամանակավոր ցուցահանդեսներ:

Սկսվեց աշխատանքային մի նոր փուլ՝ կապված Լազարյաններին նվիրված ցուցադրույթի կազմակերպման, ճեմարանի սաներին առնչվող նյութերի հավաքման, Լազարյանների հայտնի գրադարանի վերականգնման, ինչպես նաև ժամանակավոր ցուցահանդեսների վերաբերյալ պայմանավորվածությունների ձեռքբերման հետ: Աշխատանքը մեկնարկ վերցրեց հայկական արխիվներում, իսկ զուգահեռ նաև սկսվեց Լազարյան ճեմարանի կնիք ունեցող գրքերի փնտրտուքը գլխավորապես հանրային (այժմ ազգային) գրադարանի փոշեպատ գրապահոցներում: Լավրենտի Բարսեղյանը, որն այդ ժամանակ համատեղության կարգով գլխավորում էր նաև Երևանի Մարզահամերգային համալիրը, ինչը խլում էր նրա աշխատանքային ժամանակի առյուծի բաժինը, միևնույն է, հնարավորություն էր գտնում համակարգելու նաև ՀԱՊԹ-ն, ու այդ թվում մեր բաժնի գործունեությունը, խստորեն հետևում կատարվող աշխատանքների ժամանակացույցին, հետաքրքրվում այն ամենով, ինչ կապված էր նյութերի ու գրքերի հավաքման, ապագա ցուցահանդեսի կազմակերպման հետ: Աշխատանքի ընթացքում ակնհայտ դարձավ, որ Լազարյաններին աղերսվող նյութերը ավելի շուտ անհրաժեշտ է որոնել ու հավաքագրել Մոսկվայում և Լենինգրադում (այժմ՝ Սանկտ-Պետերբուրգ): ՀՍՍՀ մշակույթի նախարար Յուրի Մելիք-Օհանջանյանի (1985-1990 թթ.) 1986 թ. հունիսի

18-ի թիվ 296 հրամանով[1] տրվեց թանգարանի անմիջական կազմակերպման աշխատանքների մեկնարկն արդեն Մոսկվայում:

1986 թ. մայիսի 6-ին, Երևանում հավաքագրված նյութերով ու գրքերով բեռնավորված, մեկնեցի Մոսկվա, ուր բացվելու էր մոսկովյան մասնաճյուղի գործունեության հետ կապված նոր էջը: Մոսկվայում ՀԽՍՀ կառավարության այն տարիների մշտական ներկայացուցիչ Էդուարդ Հայկազյանը, մեծ պատրաստակամությամբ ընդառաջելով ապագա թանգարանի բոլոր կարիքների բավարարմանը, անհապաղ համապատասխան սենյակներ տրամադրեց թե՛ աշխատակիցների, թե՛ առաջիկա ցուցահանդեսների համար: Սկսվեց Լազարյաններին նվիրված ցուցադրության, ինչպես նաև գրադարանի համար անհրաժեշտ նյութերի ու գրքերի հավաքագրումը: Հավելենք, որ գրադարանը դառնալու էր ապագա ցուցադրության կարևոր բաղադրամասերից մեկը:

Ցանկացած թանգարանի, թեկուզև ժամանակավոր ցուցադրության կազմավորման մեխը նյութերի, ասել է թե ապագա ցուցանմուշների հավաքագրումն է, մի աշխատանք, որը պահանջում է հետևողականություն, դիվանագիտական ճկունություն, վերջնական նպատակին հասնելու անկոտրում կամք և այլն: Իհարկե, մեծ ժամանակ ու համբերություն է պահանջվում զանազան արխիվներում անհրաժեշտ նյութերի փնտրտուքի համար, սակայն էլ ավելի դժվար է նյութեր ստանալ անհատ անձանցից, ովքեր, շատ հաճախ, մեծ դժկամությամբ են բաժանվում արդեն մահկանացուն կնքած իրենց հարազատներին առնչվող նյութերից: Այնուամենայնիվ հաջողվեց որոշակի նվաճումների հասնել այս ասպարեզում: Ամենամեծ «ավարը» ձեռք բերվեց մերձմոսկովյան Պուշկինո քաղաքում, ուր բնակվում էր ռուս ականավոր արևելագետ-թյուրքագետ, մանկավարժ, պրոֆեսոր, Մոսկվայի պետական համալսարանի թյուրքագիտության ամբիոնի բազմամյա վարիչ, ՌՍՖՍՀ գիտության վաստակավոր գործիչ, Մոսկվայի համալսարանում ույգուրերեն լեզվի ամբիոնի հիմնադիր, Լազարյան ճեմարանի սան Վլադիմիր Նասիլովի (նկ. 7) այրին՝ Նինա Դմիտրիևնա Նասիլովան, ով ապագա ցուցադրության

[1] Հրամանում ասվում էր. «Մոսկվա քաղաքում, նախկին Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի շենքում (հասցե՝ Արմյանսկի նրբանցք 2) հիմնել «Ռուս-հայկական բարեկամության թանգարան»՝ որպես Հայաստանի ազգագրության պետական թանգարանի մասնաճյուղ»:

համար սիրահոժար տրամադրեց լուսահոգի ամուսնու նյութերը: Խորհրդային ժամանակների ականավոր թյուրքագետներից մեկի արխիվի ձեռքբերումը մեծ հաջողություն էր Լազարյանների ցուցադրության համար:

Հատուկ արժեք է ներկայացնում Արևելյան լեզուների Լազարյան ճեմարանի հովանավոր Հովհաննես Հովակիմի Լազարյանի (1786-1858 թթ.) (նկ. 2) նամակը ճեմարանի վարչությանը, որով նա խնդրում է հայոց լեզվի ուսուցիչ նշանակել Միքայել Նալբանդյանին (նկ. 5): Այս փաստաթղթի պատճենը հաջողվեց ստանալ Մոսկվայի պետական պատմական արխիվից: Ասենք, որ Նալբանդյանը Լազարյան ճեմարանում հայոց լեզու է դասավանդել 1853-1858 թթ.:

Մոսկովյան նույն արխիվից հայթայթվեց հայ ականավոր բանաստեղծ, հրապարակախոս և բանաստեղծ Սմբատ Շահազիզի եղբորորդու՝ հայ և խորհրդային գրականագետ, պատմաբան, ազգագրագետ, մանկավարժ, պատմական գիտությունների դոկտոր (1944 թ.), ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ (1946 թ.) Երվանդ Շահազիզի (նկ. 3) վկայագիրն այն մասին, որ նա, 1879 թ. Լազարյան ճեմարանն ավարտելուց հետո, նշանակվել է Նախիջևան-Բեսարաբյան հոգևոր սեմինարիայում որպես ուսուցիչ:

Առանձին արժեք են ներկայացնում ԽՍՀՄ պետական պատմական արխիվում հայտնաբերված՝ հայ ականավոր արևելագետ, փիլիսոփա, խմբագիր և մանկավարժ, 1849-1869 թթ. Լազարյան ճեմարանում դասավանդած Ստեփանոս Նազարյանի (նկ. 4) նամակների պատճենները:

Լազարյանների ցուցադրության համար անկասկած կարևորում ենք տարբեր տարիներին ճեմարանում իրենց ուսումն առած այնպիսի անձանց հետ կապված փաստաթղթերը, ինչպիսիք են՝ հայ մեծ բանաստեղծ Վահան Տերյանի 1906 թ. մայիսի 29-ին ստացված հասունության ատեստատը, մանկավարժ, գրական-թատերական գործիչ Սեդրակ Մանդինյանի (1844-1915 թթ.) ճեմարանի 3-րդ դասարանում ցուցաբերած առաջադիմության թերթիկը, պատմաբան և մանկավարժ Խաչատուր Քուչուկ-Հովհաննիսյանի (1819-1919 թթ.) նամակները, հայ անվանի գիտնական, բանասեր, հայագետ-արևելագետ, թարգմանիչ, ՀԽՍՀ գիտության վաստակավոր գործիչ, ակադեմիկոս Կարապետ Մելիք-Օհանջանյանի (1893-1970 թթ.), հայտնի լեզվաբան, թյուրքագետ, ստուգաբան, մանկավարժ, գիտության տաղանդաշատ

կազմակերպիչ Երվանդ Սևորդյանի (1901-1978 թթ.), հեղափոխական գործիչ Ստեփան Չալաբյանի (1896-1921 թթ.), թյուրքագետ, լեզվաբան Վերա Վեշչիլովայի և այլոց՝ Լազարյան ճեմարանում ուսանելը հավաստող նյութերը: Մոսկովյան պատմական արխիվում հանդիպեցինք նաև գրականագետ, հայագետ, մանկավարժ, լեզվաբան, բանասեր, հայր և որդի Կարապետ (1864-1915 թթ.) և Հովսեփ (1890-1964 թթ.) Կուսիկյաններին առնչվող նյութերին, որոնց պատճենները նույնպես համալրեցին Լազարյանների ցուցադրության շտեմարանը:

Հատուկ ուզում ենք նշել Ելիզավետա I Կայսրուհու 1742 թ. ապրիլի 15-ի հրովարտակը՝ Թերեքի շրջանում մետաքսի գործարան հիմնելու և տեղի հայերին առանձին արտոնություններ շնորհելու մասին, ինչպես նաև Նոր-Նախիջևանի հայությանո իր նախորդների տրված արտոնությունները վերահաստատելու մասին Ալեքսանդր I կայսեր հրովարտակների (1819 թ.) ճշգրիտ պատճենները, որոնք ժամանակին պահվել են Լազարյան ճեմարանում: Այս արժեքավոր փաստաթղթերը ևս հայթայթվել են ԽՍՀՄ պետական պատմական արխիվում:

Պատմական բացառիկ արժեք ներկայացնող նյութերից նշենք նաև Լազարյան ուսումնարանի 1817 թ. կանոնադրությունը, հայ մեծանուն դերասան Պետրոս Ադամյանի 1883-1884 թթ. արխիվը, 1891 թ. ճեմարանական բոլոր աշակերտների խմբակային, բարձրորակ լուսանկարների ալբոմը, Լազարյան ճեմարանի գերբը, Ճեմարանի հոբելյանական հանձնաժողովի նամակը Հովհաննես Թումանյանին, 1850-ականների ռուսական մամուլի հրապարակումները Լազարյան ճեմարանի մասին և այլ նյութեր:

Ոչ պակաս արժեքավոր ձեռքբերում ունեցանք Էրմիտաժից, ուր պահվում էին Լազարյանների տոհմի երևելիների դիմանկարները: Վերջիններիս ձեռքբերման հարցում անգնահատելի աջակցություն ցուցաբերեց Էրմիտաժի տնօրեն, մեծանուն գիտնական-հնագետ, հայագետ, հայ ժողովրդի մեծ բարեկամ Բորիս Պիոտրովսկին (1908-1990 թթ.), ում ենթակա ֆոնդապահներն ամեն կերպ ձգտում էին արգելակել դիմանկարների փոխանցումը: Պիոտրովսկին նրանց բացատրեց, որ դիմանկարները մեկնում են այն հաստատություն, որը հիմնել ու զարգացրել է հենց Լազարյանների ազնվազարմ տոհմը, ինչը վերջ տվեց բոլոր վեճերին ու արգելքներին: Շնորհիվ Բ. Պիոտրովսկու (նկ. 6), ապագա ցուցադրությունը հարստացավ հետևյալ անձանց

դիմանկարներով՝ Ճեմարանի երկրորդ հոգաբարձու (1826-1858 թթ.) Հովհաննես Հովակիմի Լազարյանի, երրորդ հոգաբարձու (1858-1871 թթ.) Քրիստափոր Հովակիմի Լազարյանի, ինչպես նաև վերջինիս վաղամեռիկ որդի Հովհաննես Լազարյանի (1844-1850 թթ.), որի մահով ընդհատվեց տղամարդկանց գծով Լազարյանների տոհմը: Վերջին երկու դիմանկարները պատկանում էին XIX դ. ամենահայտնի ռուս դիմանկարիչներից մեկի՝ Սերգեյ Զարյանկոյի վրձնին:

ՀՍՍՀ Մշակույթի փոխնախարար Մարատ Խարազյանի մեկ այլ՝ 1986 թ. սեպտեմբերի 5-ի թիվ 403 հրամանի համաձայն, «ՀԱՊԹ Մոսկվայի մասնաճյուղը հարստացնելու, «Լազարյան ճեմարան» թեմատիկ ցուցադրությունը կազմակերպելու նպատակով...» Հայաստանի պետական պատկերասրահից Ազգագրության թանգարանին հանձնվեց հայ և ռուս նկարիչների երկու տասնյակից ավել աշխատանք, որոնց թվում էր նաև հայ ազատագրական շարժման գործիչ, Ռուսաստանյան կայսրության իսկական պետական խորհրդական, խոշոր արդյունաբերող-կալվածատեր Հովհաննես Աղազարի Լազարյանի (1735-1801 թթ.) դիմանկարը (նկ. 1), մի մարդու, որի միջոցներով մի շարք հայկական դպրոցներ են բացվել Կայսրության տարբեր քաղաքներում, իսկ նրա մահից 14 տարի անց կառուցվել է Լազարյան ճեմարանը (նկ. 8):

Լազարյանների մասին ցուցադրության մեջ տեղ գտան նաև Հովհաննես Աղազարի Լազարյանին շնորված բարձրագույն երկու շնորհակալագրեր, որոնցից մեկը տրվել էր 1786 թ. սեպտեմբերի 22-ին անձամբ Եկատերինա II Կայսրուհու կողմից առ այն, որ նրան՝ կոլեգիալ խորհրդական (коллежский советник) Իվան Լազարևին (Հովհաննես Լազարյանին), ծառայության մեջ ցուցաբերած անբասիր ծառայության ու ջանասիրության համար շնորհվում է հետևակային գնդապետի աստիճան, ինչը Ռուսական կայսրությունում XVIII դ. վերջի շատ բարձր ու պատվավոր կարգ էր, ինչպես նաև 21. 04. 1792 թվակիր շնորհակալագիրը Յարոսլավլի տեղական կառավարման խորհրդի կողմից՝ ազնվականական տոհմածառը կազմելու համար:

Լազարյան ճեմարանի գրադարանի համալրումը, ավելի ճիշտ՝ վերադարձն իր բնօրրան շարունակվեց նաև Մոսկվայում. ԽՍՀՄ ԳԱ Արևելագիտության, Ասիայի և Աֆրիկայի երկների, Միջազգային հարաբերությունների մոսկովյան ինստիտուտների

գրադարաններից հայտնաբերվեցին ու հետ վերադարձվեցին Լազարյան ճեմարանի կնիքը կրող մի քանի տասնյակ արժեքավոր գրքեր, որոնք համալրեցին խորհրդային տարիներին ցաք ու ցրիվ եղած հանրահայտ գրադարանի գոնե մի մասը:

Ինչպես նշել ենք, նախկին Լազարյան ճեմարանի դահլիճներում սկսեցինք կազմակերպել հիմնականում հայ արվեստագետների ստեղծագործությունների ժամանակավոր ցուցահանդեսներ, որոնք ոչ միայն մեծ հետաքրքրություն էին առաջացնում այցելուների մեջ, այլև ծառայում հայ կերպարվեստի տարբեր ուղղությունների հանրահռչակմանը՝ արվեստի սիրահարների մոսկովյան խստապահանջ շրջանակներում:

Բավական է նշել, որ երկու տարվա ընթացքում կազմակերպվեցին նկարիչներ Վարուժան Վարդանյանի, Հակոբ Անանիկյանի, Ռոբերտ Խաչատրյանի, Զուլում Գրիգորյանի, քանդակագործ Յուրի Պետրոսյանի, հայ խեցեգործների ստեղծագործությունների ժամանակավոր ցուցահանդեսներ: Առանձին ոգևորություն առաջացրեց մանրադիտակային քանդակների ու փորագրությունների անզուգական վարպետ, երաժիշտ Էդուարդ Ղազարյանի զարմանահրաշ աշխատանքների ցուցադրությունը: Կազմակերպվեց նաև «Հայաստանը լեհ նկարիչների աչքերով» ժամանակավոր ցուցահանդեսը: Այդ միջոցառումները սովորաբար ուղեկցվում էին տարբեր համույթների համերգներով: Մասնավորապես մեծ հաջողություն ունեցավ երիտասարդ խմբավար Արթուր Վերանյանի գլխավորած «Երևան» երգչախմբի ելույթը: Գլխավոր նպատակը, սակայն, Լազարյաններին ու ճեմարանին նվիրված թեմատիկ ցուցադրության կազմակերպումն էր, որի համար անհրաժեշտ նյութերի ու ցուցանմուշների հավաքագրումը հիմնականում ավարտվեց 1988 թ. հունիսի սկզբին: Ցուցադրությունը հավուր պատշաճի կազմելու նպատակով Երևանից ժամանեց հայտնի նկարիչ-ձևավորող Ֆրիդոն Ասլանյանը և սկսվեց եռանդուն աշխատանքի ավարտական փուլը:

Նշեմ, որ Մշակույթի կենտրոնում (ինչպես ժամանակավորապես սկսեց անվանվել ապագա թանգարանը) այդ պահի դրությամբ աշխատում էին մոսկվայաբնակ մեր հայրենակիցներ Կարինե Մաթևոսյանը, Աննա Գևորգյանը, Նաթելլա Պողոսյանը, Հասմիկ Գրիգորյանը, Անահիտ Չախալյանցը, Ենովք Լազեանը,

Արտյոմ Մարտիրոսյանը և այլոք, որոնք իրենց ակտիվ լուման ներդրեցին վերոհիշյալ ցուցահանդեսների, ինչպես նաև Լազարյանների ցուցադրության ստեղծման գործում:

Լազարյաններին նվիրված ցուցադրության մոնտաժի իրագործմանն աջակցելու նպատակով ՀԱՊԹ-ից Մոսկվա գործուղվեցին ցուցադրությունների կազմակերպման բաժնի վարիչ Նորա Դայանը, ինչպես նաև ձևավորող Տիգրան Հովհաննիսյանը, որոնք ևս իրենց գործուն մասնակցությունը բերեցին ապագա ցուցադրության կազմակերպմանը: 1988 թ. օգոստոսի 8-ին հանդիսավորությամբ բացվեց Լազարյաններին ու Ճեմարանին նվիրված թեմատիկ ցուցադրությունը, որն իր բովանդակությամբ և յուրահատուկ ձևավորումով գրավեց բացմանը ներկա այցելուների ուշադրությունը, արժանանալով թե' նրանց և թե' մոսկովյան մամուլի դրվատանքի խոսքերին: Մասնավորապես, բավական մեծ ծավալի հոդված լույս տեսավ մշակութային հարցերը լուսաբանող ԽՍՀՄ գլխավոր «Советская культура» շաբաթաթերթում:

Լավրենտի Բարսեղյանը, որն այդ ժամանակ արդեն աշխատում էր ՀԽՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր պատմության և մշակույթի հուշարձանների պահպանության և օգտագործման գլխավոր վարչության պետ, չէր դադարում հետաքրքրվել իր սկսած համարձակ նախագծի կենսագործմամբ և, ինչպես պատմում են, մեծ խանդավառությամբ էր ընդունել Լազարյանների թեմատիկ ցուցադրության ստեղծումն ու բացումը: Կյանքի հանգամանքների բերումով, Լազարյանների ցուցադրության բացումից անմիջապես հետո ստիպված եղա վերադառնալ Հայաստան:

Մշակութային կենտրոնը գոյատևեց ևս չորս տարի, սակայն արդեն փոթորկվում էր ղարաբաղյան շարժումը, Մշտական ներկայացուցչության շենքում հանգրվանել էին Սումգայիթի ջարդերից մազապուրծ մեր բազմաթիվ հայրենակիցներ և մշակութային կյանքը, բնականաբար, մղվել էր հետին պլան:

Երեք տարի անց Հայաստանը դարձավ անկախ պետություն, ինչին շուտով հետևեց Հայաստանի Հանրապետության Կառավարության 1992 թ. նոյեմբերի 28-ի թիվ 609 որոշումը՝ «Մոսկվայում Հայաստանի Հանրապետության մշակութային կենտրոնը Ռուսաստանյան Դաշնությունում Հայաստանի Հանրապետության Կառավարության մշտական ներկայացուցչության ենթակայությանը հանձնելու

մասին», իսկ 1994 թ. օգոստոսին Հայկական նրբանցքի այդ հանրահայտ շենքում հաստատվեց Ռուսաստանյան դաշնությունում ՀՀ դեսպանությունը (նկ. 9): Քանի որ վերջինս ռեժիմային հիմնարկ էր, ապա այցելուներն այլևս չէին կարող ազատ ելումուտ ունենալ այնտեղ ու դիտել Լազարյաններին նվիրված թեմատիկ ցուցադրությունը, առավել ևս բացառվում էր ժամանակավոր ցուցահանդեսների կազմակերպումը:

Ցուցադրությունն ու գրադարանը ցայսօր մասնակիորեն գոյություն ունեն նույն դահլիճներում՝ փակ վիճակում, իսկ ցուցադրության մեջ տեղ չգտած նյութերն ի պահ փոխանցվել են ՀԱՊԹ, որն այժմ կրում է՝ «Սարդարապատի հերոսամարտի հուշահամալիր, հայոց ազգագրության և ազատագրական պայքարի պատմության ազգային թանգարան» անունը:

Լավրենտի Բարսեղյանը, անշուշտ, եղավ այն հզոր խթանը, որի շնորհիվ իրականացվեցին վերը նկարագրված աշխատանքները, քանզի ավելի քան համոզված ենք, դժվար թե մեզանում գտնվեր որևէ մեկը, ով համարձակություն կունենար հանձն առնելու նման խրթին ձեռնարկումը: Նա մի սիրած խոսք ուներ, որ հաճախ կրկնում էր իր աշխատակիցներին. «Պետք է սրտացավ լինել»: Բարսեղյանն արդարացիորեն գտնում էր, որ առանց այդ հատկանիշի անհնար է լավ աշխատանք կատարել և, համոզված ենք, որ այսօր նրա այդ բառերն ավելի քան այժմեական են:

նկ. 1 Հովհաննես Աղազարի Լազարյան

նկ. 2 Հովհաննես Հովակիմի Լազարյան

նկ. 3 Երվանդ Շահազիզ

նկ. 4 Ստեփանոս Նազարյան

նկ. 5 Միքայել Նալբանդյան

նկ. 6 Բ. Բ. Պիոտրովսկի

նկ. 7 Վ. Մ. Նասիլով

նկ. 8 Լազարյան ճեմարանը XIX դարում

նկ. 9 Լազարյան ճեմարանի համալիրն այսօր

ԱՇԽՈՒՆՋ ՊՈՂՈՍՅԱՆ
ՀՀ Մշակույթի նախարարության «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնագետ

ՀԱՅՈՑ ԳՈՐԳԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ, ՑՈՒՑԱԴՐՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՄԱՆ ԹԱՆԳԱՐԱՆ - ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայոց մշակութային համակարգի կարևոր ու ավանդական բնագավառների թվում առանձնակի է գորգագործական մշակույթը: Պատմական Հայաստանի հնագույն բնակատեղիների պեղումներերից հայտնաբերված գործվածքի ու դրա պատրաստման միջոցների նմուշները վկայում են որ Հայկական լեռնաշխարհում ոստայնանկությունը՝ այդ թվում նաև գորգագործությունը հայտնի էր մթա. IV- III հազարամյակներից: Ըստ էության, հնամենի գորգը ծիսապաշտամունքային նշանակության առարկա էր՝ սրբազանացված տարածք, որի վրա իրավունք ունեին կանգնել կամ նստել գերագույն քուրմը, ցեղի առաջնորդը կամ թագավորը: Հայտնի է, որ աշխարհիկ ու հոգևոր վերնախավին ամենօրյա և արարողակարգային առարկաներով ապահովելու համար խոշոր տաճարական համալիրներին ու արքունիքներին կից առաջավորասիական երկրներում ի սկզբանե գոյություն ունեին հատուկ արհեստանոցներ: Դրանցում ստեղծագործող համապատասխան մասնագետների ջանքերով ստեղծվում էին գորգի ու այլ գործվածքեղենի տեսակներ, մշակվում էին տեխնոլոգիաներ, որոնք այս կամ այն ճանապարհով հետագայում հասու էին դառնում նաև այդ արհեստանոցներին մերձակա բնակավայրերի տնայնագործներին: Այդ ավանդույթը կար նաև միջնադարյան Հայաստանում:

Արաբական խալիֆաթի ողջ տարածքում հայկական գորգը մեծ հեղինակություն վայելող մշակութային արժեք էր և հարստության, անհատի կողմից հասարակության մեջ գրաված դիրքի կարևորության չափանիշ: Այդ պատճառով էլ, հայկական գորգերն առավել հարգի էին և կարևոր գործոն՝ որպես վերնախավային նվիրատվություններ: Ժամանակակիցներն այդ պարագան բացատրել են հայկական գորգերին բնորոշ գունային հարուստ երանգների ներդաշնակությամբ ու գեղազարդման մանրամասերի ինքնատիպությամբ, հումքի լավագույն հատկություններով, ինչպես նաև կատարման տեխնիկայի բարձր մակարդակով: Արաբական աղբյուր-

ները վկայում են, որ հայկական գորգերին առանձնակի հռչակ էին հաղորդում հանրահայտ «որդան կարմիր» ներկանյութից ստացված կարմիր գույնի երանգները: Միաժամանակ, հայոց գորգերն առանձնանում են հորինվածքների ու առանձին նախշերի ոճավորվածությամբ: Դրանք փաստորեն խորհրդանշաններ են, ու իմաստավորում են հայոց ավանդական, հնամենի ծիսապաշտամունքային պատկերացումների մի ամբողջ շարք՝ կապված կյանքի ու բնության հավերժության ու առհասարակ, աշխարհընկալման համակարգի հետ: Ուստի պատահական չէ, որ մեր ժամանակներում էլ, հայոց մեջ գորգը մնացել է դեռևս ավանդական սովորույթների ու ծեսերի վերապրուկներով հարուստ հյուրընկալման, հարսանյաց ու թաղման արարողակարգերի բաղկացուցիչ տարր:

Անտարակույս է, որ հայոց գորգի երբեմնի հռչակն ու հեղինակությունը պայմանավորված է եղել անկախ պետականության ու նրա հովանու ներքո եղած իշխանական խոշոր տների, հոգևոր կենտրոնների գոյությամբ: Այդ պայմաններում էր հնարավոր «հայկական գորգ» հասկացության հայտնի լինելը Առաջավոր ու Կենտրոնական Ասիայի գորգագործական կենտրոններում: Հայերեն և օտարալեզու գրավոր աղբյուրներում եղած տեղեկությունները հնարավորություն են տալիս նշել, որ արաբական խալիֆաթի դարաշրջանում պատմական Հայաստանում գորգագործության հանրահայտ կենտրոններ էին Բարձր Հայքը, Վասպուրականը, Այրարատը, Արցախը, Սյունիքը, որոնք, ի դեպ, իբրև այդպիսին էլ մնացին մինչև XX դ. սկզբները, իսկ Արցախն ու Սյունիքը՝ մինչև մեր ժամանակները ներառյալ:

Իրավիճակն արմատապես փոխվեց հայոց պետականության անկումից ու պատմական Հայաստանի ժողովրդագրական նկարագրի կտրուկ փոփոխումներից հետո: Անկում ապրեց նաև գորգագործական մշակույթը: Արհեստանոցային գորգագործությունը պահպանվեց միայն Արցախում, Սյունիքում և ընդհանրապես պատմական Հայաստանի այն տարածաշրջաններում, որոնցում պահպանվել էին երբեմնի իշխանական տների թեկուզ և կիսանկախ մնացուկները: Իսկ տնայնագործական արտադրանքն էլ գորգի առևտրականները տարբերակում էին առևտրաշատ քաղաքների ու դրանց մերձակայքերում բնակություն հաստատած եկվոր մահմեդական ցեղերի անվանումներով: Հենց այդ անվանումներով էլ XVI-XVII դդ. պատմական Հայաստանում ստեղծված գորգերը եվրոպական շուկայում

ներկայացվում էին որպես վաչկատունների մշակույթ: Հայաստանում գորգագործության նոր վերելքի շրջանը XIX դ. երկրորդ կեսից մինչ XX դ. սկիզբն էր, երբ Արևելյան Եվրոպայում և ԱՄՆ-ում կտրուկ աճեց արևելյան գորգի պահանջարկն ու ավանդական գորգագործությամբ հայտնի տարածաշրջաններում ստեղծվեցին գորգագործական մանուֆակտուրաներ: Այդ ժամանակներից Արևելյան գորգը Եվրոպայում դառնում է ուսումնասիրման առարկա՝ խոշոր թանգարաններում ստեղծվում են գորգի հավաքածուներ, կազմակերպվում են ցուցահանդեսներ ու հրատարակվում են առաջին ուսումնասիրություններն ու ալբոմները: Սակայն կար մի շատ էական հանգամանք: Արևելյան գորգարվեստով հետաքրքրված հետազոտողները հիմնականում արվեստաբաններ ու արևելագետներ էին, որոնք բավականաչափ տեղյակ չէին գորգագործական տարածաշրջաններում ապրող ժողովուրդների պատմության ու տնտեսա-մշակութային հատկանիշների մասին: Այդ պատճառով նրանց մեծ մասը կուրորեն ընդունեց առևտրականների կողմից շրջանառության դրված անվանումները: Այդպիսով արևելյան, և մասնավորապես, կովկասյան ու պատմական Հայաստանի գորգագործական կենտրոններում ստեղծված գորգերի ծագումնաբանությունը, առաջին հերթին, կապվեց այդ տարածաշրջաններում հաստատված եկվորների հետ: Ըստ այդմ էլ հայկական գորգերի ու կարպետների բազմաթիվ տիպեր, սկզբից ևեթ, թյուրիմացաբար վերագրվեցին հենց այդ եկվորներին: Հետագայում, գորգագործությամբ հայտնի ժողովուրդների տնտեսական կենցաղին ու առհասարակ պատմությանն նվիրված ուսումնասիրությունների երևան գալուց հետո, թեև եվրոպացի ուսումնասիրողների մի մասի համար ակնհայտ դարձավ այդ անվանումների չհիմնավորված լինելու փաստը, այնուհանդերձ դրանք մնացին գիտական շրջանառության ոլորտում: Այդպիսիք են մասնավորապես «սելջուկյան գորգ», «քոչվորական գորգ», «մուսուլմանական գորգ» և «թուրքական գորգ» հասկացությունները, որոնք գիտական շրջանառության մեջ դրվեցին 1880-ական թթ., իսկ անցյալ դարի առաջին կեսերին էլ դարձան հիմնավոր տեսություններ: Գերմանացի և ամերիկյան թուրքամետ մշակութաբան-արևելագետների կողմից (Ֆ. Կարաբաչեկ, Վ. Բոդե, Ա. Ուֆամ-Պոոպ, Կ. Էրդման և այլոք) ստեղծված այդ տեսություններն ի սկզբանե նպատակաուղղված էին իսլամական, և մասնավորապես թուրք-սելջուկյան, մշակույթի նշանակության

ուռճացմանն ու դրա դերի չափազանցմանը: Այդպիսով, զարգացնելով պանթուրքիզ-մի գաղափարախոսությունը, սելջուկ- թուրքմենական և մոնղոլական քոչվոր ցեղերի Հայկական լեռնաշխարհ ներթափանցումը ներկայացվում է իբրև պատմական Հայաստանում և Փոքր Ասիայում տնտեսության ու մշակույթի զարգացման, իսկ որոշ արհեստագործությունների՝ մասնավորապես գորգագործության համար, նաև սկզբնավորման գործոն: Այդ ամենի արդյունքում էլ 1920-ական թթ. սկսած, թուրք ազգի ձևավորման գործընթացին զուգահեռ, Թուրքիայի պետական մարմինների կողմից բացառիկ ուշադրության արժանացավ Թուրքիայի ու թուրքերի պատմության ու մշակույթի ստեղծման խնդիրը: Դա դիտարկվեց որպես ստրատեգիական նշանակության հիմնահարց: Անհրաժեշտ էր փոխել միջազգային հանրույթի գիտակ-ցության մեջ արմատացած այն հիմնավոր պատկերացումը, ըստ որի տարածաշրջանում եկվոր թուրքի կերպարը խորհրդանշում է առաջին հերթին բարբարոսություն, ավեր ու եղեռն: Եվ այդ առումով հատկապես ընկալվեց ու կարևորվեց մշակութային բարձր վարկանիշ ունեցող գորգարվեստի նշանակությունը, մանավանդ որ այդ ասպարեզում արդեն իսկ կային որոշակի հաջողություններ: Շատ շուտով, պետական հովանու ներքո, թանգարաններում ստեղծվեցին գորգերի խոշոր հավաքածուներ, գիտահետազոտական կենտրոններ, համալսարանական ամբիոններ և հայտնվեց վերը ասված նպատակների իրականացմանն ուղղված գիտնականների մի խումբ (Օ. Ասլանապա, Շ. Եդկին, Բ. Բալփինար, Ն. Դիարբեքիրլի և այլոք): Դրանց ջանքերով էլ անընդհատ փորձ էր արվում ժխտել գորգագործությամբ հայերի ավանդարաբար զբաղվելու և այդ ասպարեզում որևէ նշանակություն ունենալու փաստը: Մյուս կողմից ադրբեջանցի ուսումնասիրող, ոչ անհայտ Լյաթիֆ Քերիմովը, 1980-ական թթ. սկզբներին հրատարակած մի շարք հատորներով, փորձելով հերքել **«հայկական գորգ»** հասկացությունն առհասարակ, Կովկասում հայտնի բոլոր տեսակի գորգերին հարմարեցրել է որոշակի թուրքական տեղանուններ, և դրանք ներկայացրել իբրև ադրբեջանցիների մշակութային ժառանգություն:

Այսպիսով, ակնհայտ է, որ գորգը, իբրև պատմամշակութային և տնտեսական բացառիկ կարևորություն ներկայացնող առարկա, շահագրգիռ երկրներում վաղուց ի վեր պետական հատուկ ուշադրության ոլորտում է: Հայ իրականության մեջ գորգը, որպես այդպիսին, կարևորվել էր Առաջին Հանրապետության ժամանակ, երբ 1920 թ.

սեպտեմբերի վերջերին Ալեքսանդրապոլում պետք է բացվեր Ժողովրդական գեղարվեստի ուսումնարան ու դրան կից տնայնագործական կոմիտեի գեղարվեստական-արդյունաբերական թանգարան: Հատկանշական է, որ այդ թանգարարանի համար արդեն ձեռք էին բերվել ավելի քան հարյուր գորգ և կարպետ:[1] Հայաստանի խորհրդայնացումից հետո գորգի պատմամշակութային նշանակությունը սկսվեց կարևորվել միայն 1970-ական թվականներց: Սա այն շրջանն էր, երբ «Հայգորգ» արտադրական միավորման նկարիչները ստեղծել և արտադրության մեջ էին ներդրել դասական վիշապագորգերի ավանդույթներով բնորոշվող գորգանկարներ: Նկատելիորեն բարձրացել էր գորգերի հանդեպ եղած հետաքրքրությունը, և այդ հարցում հատկապես շեշտվում էր հայոց գորգերն այլոց կողմից յուրացվելու հանգամանքը: 1970-ականների վերջերին հայ մշակույթի մի շարք նվիրյալների՝ մասնավորապես Գ. Խանջյանի, Հ. Շարամբեյանի, Լ. Բարսեղյանի, Դ. Վարդումյանի և հատկապես ՀԽՍՀ կառավարության նախագահի առաջին տեղակալ Ա. Կիրակոսյանի ջանքերով հայոց գորգի թանգարան հիմնելու հարցը դարձել էր կառավարության քննարկման առարկա: 1970-80-ական թթ. ստեղծվեցին բավականին հարուստ ու մեծաքանակ հավաքածուներ, այդ թվում Հայաստանի ազգագրության պետական թանգարանի՝ աշխարհում խոշորագույն-ներից մեկը հանդիսացող հավաքածուն, Հայաստանի ժողովրդական արվեստի թանգարանի հավաքածուն, հարյուրավոր գորգերով համալրվեց Հայաստանի պատմության պետական թանգարանի հավաքածուն: 1978 թ. տված իր հարցազրույցներից մեկում Հայաստանի նորաստեղծ Ազգագրության պետական թանգարանի հիմնադիր տնօրեն Լավրենտի Բարսեղյանը որոշակիորեն բարձրացրել էր հայոց գորգի թանգարան հիմնելու անհրաժեշտությունը:

Եվ ահա, 1980-ական թթ. սկզբներին, Հայաստանում գորգը կարևորելու և գորգի թանգարան ստեղծելու գաղափարը կարծես թե հասավ իր հանգուցալուծմանը: ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 3. 11. 1981 թ. թիվ 645 որոշումով գորգի թանգարանի համար հատկացվեց Էջմիածին քաղաքում՝ Մայր Աթոռի մերձակայքում գտնվող, 1913 թ. Հ. Մանթաշյանի միջոցներով կառուցված շենքը:

[1] **Ս. Վրացյան**, *Հայաստանի հանրապետություն*, Բեյրութ, 1958, էջ 433:

Ապագա թանգարանի պահանջները հաշվի առնելով, «Հայպետնախագիծ» ինստիտուտի թիվ 6 արվեստանոցում, ճարտարապետներ Հ. Պողոսյանի և Ա. Թարխանյանի ղեկավարությամբ կազմվել էր շենքի վերակառուցման նախագիծը: Դժբախտաբար շինարարական աշխատանքներն ավարտին չհասան ,և ֆինանսավորման բացակայության պատճառով 1989-90 թթ. կանգ առան: Շենքը բավականին տուժել էր նաև 1988 թ. երկրաշարժից: Ի հավելումն դրան, 1993 թ. ՀՀ Մշակույթի նախարարության հաշվեկշռից շենքը հանվեց և, իբրև սեփականություն, հանձնվեց Մայր Աթոռին: Այդպիսի ավարտ ունեցավ ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի 3. 11. 1981 թ. թիվ 645 որոշումը:

Մինչդեռ Հայաստանի ազգագրության պետական թանգարանի տնօրեն Լավրենտի Բարսեղյանի նպատակասլաց գործունեության և կառավարության կողմից կատարված ֆինանսական լուրջ հատկացումների շնորհիվ, Ազգագրության թանգարանում կարճ ժամանակահատվածում արդեն ստեղծվել էր վերը նշված ավելի քան երեք հազար միավոր պարունակող գորգերի ու կարպետների խոշորագույն հավաքածուն: Ապագա թանգարանը գիտաշխատողների առաջին կազմով ապահովելու նպատակով էլ թանգարանում ստեղծվել էր Գեղարվեստական գործվածքի բաժին ու նաև գորգերի վերականգնման լաբորատորիա: Ասենք, որ 2005 թ. սկսած թանգարանում գոյություն չունի այդ բաժինը, չկա գորգի մասնագետ, իսկ դրանից մի քանի տարի անց էլ աշխատանքից ազատվել են գորգ վերականգնողները:

Հասկանալի է, որ գործվածքին տրամադրված պահեստարանները բոլորովին էլ նախատեսված չեն եղել նման հավաքածուի տեղավորման ու պահպանման համար: Լավագույն դեպքում՝ դրանցում կարելի է տեղավորել ոչ ավել յոթ-ութ հարյուր գորգ ու կարպետ: Մինչդեռ դրանք ավելի քան երեք հազարն են ու պահվում են ծայրեծայր լցված, շատ խիտ դասավորած դարակներում: Այդ պայմաններում անհնար է ոչ միայն դրանց պատշաճ ուսումնասիրման ու ցուցադրման կազմակերպումը, այլ նաև հաշվառումն ու պահպանումը: Արդեն իսկ երեք շարքով իրար վրա դարսված գորգերն ու կարպետները ցեցերի ու կրծողների բազմացման հարմար տեղ են ու դրանց դեմ անզոր են կատարվող ախտահանումները: Մինչդեռ խոսքը գնում է պատմամշակութային մի բացառիկ հարուստ հավաքածուի մասին, որի նմանը նորից ստեղծելը գործնականում անհնար է:

Խնդրի հրատապությունն ու արդիականությունը հաշվի առնելով, 1995 թ. սկսած մենք ՀՀ կառավարությանը բազմիցս առաջարկել ենք անդրադառնալ հայոց գորգի թանգարան-գիտահետազոտական կենտրոն հիմնադրելու հարցին: Այդ հարցը դարձել էր նաև հասարակական քննարկումների առարկա և 2009 թ. ՀՀ նախագահին կից Հասարակական խորհրդի լիագումար նիստն ընդհանուր առմամբ հավանություն էր տվել այդ գաղափարին: Ըստ էության՝ խնդիրը քաղաքական կամքի մեջ է, որն առաջին հերթին պետք է դրսևորի ՀՀ մշակույթի նախարարությունը:

Գորգի թանգարան-գիտահետազոտական կենտրոնը, ըստ էության, միանգամայն նոր հնարավորություններ պետք է ընձեռի հայոց գորգարվեստի ուսումնասիրման ու նաև Հայաստանում գորգագործության զարգացման հետ կապված հիմնահարցերի լուծման գործում, քանի որ.

- Մեր պատկերացումներով, թանգարանը գորգի հավաքածուները պահելուց և ցուցադրելուց զատ, պետք է ունենա գիտահետազոտական պատշաճ ներուժ և դոնա հայոց գորգարվեստը համաշխարհային մշակույթի համակարգում արժևորելուն նպատակաուղղված հաստատություն:
- Գիտական ուսումնասիրությունների, թանգարաններում պահվող հավաքածուների կատալոգների, պատկերաշարերի և ալբոմների հրատարակություններով գիտական ու կոմերցիոն մասնագիտական շրջանակներին պետք է ներկայացնի հայոց գորգարվեստի ողջ համակարգը:
- Եղած պատմազգագրական հարուստ աղբյուրներով պետք է հիմնավորի Հայկական լեռնաշխարհը գորգարվեստի սկզբնավորման նախահայրենիքներից մեկը լինելու պարագան ու հայոց հնամենի հավատալիքներում գորգի՝ իբրև ծիսա-պաշտամունքային ֆենոմենի առկայության բացառիկ փաստը:
- Թանգարանին կից պետք է ունենա գորգի պահպանման ու վերականգնման արվեստանոց-լաբարատորիա, որտեղ պետք է վերականգնվեն պատմամշակութային կարևորություն ներկայացնող գորգերի ու կարպետների վնասվածքները և մշակվեն այդ աշխատանքները որակյալ կատարելու միջոցներ ու տեխնոլոգիական հնարքներ:
- Գորգի համաշխահային շուկայում ձեռագործ գորգերի մշտամնա պահանջարկը նկատի ունենալով, գորգի թանգարանը պետք է ունենա նաև գիտա-

արտադրական ուղղվածություն՝ գորգագործական փորձարարական արվեստանոց և օրգանական ներկանյութերի ստացման լաբարատորիա: Ընդ որում մենք կարևորում ենք օրգանական ներկերով ներկված և բրդե հենքաթելերով գործված բարձր պահանջարկ վայելող հայոց ավանդական գորգերի խմբաքանակային արտադրությունը, և այդ ասպարեզում միջազգային շուկայում տիրապետող դիրք գրավելն այնպես, ինչպես որ կար միջնադարում:

- Համագործակցելով հանրապետությունում գործող գորգագործական այլ ձեռնարկությունների հետ, և կենտրոնի վերը հիշատակված կառույցներում մշակված նոր գորգատեսակներն ու տեխնիկա-տեխնոլոգիական նորույթները ներդնելով զանգվածային արտադրության մեջ, ի վիճակի կլինի գորգագործական հարուստ ավանդույթներով հայտնի տարածքներում (Լոռի, Տավուշ, Գեղարքունիք, Զանգեզուր, Վայք, Արցախ - հիմնականում սահմանամերձ ու լեռնային շրջաններ) հիմնել գորգագործական մանր ձեռնարկություններ: Կայուն վճարվող աշխատատեղերի ստեղծումն իր նպաստը կբերի բնակչության տնտեսական վիճակի բարելավման, հիշատակված տարածքներից կատարվող արտագաղթի կասեցման և Հայաստանի ժողովրդագրական նորմալ քարտեզի ձևավորման գործընթացին:
- Ծրագրի լիակատար իրագործմամբ, մասնավորապես բրդե հենքաթելով գորգագործության ծավալումով, հնարավոր կդառնա հանրապետությունում ստեղծել տեղական բրդի սպառման կայուն շուկա, լուծել հանրապետության համար այդ խնդրահարույց հարցը, և առհասարակ, նպաստել բրդատու ոչխարաբուծության զարգացմանը:
- Կենտրոնն ի վիճակի պետք է լինի նաև կանոնակարգելու հնառճ գորգերի առևտուրը, մասնագիտացված ցուցասրահ-վաճառատների և աճուրդային կազմակերպությունների ստեղծման միջոցով: Իբրև ռազմավարական հիմնահարց պետք է դիտարկվի Հայաստանի՝ որպես գորգագործական մշակույթի ձևավորման նախահայրենիքներից մեկի, վերածումը նաև գորգի միջազգային առևտրի կենտրոնի:

Այսպես ենք պատկերացնում հայոց գորգագործական մշակույթի թանգարան - գիտահետազոտական կենտրոնի նկարագիրը:

ՀՈՒՓՍԻՄԵ ՊԻԿԻՉՅԱՆ
ԵՊՀ մշակութաբանության ամբիոն,
ՀՀ ԳԱԱ ԱԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՍԱՐԴԱՐԱՊԱՏՅԱՆ ՏԵՍԼԱԿԱՆԸ

Մեծանուն ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանի հեղինակած Սարդարապատի հերոսամարտի հիշատակը հավերժացնող հուշահամալիրի տարածքում (ՀՀ Արմավիրի մարզ, նախկին՝ Հոկտեմբերյանի շրջան) 1978 թ. սեպտեմբերի 13-ին բացված Հայաստանի ազգագրության պետական թանգարանն առաջին իսկ օրվանից երևույթ դարձավ հանրապետության կյանքում: Նրա առաջին այցելուներն աշխարհի տարբեր ծայրերից ժամանած գիտնականներն էին, որ Գիտությունների Ակադեմիայի Արվեստի ինստիտուտի հրավերով մասնակցում էին Հայ արվեստի խնդիրներին նվիրված միջազգային գիտաժողովին:

Թանգարանի ցուցասրահներում, թեմատիկ-ժամանակագրական սկզբունքնով, ներկայացվում էր Հայկական լեռնաշխարհի բնակիչների կենցաղը՝ հնագույն շրջանից մինչև XX դ. 80-ական թվականները: Պատմության խորապատկերից սկզբնավորվող յուրաքանչյուր թեմա մանրամասնորեն մշակված ու ներկայացված էր հանրապետության տարբեր թանգարաններից և մարզերում իրականացված գիտարշավներից ձեռք բերված բնօրինակների և գիտաօժանդակ նյութերի միջոցով: Ցուցադրությանը բացառիկ հմայք էին հաղորդում նաև միջնադարյան ամրոց հիշեցնող կարմիր տուֆից կառուցված շենքն (ճարտ.՝ Ռ. Իսրայելյան) ու դիզայներական ինքնատիպ լուծումները (Կամո Նիգարյան, Հայկազ Քոչար):

Թանգարանի տնօրեն, այն ժամանակ պատմ. գիտ. թեկնածու Լավրենտի Բարսեղյանը, որ ցուցադրության գիտական նախագծի հեղինակն էր, գործունեության բազմամյա փորձին զուգահեռ, քաջածանոթ էր աշխարհի լավագույն թանգարանների ցուցադրություններին: Նա ձգտում էր ստեղծել մի համընդգրկուն Մայր թանգարան,[1] որի առանցքային բաժինները հետագայում պիտի վերաճեին ինքնուրույն թանգարանների՝ առավել մանրամասն ու համակողմանի ներկայացնելով հայկական

[1] Մայր թանգարանի ապագա ցուցադրության գիտական հայեցակարգի մասին տե՛ս **Բարսեղյան Լ.,** *Գիտական մոտեցումներով*, ԳՏ, 1983, N 7, էջ 18-21:

մշակույթի տվյալ ոլորտը:[2] Բացման օրից ի վեր, թանգարանը հանրապետության ղեկավար մարմինների, հատկապես ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի ուշադրության կենտրոնում էր: Կառավարական բոլոր հյուրերին պարտադիր ուղեկցում էին թանգարան և հպարտությամբ ներկայացնում ինքնատիպ ցուցադրությունն ու հավաքածուները: Երիտասարդ և գործունյա կոլեկտիվի[3] անդամներն իրենց գիտելիքներն ու երևակայությունն անմնացորդ նվիրում էին հարազատ թանգարանը լավագույնս ներկայացնելու և այցելուների համար ցանկալի ու հետաքրքիր միջավայր ստեղծելու գործին: Նպատակն օրինակելի, այսպես կոչված, ցուցադրական թանգարան ստեղծելն էր, որի համար բազմաթիվ արտոնություններ և իրավունքներ էին վերապահվում թե՛ տնօրինությանը, թե՛ աշխատողներին: Եվ զարմանալի չէր, որ շուտով այն առաջատար դիրք գրավեց ոչ միայն հանրապետության, այլև ԽՍՀՄ թանգարանների շարքում:[4] Ու քանի որ մի խումբ սարդարապատցիների հետ միասին ինձ[5] ևս պատիվ էր վիճակվել շուրջ 10 տարի մասնակցել «Սարդարապատյան ոսկեդար»-ի կերտմանը, կփորձեմ նախ հակիրճ բնութագրել Ազգագրության թանգարանի երաժշտական մշակույթին նվիրված թեմատիկ ցուցադրությունը, ապա անդրադառնալ ապագա «Հայ երաժշտության պատմության թանգարան»-ի մեր տեսլականին, որի գլխավոր դիրիժորը Լ. Բարսեղյանն էր: Երաժշտական մշակույթին նվիրված թեմատիկ ցուցադրության շրջանակներում առաջին անգամ փորձ էր արվել հնարավորինս համակողմանի ներկայացնել հայոց ավանդական նվագարանների տեսականին՝ ըստ ընտանիքների և կիրառության: Նվագարանների և ձայն արտաբերող միջոցների հնագույն նմուշները ցուցադրվում էին հնագիտական սրահներում (1-ին հարկ), իսկ ժողովրդական և

---

[2] Մանրամասն տե՛ս **Պողոսյան Ա.,** *Հայկական գորգի թանգարանը Էջմիածին քաղաքում*, ԳՏ, 1983, # 7, էջ 30-32: Աշտարակում նախատեսվող գինեգործական մշակույթի թանգարանի մասին տե՛ս **Խաչատրյան Ա.**, *Գինեգործության թանգարան,* ԳՏ, 1983, # 7, էջ 32-34:

[3] Նոր ստեղծվող թանգարանի գիտական աշխատակազմը հիմնականում ձևավորվել էր ԵՊՀ-ի այդ տարվա պատմության և բանասիրական ֆակուլտետների՝ պատմաբանի, ազգագրագետի, թանգարանագետի և բանասերի որակավորում ստացած շրջանավարտներից:

[4] Այդ տարիներին թանգարանի գործունեության մասին տե՛ս **Պիկիչյան Հ.,** *Թանգարանը և սոցիալական միջավայրը:* //Գիտաժողով՝ նվիրված Հայաստանի ազգային պատկերասրահի հիմնադիր-տնօրեն Ռուբեն Դրամբյանի ծննդյան 125-ամյակին: ՀՀ Մշակույթի նախարարություն, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտ, Հայաստանի ազգային պատկերասրահ Երևան, 2017, էջ 147-156:

[5] 1978 թ. սեպտեմբերից աշխատել եմ Հասարակական կենցաղի և հոգևոր մշակույթի բաժնում, որպես գիտաշխատող, հետագայում՝ սեկտորի, ապա նաև նույն բաժնի վարիչ: Լ. Բարսեղյանի առաջարկով՝ մասնագիտացել եմ էթնոերաժշտագիտության բնագավառում և ղեկավարել «Հայ երաժշտության պատմության թանգարան»-ի հայեցակարգի կազմման աշխատանքը:

ժողովրդապրոֆեսիոնալ երաժշտարվեստն ու երաժշտական կենցաղն արտացոլող ցուցադրությունը ներառում էր Պատմական Հայաստանի տարբեր նահանգների ժողովրդական վարպետների պատրաստած աղմկային, փողային, հարվածային ու լարային ընտանիքների նվագարանների XVII-XX դդ. նմուշներ։ Ցուցափեղկերում տեղակայված նվագարանների հնչողությունն այցելուն կարող էր լսել մագնիտոֆոնային ձայնագրությունների միջոցով, իսկ կից ցուցադրվող միջնադարյան մանրանկարների կրկնօրինակներից՝ տեղեկություններ ստանալ նվագարանների հնագույն տարբերակների և կիրառության մասին։[6] Թեման շարունակվում էր հանդիսությունների դահլիճի որմնանկարների՝ ժողովրդական տոների տեսարաններում ներառված նվագարանագործի, երաժիշտների, վիպասաց-աշուղի յուրօրինակ կերպարներում (նկարիչներ՝ Անատոլի Գրիգորյան, Զուլում Գրիգորյան, Սարգիս Վարդանյան) և լրացվում XIX-XX դդ. ավանդական կյանքն արտացոլող լուսանկարներում՝երաժշտական կենցաղի դրվագներով։ Իսկ հանգստյան և տոնական օրերին դահլիճում, ժամանակավոր ցուցադրությունների սրահում և հուշահամալիրի տարածքում պարբերաբար կազմակերպվող ժողովրդական և դասական երաժշտության թեմատիկ համերգներն ու համերգ-զրույցները կենդանի՝ հաճախ նաև ինտերակտիվ ցուցադրության էին վերածվում։ Այդ ընթացում այցելուներն անմիջականորեն ծանոթանում էին ավանդական ու դասական նվագարաններին, կենդանի հնչողությամբ ունկնդրում դրանց ձայնի նրբերանգներն ու կատարողական հնարավորությունները, վայելում հանրապետության լավագույն երաժիշտների ու երգիչների հետ անմիջական հաղորդակցման հնարավորությունը և որոշակի տեղեկություններ ստանում տարբեր ժանրերի երգերի ու նվագների մասին։

Հայաստանի տարբեր մարզերում և ԽՍՀՄ տարածքի հայաշատ բնակավայրերում պարբերաբար կազմակերպվող գիտարշավների շնորհիվ, ի շարս այլոց, հարստանում էին նաև թանգարանի երաժշտական ֆոնդերը։ Նոր ձեռք բերված լավագույն նմուշները տեղ էին գտնում հիմնական ցուցադրության մեջ։ Նախապես մշակված պլանի համաձայն՝ հավաքածուների համալրումը կանոնակարգված ու նպատակամետ էր։ Ըստ այդմ՝ ստեղծվում էին գործող և կյանքից հեռացած

[6] **Պիկիչյան Հ.,** *Ժողովրդական նվագարանների վերածնունդը*, ԳՏ, 1983, # 7, էջ 21-24։

նվագարանագործ վարպետների և ժողովրդական երաժիշտների քարտարաններ, տարածված և տարբեր պատճառներով կենցաղավարումից դուրս մնացած նվագարանների ցանկեր ու հընթացս համալրվում էր թանգարանի գիտական գրադարանը։

1980 թ. ՀԿԿ կենտկոմի որոշմամբ, Հայաստանում ժողովրդական երաժշտական արվեստի զարգացման և ժողովրդական նվագարանների վիճակի բարելավման, վերականգնման ու վերածննդի նպատակով՝ Հայաստանի ազգագրության պետական թանգարանին կից պետք է ստեղծվեր ժողովրդական նվագարանների արհեստանոց-լաբորատորիա, սակայն, հարցն այդպես էլ վերջնական լուծում չստացավ։ Այսուհանդերձ, թանգարանում պարբերաբար գործնական հանդիպումներ էին կազմակերպվում նվագարանագործ վարպետներ Հակոբ Երիցյանի, Մարտին Երիցյանի, Մարտին Խաչատրյանի, Ալբերտ Զաքարյանի, Ռուբեն Ռուշանյանի, Գրիշա և Հովհաննես Փափազյանների, Էդիկ Բարսեղյանի, Հովհաննես Չաթրջյանի և այլոց հետ ու քննարկվում մոռացված և տարբեր պատճառներով կենցաղավարումից դուրս մնացած նվագարանների վերականգնման խնդիրները։ Ապա նաև խորհրդակցելով Մեսրոպ Մաշտոցի անվ. Մատենադարանի և Կոմիտասի անվ. պետական Կոնսերվատորիայի ժողովրդական երաժշտության կաբինետի մասնագետների (Նիկողայոս Թահմիզյան, Մարգարիտ Բրուտյան, Ալինա Փահլևանյան) հետ ու հիմնվելով պատմիչների, միջնադարյան մանրանկարների, հնագիտական նյութերի, թանգարանային տարբեր հավաքածուների ու գրանցված դաշտային ազգագրական նյութերի վրա՝ վերակենդանացվեցին ավանդական տավղի, քնարի, սանթուրի, չանկյուռի, եղջերափողերի տարբեր տեսակների, փայտյա փողերի, պկուի, մետաղե սրնգի, բլուլի, չխչխկանների, զիլերի տարբերակները։ Դրանք, իհարկե, դեռևս հղկման ու կատարելագործման կարիք ունեին, սակայն, իբրև գիտափորձարարական արդյունք՝ հաջողված էին։ Այդ նվագարանները ցուցադրվում էին թանգարանի երաժշտական մշակույթի ցուցասրահներից մեկում և մեծ հետաքրքրություն էին առաջացնում այցելուների ու մասնագետների շրջանում։ Նմանօրինակ աշխատանքներ էին կատարվում նաև Հայաստանի պատմության և հուշարձանների պահպանության և օգտագործման վարչությունում։ Նախատեսվում էր միջնադարյան երաժշտական արվեստին նվիրված ցուցադրություն կազմակերպել

Կեչառիսի վանքում:[7] Թանգարանում հայկական երաժշտության ձայնադարան ստեղծելու ակնկալությամբ՝ գիտաօժանդակ ֆոնդում առանձին բաժին էր ձևավորվել Ռադիոյի ձայնադարանից վերաձայնագրված անվանի երաժիշտների լավագույն կատարումների (ժողովրդական դասական) և հին ու նոր ձայնապնակների հավաքածուներից: Հատուկ ուշադրություն էր դարձվում անվանի երաժիշտների անձնական արխիվների, հուշային առարկաների, նվագարանների հավաքման խնդրին: Այդ շարքում էին XX դ. անվանի երաժիշտներ Լևոն Կարախանի, Լևոն Մադոյանի, Սողոմոն Սեյրանյանի, Գուրգեն Միրզոյանի կյանքի ու գործունեության մասին փաստող վավերագրերն ու առարկաները: Ֆոնդային հավաքածուներում առանձնացվում էին նաև գիտարշավների ընթացքում Հայաստանի տարբեր բնակավայրերից բերված ավանդական նվագարաններ ու նվագարանագործական արհեստին առնչվող աշխատանքային գործիքներ, երաժշտություն արտաբերող ու գրանցող տեխնիկական սարքեր ու միջոցներ, ձայնագրություններ, երաժիշտների և ծիսական-տոնական կյանքում նրանց պատկերներով լուսանկարներ, փաստաթղթեր, նոտային ձեռագրեր, համերգների ազդագրեր, ծրագրեր, հրատատարակված տարբեր նյութեր, ինչպես նաև երաժիշտների պատկերներով դեկորատիվ-կիրառական առարկաներ: Բազմաշերտ ու ծավալուն հավաքածուներում ամփոփված արտեփաստերը հընթացս ուսումնասիրվում, կանոնակարգվում և անձնագրավորվում էին՝ որոնց շնորհիվ ուրվագծվում էր ապագա Երաժշտության պատմության թանգարանի կառուցվածքն ու հայեցակարգը: Զուգահեռաբար մշակվում և համակարգվում էին մասնագիտական գրականության տվյալները, որոնց միջոցով ցուցադրությունը գիտականորեն հիմնավորված և ամբողջական տեսք պիտի ստանար: Թանգարանի հիմնական նպատակը պիտի լիներ հայկական երաժշտական մշակույթը ներկայացնել իբրև պատմական հենքի վրա խարսխված կենսակերպ: Ժամանակագրական առումով՝ հնագույն շրջաններից մինչ մեր օրերը, այսինքն՝ երաժշտական հաղորդակցության հնամենի ձևերից մինչև արդի երաժշտարվեստն իր բազմաշերտ ու բազմաժանր ճյուղավորումներով:

---

[7] Հիշյալ խնդրի անդրադարձն ու վերականգնված նվագարանների նկարները տե՛ս **Պիկիչյան Հ.,** *Որ միշտ հնչեն նվագարանները հայոց*, ԿԼԱ, 1985, # 3, էջ 23-29:

Քանի որ հոդվածի շրջանակներում հնարավոր չէ առավել հանգամալից նկարագրել ապագա թանգարանի ցուցադրության գիտական նախագիծը, կփորձենք անդրադառնալ հիմնական շեշտադրումներին, որոնք մեր ժամանակներում ևս արդիական կարող են լինել: Այսպես, ավանդական երգարվեստն ու նվագարանային կատարողական արվեստն իր ժանրային, ոճային ու տարածքային առանձնահատկություններով ներկայացնելու համար նախատեսվում էր հիմնական ցուցադրության թեմատիկ սրահներից բացի՝ մատուցման այլ տարբերակ առաջարկել: Ըստ այդմ, ցանկության դեպքում այցելուն կարող էր հարմարավետ տեղավորվել համապատասխան սենյակում և ականջակալների միջոցով ունկնդրել և համեմատել Պատմական Հայաստանի տարբեր գավառներին բնորոշ ավանդական բոլոր ժանրերի երգերի ու նվագների դաշտային ձայնագրությունները, ազգագրական խմբերի կամ մասնագետ երաժիշտների ու երգիչների կատարումների տարբերակները: Յուրաքանչյուր գավառի երաժշտական մշակույթի ձայնագրյալ նմուշներին զուգահեռ՝ կարող էր ծանոթանալ նաև բանահյուսական մի շարք ժանրերի բարբառային հնչողությանը: Դա հնարավորություն կտար առավել հստակ պատկերացում կազմել առոգանության, խոսքի և երաժշտական լեզվի միասնական ակունքների մասին:[8] Նման մոտեցմամբ փորձ էր արվելու ներկայացնել նաև ավանդական պարի մշակույթը, որն իրականացնելու համար նախատեսվում էր տեսադարան ստեղծել՝ խորհրդակցելով պարագետներ Ժենյա Խաչատրյանի, Էմմա Պետրոսյանի և Ռուդիկ Հարոյանի հետ:

Նվագարանագործական արհեստի զարգացման ընթացքը, առանձնահատկություններն ու տարբեր ընտանիքների ավանդական նվագարանների պատրաստման եղանակները նախ պիտի ներկայացվեին հնագիտական ու ազգագրական հարուստ հավաքածուների, ավանդական արհեստանոցների ու վաճառատների լուսանկարների միջոցով, որից հետո այցելուները պիտի մուտք գործեին կենդանի ցուցադրության տարածք: Այստեղ վերականգնված արհեստանոցների առանձին բաժանմունքներում նրանք ականատես կլինեին հարվածային, փողային, լարային նվագարաններ պատրաստելու գործընթացին:

[8] Այս խնդրի մասին մանրամասն տե՛ս **Կոմիտաս Վարդապետ**, *Մի թռուցիկ ակնարկ հայ ժողովրդական երաժշտության վերայ*, Ուսումնասիրություններ եւ յօդուածներ, գիրք Բ, աշխատասիրութեամբ **Գուրգեն Գասպարեանի** եւ **Մարինե Մուշեղեանի**, Երևան, 2007, էջ 219-320, Սարգիս Խաչենց, Փրինթինֆո:

Նվագարանագործ վարպետները հընթացս կպատմեին հումքի ընտրության, մշակման, նվագարանների պատրաստման և կիրառության մասին, կհնչեցնեին դրանք և կպատասխանեին այցելուների հարցերին։ Իսկ արդեն կից գործող վաճառատնից՝ ցանկացողները հնարավորություն կունենային նաև պատրաստի նվագարաններ գնել։

Կենդանի ցուցադրության սկզբունքով և համապատասխան բնական միջավայրով (տարվա եղանակին բնորոշ տարածք, կահավորանք, հարդարանք, տոնական-ծիսական ուտեստ, սպասք, երաժշտություն, երգ, պար, խաղ, բանահյուսություն), պիտի ներկայացվեին նաև ժողովրդական տոները՝ այցելուին հնարավորություն տալով դիտողից վերածվել մասնակցի։ Դա կապահովվեր տոնի ու ծեսի բովանդակության, նպատակի և արարողակարգի մասին նախնական տեղեկատվական նյութերի ու միջոցների տարածման շնորհիվ։ Այս կերպ ծիսական երաժշտությունը կընկալվեր իր ողջ էությամբ՝ իբրև մշակութային ամբողջական տեքստի կառուցիկ բաղադրիչ, այլ ոչ թե սոսկ ուղեկցող կամ տրամադրություն ստեղծող միջոց։

Առանձին բաժնով ներկայացվելու էին նաև երաժշտություն գրանցող և արտաբերող սարքերն ու տեխնիկական միջոցները, որոնց շնորհիվ այցելուն կկարողանար ուղևորվել ժամանակի մեջ՝ հաղորդակցվել գիտատեխնիկական մտքի առաջընթացին։

Ազգագրության թանգարանի աֆրիկյան մշակույթի հավաքածուում կային նաև ծիսական դիմակներ և թմբուկ, որոնք այցելուներին ներկայացվել էին ժամանակավոր թեմատիկ ցուցադրության ընթացքում։ Իսկ երբ Ալեքսանդր Սպենդիարյանի տուն թանգարանից Սարդարապատ տեղափոխվեց նաև աշխարհի տարբեր ժողովուրդների ավանդական նվագարանների ինքնատիպ հավաքածուն՝ առաջարկվեց նոր թանգարանի հայեցակարգում առանձին բաժին հատկացնել նաև այլ երկրների երաժշտական մշակույթներին՝ հնարավորինս ներկայացնելով նաև դրանց կենցաղավարման տարածքն ու միջավայրը։ Նախատեսվում էր աշխարհի տարբեր ժողովուրդների երաժշտական մշակույթներին նվիրված թեմատիկ ցուցադրություններ կազմակերպել նաև թանգարանի ժամակավոր ցուցադրությունների սրահներում։ Իսկ դահլիճում իրականացվող համերգները պիտի

լրացնեին դրանք։ Գիտական հարուստ գրադարանը պիտի նպաստեր ոլորտի մասնագետների ու թանգարանի աշխատակիցների անմիջական կապերի ակտիվացմանն ու գործունեության ծավալմանը, իսկ սրճարանը միաժամանակ կարող էր վերածվել նաև հաճելի զրույցների ու հանգստի վայրի։ Թանգարանում գործող նվագարանների փորձարարական արհեստանոց-լաբորատորիան ևս, մի կողմից պիտի լրացներ նվագարանագործական արհեստանոցների շարքը, մյուս կողմից՝ ծառայեր գիտահետազոտական խնդիրներին՝ միավորելով տեսական ու գործնական ոլորտների հնարավորությունները։ Ենթադրվում էր, որ բացի մոռացված ու կենցաղավարումից դուրս մնացած նվագարանների վերականգնման գործունեությունից, այն պիտի զբաղվեր նաև ավանդական նվագարանագործական արհեստի զարգացման խնդիրներով և կարող էր ժամանակ առ ժամանակ դառնալ թեմատիկ էքսկուրսիաների բաղկացուցիչ։ Նախատեսվում էր վերականգնված նվագարանների միջոցով թանգարանում ստեղծել նաև հնագույն նվագարանների համույթ՝ համապատասխան երկացանկով։ Պիտի խոստովանեմ, որ Հայ երաժշտության պատմության թանգարանի ստեղծման գաղափարն այդ տարիներին այնքան առարկայական էր, որ արդեն քննարկվում էր համապատասխան շենքի ընտրության կամ ճարտարապետական նախագծերի մրցույթ կազմակերպելու հարցը։ Անգամ չէր բացառվում Խ. Աբովյան փողոցում գտնվող հանրախանութի շենքը թանգարանի վերածելու հնարավորությունը։ Ժամանակ առ ժամանակ մեզ ոգևորելու նպատակով՝ Լ. Բարսեղյանը կես լուրջ, կես կատակ ասում էր. «Անհնարին բան չկա, համարեք, որ ամեն ինչ ունեք. երևակայությամբ պատկերացրեք, մտածեք և նոր գաղափարներ առաջարկեք, մենք էլ կփորձենք իրականացնել դրանք…»։

Ցավոք, 1980-ական թթ. վերջերին հանրապետության կյանքում ընթացող ճակատագրական փոփոխությունները խաթարեցին դեպքերի բնականոն ընթացքը և ժամանակավորապես դադարեցվեցին սկսված գործընթացները։ Այսուհանդերձ, հայ երաժշտության պատմության թանգարանի ստեղծման նախագիծն այսօր էլ չի կորցրել արդիականությունը։ Գուցե երազանքներն իրականացնելու ժամանա՛կն է …

ЛИАННА ГЕВОРГЯН
АГПУ, “Службы по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников” ГНКО

ИСТОРИЯ И ПЕРСПЕКТИВЫ ОРГАНИЗАЦИИ МУЗЕЯ ПОД ОТКРЫТЫМ НЕБОМ В АРМЕНИИ

Открытию одного из главных детищ Лаврентия Барсегяна – Музея этнографии Армении, предшествовала большая и нелёгкая работа. Как рассказывал основатель музея и первый директор, деятельность которого к тому времени уже была тесно связана с культурным наследием, многие не были согласны с идеей основания музея этнографии в здании, где, по мнению одних (директор Национальной галереи Э. Исабекян), должен был быть филиал Национальной галереи Армении, по мнению других (сотрудники Института археологии и этнографии АН Арм. ССР, Министерства культуры Арм. ССР), должен быть музей, посвящённый Сардарапатской битве. Именно усилиями в то время еще кандидата, а позже доктора исторических наук, профессора кафедры музееведения Армянского государственного педагогического университета им. Х. Абовяна, Л. А. Барсегяна, удалось убедить высшее руководство Армении (в частности, первого секретаря ЦК КП Армении К. С. Демирчяна), а также соответствующие органы в Министерстве культуры СССР в необходимости создания музея этнографии именно на территории комплекса. К сожалению, нет материалов о том, как обосновал Лаврентий Ашотович Барсегян идею создания музея на территории комплекса, который находился недалеко от райцентра и в 60 км от столицы Армении, но для посетителей обоснование звучало так: «… Сардарапатская битва спасла Армению, армянский народ от уничтожения. Сейчас мы познакомимся с той культурой, которая была спасена благодаря победе армянских войск и народного ополчения».

Музей был основан в 1978 г. по постановлению Совета министров Арм. ССР от 16 февраля 1978 г. № 812[1], в котором, в частности, говорилось: «С целью широкого показа и пропаганды художественных, музейных, архитектурных ценностей и их научного исследования, а также достижений советской культуры, постоянной работы

[1] **Պողոսյան Ա., Հովհաննիսյան Ա.,** *Հայաստանի ազգագրության պետական թանգարանի քսանամյա գործունեությունը,* ՆԱՀ, Երևան, 2005, էջ 89-93:

коммунистической партии в сохранении и развитии культурного наследия, взаимосвязи и взаимообогащении культур с братскими советскими народами…».[2] Таким образом, под прикрытием идеи создания интернационального музея, удалось добиться разрешения на открытие музея, фактически посвящённого культуре и быту армян.

В основу первой экспозиции легли экспонаты, собранные во время первых экспедиций,[3] а также полученные из Государственного музея истории Армении: 1478 археологических и этнографических артефакта и 584 фотографий. О профессиональном уровне экспозиции нового музея свидетельствуют записи первых дней, оставленные в книге отзывов не только посетителями, но и специалистами в области культуры и музееведения: академики АН Арм. ССР Геворг Гарибджанян, Георг Брутян, искусствовед Маня Казарян, действительный член АН СССР Борис Пиотровский, академик АН СССР Дмитрий Лихачёв и др. (рис. 1).[4]

Через некоторое время после открытия музея Л. Барсегян инициировал начало работ по научной разработке и сбору материалов для организации в Армении этнографического музея под открытым небом типа «скансена»,[5] как одной из наиболее распространённых и эффективных форм этнографических музеев, которые осуществляют комплексное хранение и демонстрацию быта и культуры обществ в повседневном контексте, в исторической, культурной и природной среде.[6] Они завоевали признание в Европе, став образцовой моделью музея времени, музея

---

[2] Архив Мемориального комплекса Сардарапатской битвы, национального музея этнографии армян и истории освободительной борьбы.

[3] **Պողոսյան Ս.**, *Հայաստանի ազգագրության թանգարանը՝ ազգային մշակույթի գանձարան. Թանգարանի 30-ամյա ուղին* // «Նայիրի» տարեգիրք III, կազմեց Ս. Ամիրխանեանը, Թեհրան, 2010, էջ 401:

[4] Архив Мемориального комплекса Сардарапатской битвы, национального музея этнографии армян и истории освободительной борьбы.

[5] «Группа музеев, создаваемых на основе недвижимых памятников и архитектурно-ландшафтных комплексов, образуемых памятниками и их природным окружением. В качестве места хранения и экспонирования таких объектов выступает музейная территория». См. Музей под открытым небом // РМЭ, с. 393. http://museum.ru/rme/sci_etno.asp. http://www.euro-t-guide.com/See_Type/Open_Air_1.htm; Дата посл. обр. 04. 10. 2017; **Գևորգյան Լ.**, *Ազգագրության բացօթյա թանգարանների ձևավորման սոցիալ-տնտեսական պատճառները* // Շիրակի պատմամշակութային ժառանգությունը. հայագիտական արդի հիմնահարցեր, IX միջազգային գիտաժողովի զեկ. հիմնադրույթեր, Եր., 2016, էջ 168-172; Этнографические музеи, РМЭ, museum.ru/rme/sci_eco.asp Дата посл. обр. 04. 10. 2017. http://www.skansen.se/en/kategori/english; http://www.skansen.se/en/artikel/about-skansen-0;

[6] Некоторое исследователи отождествляют музеи под открытым небом с этномузеями. См. **Севан О. Г.**, *Музеи под открытым небом Европы* // Обсерватория культуры, М., 2006, № 3, с. 60-69; РМЭ, с. 393.

пространства, музея деятельности человека[7]. В силу своего расположения и характерных особенностей: он создаётся, поддерживается и используется совместно с жителями района и, желательно, местными органами власти, экомузеи имеют возможность для организации более широкой просветительской деятельности, которая направлена не только на распространение знаний о движимых и недвижимых памятниках истории и культуры, на совершенствование отношений между человеком и его окружением, но и восстановление и/или формирование национального самосознания и идентичности. Особенности организации и функционирования экомузеев делают ее самой естественной средой для безболезненной передачи информации из поколения в поколение и для проведения пропаганды культурного наследия, развития туризма.[8]

Для пополнения коллекции, а также обмера построек для будущего музеея под открытым небом, ГМЭА несколько лет подряд организовывались экспедиции в разные районы Армении и армянонаселенные районы и города Грузии: Тбилиси, Ахалкалаки, Ахалцихе (1981, 1982 гг.). Итогом многолетнего совместного труда архитекторов и этнографов стал многотомный проект: чертежи, фотографии, тексты, жилых и хозяйственных построек будущего музея под открытым небом.[9] В 1981 г. в Государственном музее этнографии Армении был разработан *проект по созданию музея под открытым небом* на территории 27 га, к западу от него, а 2 ноября 1983 г. решением Совета Министров Арм ССР эта территория была передана музею для организации «Музея народной архитектуры и быта под открытым небом». Создатели проекта уже

---

[7] **Ривьер Ж. А.,** *Эволюционное определение экомузея* // Museum, 1985, № 148, с. 2-4. Hugues de Varine, The word and beyond; **Юг де Варин**, *Термин и его значение* // Museum, 1985, № 148, с. 7. См. также: **Юренева Т. Ю.,** *Музей в мировой культуре*. М., 2003, с. 459; **Каулен М. Е.**, *Музеефикация историко-культурного наследия России,* М., 2012, с. 36, 46; Этнографические музеи, РМЭ, http://www.museum.ru/rme/sci_etno.asp Дата посл. обр. 09.10. 2017; Музейное дело, с. 667; **Энгстрем Ч.,** *Утверждение концепции экомузея в Швеции* // Museum, 1985, № 148, с. 26-30; **Беллэг-Скальбер М.**, *Участие населения в работе экомузея* // Museum, 1985, № 148, с. 14-17.

[8] **Каулен М. Е.**, *Музей на рубеже веков: пространство взаимодействия культур* // Культурные миры. Материалы научной конференции «Типология и типы культур: разнообразие подходов», М., 2001, с.123-140. См. также **Мастеница Е. Н.**, *Эволюция музеев под открытым небом и туризм: отражение проблемы в курсе «Музейные заповедники»* // Музей и туризм: подготовка кадров. Опыт и перспективы, сб. материалов Всероссийской научно-практ. конф., 19-21 апр. 2004 г., посвящ. 15-летию кафедры и 10-летию факультета музееведения и экскурсоведения СПБГУКИ, СПб. 2005, с. 28-38.

[9] Фонд проектов и смет «Службы по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников» ГНО.

тогда считали вопрос насущным. «Музей этнографии под открытым небом, – писали они, – окажет неоценимую услугу в деле охраны памятников, привлечения интереса к ним, исследования культурного наследия армянского народа, становясь важным центром культурной жизни народа. Он в немалой степени будет способствовать развитию этнографических исследований».[10] В будущем музее соответствующим образом предполагалось демонстрировать в комплексе материальную и духовную культуру с учетом историко-этнографических областей Исторической Армении. В историко-этнографическом плане каждый регион имеет свои местные особенности, которые наблюдаются во всех сферах традиционной материальной, духовной культуры и хозяйственного быта. Экспозиция под открытым небом должна была дополнить экспозицию, представленную в здании музея. Согласно проекту, комплекс на первом этапе должен был включать пять историко-этнографических областей: Айрарат, Ширак, Сюник, Лори, Джавахк, позже – Тавуш, Арцах, Вайоц Дзор, Гегаркуник, Арагацотн[11] (рис. 2). Согласно концепции[12], экспозиция должна была включать три раздела. Так же как основная экспозиция музея, экспозиция под открытым небом начиналась с показа быта и культуры населения Армянского нагорья с древнейших времён до XVIII века: реконструкции части поселений Шенгавит и Джраовит (IV-III тыс. до н. э.), урартского дома из Тейшебаини (VII в. до н. э.), жилой дом раннеармянской эпохи (V-IV вв. до н. э., по Ксенофонту), средневековый жилой дом из Двина или Гарни, виды погребений и надгробные памятники, караван-сарай. Последняя постройка должна была служить экспозиционным залом для демонстрации средств передвижения и, одновременно, исполнять функции места для кратковременного отдыха.

Вторая часть включала постройки жилых помещений разных историко-этнографических районов, хозяйственные, летние и др. постройки, ремесленные

---

[10] ՀՍՍՀ Մին. Խորհրդին առընթեր պատմության և կուլտուրայի հուշարձանների պահպանման և օգտագործման վարչության նախագծային գրասենյակ, Սարդարապատի բացօթյա թանգարան, Առաջարկ, Եր., 1981թ. // «Служба по охране исторической среды и историко-культурных музеев-заповедников» ГНКО, КП 322, фонд ՆՆ 72/166:

[11] **Միքայելյան Վ.,** *Հայաստանի բացօթյա թանգարանը*, ԿԼԱ,1988, № 3, էջ 41-50:

[12] Առաջարկ Հայաստանի ազգագրության պետական թանգարանի բացօթյա ցուցադրության կազմակերպման վերաբերյալ, կազմողներ՝ **Հ. Մարության, Ա. Գյուլբուդաղյան** (ձեռագիր):

мастерские.[13] Третий раздел должен был включать 2-3 жилых дома с соответствующим интерьером из разных районов Советской Армении, которые, сами посебе, подчеркивали процесс нивилирования культурно-бытовых особенностей разных историко-этнографических районов Армении. Становится понятно, что разделы не равнозначны и различны по охвату материала и территории. Значительное место отведено второму разделу. Первый должен был служить для обоснования преемственности культуры.

Авторы предполагали использование культовых и хозяйственных построек, включая действующие маслобойню, водяную мельницу, давильню, кузницу,[14] а также мосты, родники[15] и т.д. Для достижения исторической достоверности, во время экспедиционного сбора информации в 1979-1988 гг. сотрудниками музея, описывался весь комплекс жилых и хозяйственных построек, а также интерьер, предметы материальной культуры. Все это предполагалось перевезти, не нарушая «жизненный комплекс», и экспонировать его в полном составе. Чтобы вдохнуть в них жизнь, в каждом помещении персонал должен был носить традиционный костюм данного региона, по возможности, говорить на этом наречии. В кузнице должны были раздуваться мехи и стучать молоты, на станках должны были ткать ковры, на гончарных кругах лепить посуду. Тут же изделия должны были продаваться.

Делая акцент на традиционные постройки сельского типа, авторы предполагали введение также нескольких, наиболее ярко носящих на себе элементы традиционного, построек городского типа. Постройки городского типа планировалось воссоздать в центральной части, на перекрёстке. В связи с недостаточностью территории, трудностями при показе слишком объёмных экспонатов, авторы проекта предложили экспонирование нескольких макетов и бутафорий, воссоздающих панораму города. Небольшая площадь в центральной части экспозиции в дальнейшем могла служить для проведения культурно-массовых мероприятий. «Декламирование, песни и пляски, представленные в рамках проведения обряда или отдельно от него, помогут посетителю преодолеть музейную условность и с чуством реальности участвовать в

[13] «Служба по охране исторической среды и …» ГНКО, КП 322, фонд ՆՆ72/171.
[14] **Միքայելյան Վ.**, Ն2վ. ա2խ., էջ 41-50:
[15] «Служба по охране исторической среды и …» ГНКО, КП 322, фонд ՆՆ72/168.

своеобразном и многогранном театре», - писали авторы проекта.[16] Планировались также места отдыха у искуственного озера. При реализации авторы советовали архитекторам и дизайнерам создать «непринуждённую экспозицию, на первый взгляд с неправильной планировкой <…>, что смягчит натиск непрерывно подаваемой информации <…>».[17] Сегодня хранятся более 50 проектов[18] по перевозке и реконструкции жилых домов и хозяйственных построек, подлежащих экспонированию в музее под открытым небом, которые в своё время были отобраны, обмерены и описаны специалистами. Скорее всего, их уже и не существует, но подробные проекты и описания дают возможность их реконструировать. К сожалению, проект так и не был осуществлён.

В последующие годы было несколько безуспешных попыток реанимировать проект или создать подобные: начало строительства этнографического района Дзорагюх в Ереване (рис. 3), попытка восстановления построек историко-культурного заповедника Кумайри[19] или бывшего музея-заповедника «Дилижан».

В начале 2017 г. Комитетом по международному сотрудничеству и инвестиционным строительным проектам Государственного комитета по градостроительству при Правительстве Республики Армения разработана и представлена на рассмотрение инвестиционная программа «Ной», предусматривающая $ 100 млн инвенстиций для строительства в Ереване, на территории в 9,2 га, этнографического квартала. В квартале планируется построить музейные, гостиничные, жилые здания, представляющие архитектурные особенности построек историко-этнографических областей Сюника, Ширака, Лори и др. Общая планировка должна дать возможность развернуть экспозиции ковров, картин и копий древних рукописей. Предполагается, что осуществление проекта значительно повлияет на оживление туризма в Ереване.[20]

Скоро начнется реализация обсуждаемого 10 лет проекта «Старый Ереван», который предусматривает воссоздание архитектурного облика армянской столицы конца XIX – начала XX веков. На небольшом пятачке в центре города планируется

---

[16] Առաջարկ, էջ 8.
[17] Նույն տեղում, էջ 10.
[18] «Служба по охране исторической среды и …» ГНКО, КП 322, фонд ՆՆ 72/ 123 –173,176 –178.
[19] http://golosarmenii.am/article/19898/reanimaciya-zapovednika-kumajri Дата посл. обр. 01.10. 2017.
[20] http://www.mediamax.am/am/news/yerevan/22169/ Дата посл. обр. 25. 03.17.

восстановить несколько десятков зданий и архитектурных строений, воздвигнутых в этот период и представляющих историческую и культурную ценность, которые помогут туристу «увидеть и понять архитектуру старого Еревана».[21] В рамках реконструкции исторического квартала планируется строительство торгово-общественного комплекса: мастерские по производству и продаже ковров, вышивки, керамики и др., т. е., тех товаров, которые, благодаря Ереванскому вернисажу, фестивальным выставкам-продажам, уже стали символами армянской идентичности. «Было бы неплохо здесь расположить выставочные залы и музеи», – резюмирует автор проекта, архитектор Левон Варданян.[22] Таким образом, если архитектурная часть проекта уже принята и более или менее ясна, то более точная концепция по использованию этих территорий пока не обнародована. Создание экомузеев в Армении действительно возможно: при нынешнем нарастающем интересе государственных и частных структур к туристическому бизнесу и населения к своим корням, возможно использование тех немногих ещё сохранившихся островков почти натуральной сельской жизни в Армении.[23] Например, покинутое поселение Хндзореск находится в непосредственной близости от одноименного нового поселения, что позволяет использовать его коммуникации, задействовать местное население. Выгодное расположение: недалеко от уже раскрученного национального парка «Татев», г. Гориса и межгосударственной дороги в Арцах, позволяет привлечь множество туристов. Можно использовать пока имеющуюся возможность превращения в один из очагов экотуризма бывшего центра гончарного производства с. Юва (ныне с. Шаумян Араратского марза), или центральный квартал с. Сарнахпюр (Ширакского марза), где более или менее сохранился колорит жилых построек начала XX в. и др.

Для распространения и пропаганды армянского культурного наследия, по нашему мнению, важно возродить созданный в 80-ых гг. XX в. и нереализованный

---

[21] **Մարտիրոսյան Ա.,** *Հին Երևանի հուշարձան շենքերը կկենտրոնացվեն մեկ վայրում*, Ազգ, 27 սեպտեմբերի 2005 թ.; См. также **Марутян А. Т.,** *Из истории сохранения и застройки исторического центра Еревана (XIX начало XX в.),* ИКН, сборник научно-информационных статей, вып 1, Ер.,2014, с. 73.

[22] http://www.azatutyun.am/a/26732053.html; http://newsarmenia.am/news/armenia/nachalis-predvaritelnye-raboty-po-proektu-staryy-erevan/

[23] **Գևորգյան Լ.**, *Հայաստանում ազգագրության բացօթյա թանգարան ստեղծելու խնդրի շուրջ*, «Հայկական լեռնաշխարհի պատմամշակութային ժառանգությունը» միջազգային գիտաժողովի նյութերի ժողովածու, Եր., 2012, էջ 121-123; **Геворгян Л. П.,** *Этнографические музеи*, с. 140-150.

проект организации музея под открытым небом, пересмотрев его соответственно с новыми реалиями, требованиями времени и новой музеологии. Реализация такого проекта станет значительным стимулом для развития туризма в Армении. Для возобновления работ по созданию музея и соответствия его новым требованиям музееведения надо учесть некоторые организационные особенности: опыт работы лучших музеев Европы; итоги предварительно проведённых этнографических мониторингов с целью фиксации памятников и организации их охраны во всех районах Армении; выбор территории (одной или нескольких), с учётом особенностей ландшафта историко-этнографических областей при установке перевезённых экспонатов; комплексный подход при установке перевезённых экспонатов; итоги заранее проведённых опросов, так как социальные факторы играют все большую роль в вопросах формирования этнографических музеев; единый план сбора, учёта и хранения предметов материальной и духовной культуры; необходимость подготовки и переподготовки квалифицированных специалистов и т.д.[24] Для осуществления проекта необходимо использовать разные целевые источники финансирования: государственные бюджетные и внебюджетные средства, отчисления от коммерческой и предпринимательской деятельности, добровольные взносы и др. Возможности использования ресурсов музеев под открытым небом сегодня значительно расширились, поскольку среди них и отдельные памятниками с экспозицией, и пространственная среда, территория, которую можно по-разному использовать, переориентировать в зависимости от осуществляемых проектных решений этнографов и музейных сотрудников. Все активнее обсуждается идея смешанного типа музея, когда на одной территории объединяются существующие здания с их жителями и перевозимые из разных мест сооружения, представляющие историко-культурную ценность, которые становятся составной частью всего поселения и его ландшафта.[25] При рассмотрении вопроса роли этнографических музеев в современной реальности надо рассмотреть и вопрос отношения государства и общества к этнографическому музею. Они совершенно различны. Если на фоне национальных движений последних

---

[24] **Геворгян Л. П.**, *Этнографические музеи в контексте пропаганды национальной культуры*, НС, # 20, М., 2013, с. 140-150.
[25] **Севан О. Г.**, Указ. соч., с. 60-69.

лет и повышения интереса к своим истокам и корням наблюдается повышение интереса общества к этнографическому музею, то этого нельзя сказать о государстве. И как уже было сказано, созрела необходимость в разработке целостной программы и законодательной основы взаимоотношений государства с государственными и негосударственными музейными структурами, в чем заинтересованы бизнесмены, работники образования и культуры, сотрудники туристических фирм и музейные работники. В Армении, в условиях активного развития туризма и частичной переориентации на неё экономики страны, необходимо обратить внимание общества и, особенно государства, на музей и культурное наследие как на важнейший ресурс развития города, региона, страны. Создание музеев под открытым небом, экомузеев в Армении возможно благодаря множеству сохранённых естественных локальных территорий и сообществ, и их заинтересованности в сохранении уникальной специфики данной местности. Это и есть возможность соблюсти разумный баланс между культурно-просветительской и коммерческой деятельностью, не исключая при этом решения традиционных задач музееведения.[26] Таким образом, создаваемый музей станет не только экспозицией под открытым небом, но и научно-культурным центром с широкими возможностями. Сегодня Армения частично пересматривает стратегию экономического развития, пытаясь задействовать потенциал культуры и туризма. В этих условиях необходимо обратить внимание общества и, особенно государства, на музей и культурное наследие как на важнейший ресурс развития города, региона, страны. Одной из сторон индустрии туризма следует рассматривать этно-гостиницы, рестораны, центры, музей под открытым небом, которые возможно организовать в небольших городах и посёлках. Сращивание этнографической экспозиции и гостинично-туристического бизнеса уже нашло своё отражение и получило положительные результаты в Армении и с точки зрения прибыли, и с точки зрения активизации национальной идентичности. Открытым остается вопрос реализации проекта музея под открытым небом, что привело бы к появлению нового крупного научно-культурного центра с широкими возможностями развития туристического бизнеса.

---

[26] **Գևորգյան Լ.**, *Հայաստանում ազգագրության բացօթյա թանգարան ստեղծելու խնդրի շուրջ*, էջ 121-123; **Геворгян Л. П.**, *Этнографические музеи*, с. 140-150.

Рис. 1



a



Чудесный, великолепный памятник, в котором отчетливо виден талант армянского народа, воплощенный в работе замечательного человека и архитектора Рафо Исраеляна. Великое культурное наследие Армении получило достойный памятник.

Борис Пиотровский, Директор Эрмитажа

13 сент. 1978 г

b



c



Мы делегация, представляющая участников декады Искусства и Литературы РСФСР в Армянской ССР, с огромным интересом посетили бывшее историческое искусство талантливого Армянского Народа, которое сохранено в этом замечательном здании Музея. От всех душе благодарим. Большое Русское спасибо Армянскому Народу.

По поручению делегации

28/IX-78

d



Если бы я имел право и смелость благодарить музей от русских, то я бы поблагодарил от всей души, от всего сердца, от всего своего сознания за то духовное обогащение, которое Музей дает. Каждая национальная культура обогащает другую и открывает путь к познанию своей собственной (состоящей из своеобразных ценностных различий и сходств). Это один из самых красивейших и лучших музеев, которые я видел. Большое, большое спасибо!

Академик Д. С. Лихачев

14 апреля 79 г.

e

Рис. 2

Проект музея народной архитектуры и быта под открытым небом

Рис. 3

ԱԶԳԱԳՐԱԿԱՆ ԹԱՂԱՄԱՍ

ՁՈՐԱԳՅՈՒՂ

ՇԱՐՈՒՆԱԿԵԼ ՆՈՐ ԹԱՓՈՎ

Անտիճանաբար ընդլայնվում ու նոր թափ է առնում Ջորագյուղի ազգագրական թաղամասի շինարարությունը: Այս տարի նախորդ՝ 1987 թ. համեմատությամբ զգալիորեն կմեծանան շինմոնտաժային աշխատանքների ծավալները, հասնելով մոտ մեկ միլիոն ռուբլու: Դա նշանակում է որ շինմորոգման տրեստի հատուկ շինմորոգման վարչության կոլեկտիվը ամեն ամիս պետք է իրականացնի մոտ 100 հազար ռուբլու աշխատանքներ: Բնական է, որ նախկին փոքրաթիվ բանվորական կոլեկտիվի ուժերով այժմ արդեն անհնարին կլինի բավարարվել: Այդ իսկ պատճառով մոտ ժամանակներս նախատեսվում է ավելացնել տեղամասում գործող աշխողությունների թիվը՝ այժմ գործող 1-ից հասցնելով 8-ի: Համապատասխանաբար կմեծանա նաև բանվորների թիվը՝ հասնելով մինչև 100-ի: Տարեսկզբից տեղամասը կատարել է ավելի քան 100 հազար ռուբլու շինմոնտաժային աշխատանքներ, սակայն ամենամեծ շինարարության թափը պետք է ավելի ու ավելի մեծանա:

— Իսկ ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել այս տարեսկզբին կառույցի շինարարական հրապարակում,— այս հարցով դիմեցինք աշխողկ Զ. Բարսեղյանին:

— Այս տարվա մայիս ամսին շահագործման կհանձնվեն ազգագրական թաղամասի առաջին տները,— պատասխանեց նա,— դրանք են ազգային ուսեստի գոտու № № 1, 2, 8 օբյեկտները: Այս տներում արդեն գրեթե լրիվ ավարտվել են ներքին հարդարման աշխատանքները, չհաշված որոշ ներդարակական աշխատանքներ: Դրանից հետո, իհարկե, կենա լուծելու կահավորման հարցը: Սկսվել և ամբողջ թափով շարունակվում է ուտեստի գոտու № 35 տան շինարարությունը: Այս օբյեկտի մի հատվածում պատերը բարձրացել են մինչև երկրորդ հարկը, բայց մյուս հատվածում հիմնաները նոր են սկսվում: Արագ են առաջ ընթանում փայտագործի տան կրկնակ տների շինմոնտաժային աշխատանքները: Տներից մեկում շինարարական աշխատանքները, ներառյալ ծածկի կառուցումը, ավարտվել են, երկրորդում կավարտվեն մայիս ամսին: Այդ օբյեկտներում այս տարի կսկսվեն ներքին հարդարման և հաղորդագծերի կառուցման գործերը: Նորություններից մեկն էլ այն է, որ փայտագործի տան մոտ սկսվել է դարավանդը եզրափակող խոշոր հենապատի կառուցումը, որն ունի 8—5 մետր բարձրություն, իսկ հիմնամասում՝ մինչև 1,5 մետր հաստություն: Այս հենապատի 70 տոկոսն արդեն պատրաստ է: Հենապատի և փայտագործի տան միջև կատարվել է մեծ ծավալի հողային: Սկսվել է նաև աղբաթափի կամ № 14 տան կառուցումը: Այն ինքնատիպ է նրանով, որ նրա ներսուլթը կառուցվում է Երևանի գեկերտի սրբատաշ տուֆով, իսկ արտաքին երեսապատումը՝ կիսասրբատաշ բազալտով: Շարունակվում է թաղամասի խոշոր օբյեկտներից մեկի՝ հարմանցաց տան շինարարությունը. այս շենքը մինչև զրոյական փուլն արդեն կառուցված է: Այս տարի կսկսվի մի շարք այլ շենքերի կառուցումը:

— Իսկ ինչպե՞ս է առաջ ընթանում շաբաթօրյակների կազմակերպման գործը:

— Այ, այս մասին ուրախալի ոչինչ չեմ կարող ասել: Միշտ ասած, անցյալ տարի շեֆ կազմակերպության կոլեկտիվը շատ մեծ խանդավառությամբ նախաձեռնեց կառույցին օգնություն ցույց տալու գործը և բավական աշխատանք կատարեց, բայց անցյալ տարեվերջին այդ ոգևորությունը անսպասելի մարեց, իսկ այս տարի նրանք այդպես էլ դեռ չեն եկեղել շինհրապարակում: Ասենք, դա. իրենց գործն է, քանի որ շաբաթօրյակները կազմակերպվում են միայն կամավորության սկզբունքով:

...Գարունը մտել է իր իրավունքների մեջ: Ջորագյուղում սկսվում են շինարարական աշխատանքների եռուն օրերը: Պետք է սպասել, որ, չնայած բոլոր դժվարություններին, շինարարների կոլեկտիվը կկարողանա պատվով կատարել այս տարվա շինարարական առաջադրանքների ծրագիրը:

Ս. ՄԵԼԻՔՅԱՆ

ԵՎԱՐԵՐՈՒՄ

Փայտագործի տան շինարարությունում. Ղարաշեհ Ղ. Օքարյանը և Ա. Թադևոսյանը աշխատանքի ժամին:

Ղարաշ Հեռիկ Թորոսյանը:

Լուսանկարները՝ Հ. ԲԵՐԲԵՐՅԱՆԻ

ԼՈՒՍԻՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ՀԱԱՊՊԹ

ՀԱՅՈՑ ԱԶԳԱԳՐՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆՈՒՄ ՊԱՀՎՈՂ ԶԵՅՎԱՅԻ (ՂԸԶԸԼ ԹԱՓԱ) ՀՆԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՎԱՔԱԾՈՒՆ

(դասակարգման և տիպաբանման փորձ)

Սույն հոդվածում նպատակ ենք դրել գիտական հանրությանը ներկայացնելու տակավին երիտասարդ հնագետ Լ. Բարսեղյանի և իր գործընկերների կողմից Զեյվա-Մեծամորի տարածքում 1959-1963 թթ. իրականացված նախնական-հետախուզական պեղումների արդյունքները: Բանն այն է, որ Մեծամոր հնավայրը 1965 թ. առ այսօր պարբերաբար պեղող մասնագետներն այդ նյութերն ուշադրության չեն արժանացրել, ինչի արդյունքում էլ վերջիններս, ըստ էության, դուրս են մնացել գիտական շրջանառությունից, թեև այդ մասին որոշ նախնական հաղորդումներ հրապարակվել են մասնագիտական պարբերականում:[1] Ժամանակի ընթացքում Զեյվա-Մեծամորում պեղված դամբարանային նյութերի հիմնական մասը հանգրվանել է Հայաստանի պատմության թանգարանում, իսկ Սարդարապատի ազգագրության թանգարանի բացումից հետո՝ 1978 թ., նյութերի հիմնական մասը տեղափոխվել է այստեղ:[2] 1959-1960 թթ. սկզբներին Զեյվայի (նախկին՝ Ղըզըլ-թափա) հնավայրում[3] կատարած հետախուզական պեղումների ժամանակ բացված դամբարանային համալիրներին տրվել են նախնական (դաշտային) համարներ, որոնցով էլ դրանք գրանցվել են Հայոց ազգագրության թանգարանում (այսուհետև՝ ՀԱԹ), ստանալով ՀԱՊԹ-1236/Հ-45 հավաքածու անվանումը:

Զեյվա-Մեծամորում 1965 թ. հնագետ Է. Խանզադյանի ղեկավարությամբ սկսվել են կանոնավոր պեղումներ միջնաբերդում և ցամաքուրդային առվի եզրին, որտեղ

---

[1] **Բարսեղյան Լ.,** *Ուշ շրջանի մի քանի նորայիայտ պաշտամունքային հուշարձաններ*, ՊԲՀ, # 3, 1962 էջ էջ 259-260: Այստեղ ներկայացվում է իր ղեկավարած արշավախմբի կողմից 1961 թ. հայտնաբերած պաշտամունքային հուշարձանների մասին, որ այժմ պահպանվում և ցուցադրվում են «Մեծամոր» պատմահնագիտական արգելոց-թանգարանում:

[2] Լ. Ա. Բարսեղյանը մի շարք թանգարանների գիտական ցուցադրությունների հեղինակ է: Նա ղեկավարել է Էրեբունի ամրոցի, Գառնիի տաճարի, Դսեղի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանի (1968-1972 թթ.) վերականգնման ու վերանորգման աշխատանքները: Որպես տնօրեն պաշտոնավարել է ՀԱՊԹ-ում 1978-1985 և 2005-2007 թթ.: Լինելով ՀԽՍՀ Մշակույթի նախարարության մշակութա-լուսավորչական հիմնարկների վարչության պետ (1973-1978 թթ.)՝ հաջողացրել է Հայոց ազգագրության թանգարանի ֆոնդերը համալրել ՀՊՊԹ-ից ստացված՝ Զեյվայի պեղումների առաջին գտածոներով:

[3] Ներկայումս բնակավայրը կոչվում է Տարոնիկ, իսկ հնավայրը՝ Մեծամոր հնագիտական հուշարձան:

բացվել են 9-ը դամբարաններ: Հնագետն այդ դամբարանների համարակալումը սկսել է 1-ից, ինչի հետևանքով Լ. Բարսեղյանի նախկինում պեղած համալիրները դուրս են մնացել ընդհանուր համարակալումից, իսկ արդյունքում՝ նաև գիտական շրջանառությունից:

Հնագետ Է. Խանզադյանն իր գործընկերների՝ երկրաբան Կ. Մկրտչյանի և աստղագետ Է. Պարսամյանի հետ համատեղ, 1973 թ. հրատարակելով Մեծամորի 1965-1966 թթ. պեղումների արդյունքներին նվիրված աշխատություն, առաջին գլխում հպանցիկ խոսում է 1963 թ. Լ. Բարսեղյանի կողմից բացված դամբարանների մասին, նշում, որ վերջիններս տիպական են միջին և ուշ բրոնզի շրջափուլերին,[4] սակայն առանձին դամբարանային կառույցները նկարագրելիս չի ներկայացնում դրանք և կենտրոնանում է միայն իր բացած դամբարանների վրա:[5] Վերոնշյալ նյութերը տիպաբանական համեմատության մեջ դրվելով «թազաքենդյան» մշակույթի դրսևորումների հետ, ժամանակին ամփոփ ներկայացվել են հնագետ Հ. Մարտիրոսյանի մենագրության մեջ:[6] Հեղինակը դրանք առանձնացրել է նաև իր մեկ այլ ուսումնասիրության մեջ՝ ուշ բրոնզի շրջափուլի նյութական մշակույթին բնորոշ առարկաների խմբում և ներառել իր տիպաբանության աղյուսակում,[7] ուր, մասնավորապես, առանձին ներկայացված են Զեյվայից 1962 թ. հայտնաբերված դաշույնները (աղ. 15-9, 10):

Զեյվայի (Ղըզըլ-թափա) հավաքածուն (ՀԱՊԹ 1236/Հ-45) ներառում է 127 թանգարանային նմուշ, որոնք պեղվել են և՛ հին բնակատեղիում, և՛ դամբարանադաշտում: Դրանց մեջ կան խեցեղենի բեկորային և ամբողջական օրինակներ, բազալտից հավանգներ, աղորիքներ, օբսիդիանից նետասլաք, քարից դանակ և հատիչ, ինչպես նաև բրոնզից դաշույններ, ասեղ և այլն: Թանգարանային առարկաների նկարագիրը և թվագրումը 2007 թ. կատարել է հնագետ Լ. Պետրոսյանը: Սույն աշխատանքում քննարկվող թանգարանային առարկաների թվագրման խնդիրները հստակեցրել ենք հնագետ, պ.գ. դ., պրոֆ. Ա. Փիլիպոսյանի հետ:

---

[4] **Խանզադյան Է.**, **Մկրտչյան Կ.**, **Պարսամյան Է.**, *Մեծամոր (Ուսումնասիրություն 1965-66 թթ. պեղումների տվյալներով),* Երևան, 1973, էջ 51, աղ. VIII:

[5] **Խանզադյան Է.**, **Մկրտչյան Կ.**, **Պարսամյան Է.**, նշվ. աշխ., էջ 166:

[6] **Мартиросян А.**, *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ереван, 1964, с. 88-89, 177.

[7] **Մարտիրոսյան Հ.**, *Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր*, ՀՀՀ, Բրոնզեդարյան հուշարձաններ, պրակ II, Երևան 1969, 1-ին մեծ աղյուսակը, աղ. 15, նկ. 9, 10:

Հավաքածուն կազմող արժեքները թանգարանում գրանցվելիս ստացել են հերթական համարներ: Ընդունման ակտի (այսուհետ՝ Ը/Ա) տեղեկույթի համաձայն հայտնի է, որ դրանք հայտնաբերվել են №1 (8 իր, աղ. 1), № 2 (6 իր, աղ. 2) և պատահական (113 իր) բացված դամբարաններից: Նշված դամբարանների մասին բավարար դաշտային նկարագրերը բացակայում են և դրանց հստակ տեղադրության, դամբանախցերի ձևերի, դասավորության, կմախքների դիրքի և այլ մանրամասների մասին տվյալներ չկան: Ըստ մատյանի գրանցման, նույն դամբանախցում ներառված նյութերը մշակութային տարբեր պատկանելություն ունեն և վերաբերում են տարաժամանակյա շրջափուլերի:[8] Ինչևէ, այսօր ունենք այն, ինչ ունենք և, ըստ այդմ, արդեն մատյանում ֆիքսված թիվ 1 և թիվ 2 դամբարանների նյութերը կներկայացնենք ըստ ժամանակագրական հաջորդականության:

1961 թ. պեղված Զեյվայի (հիմա՝ Մեծամորի) № 1 դամբարանում (ՀԱՊԹ 1236/6, 7, 8, 9, 10, 11, 82, 84), ներառված է ութ առարկա:

Դրանց առաջին խումբը ներկայացված է հարթ ու ընդգծված հատակով, երկկոնիկ իրանով, երկար, գլանաձև վզով, կլոր և դուրս ճկված շուրթով, վզի հիմքում և իրանի լայն մասում՝ հորիզոնական նեղ ակոսագոտիներով, փայլանախշ ուղղահայաց գծերով ու փայլանախշով ցանցերով զարդարված սև-փայլեցրած սափորով (1236/6; բարձր.՝ 18,0 սմ, բեր. տր.՝ 11,7 սմ, հատ.՝ 10,3 սմ; աղ. I-1), հարթ հատակով, երկկոնիկ իրանով, շուրթի կլոր դուրս փռված պսակով, երկու ակոսագոտիներով ու ուղղահայաց իջնող փայլանախշ գծերով, սև-մոխրագույն կճուճով (1236/7; բարձր.՝ 22,0 սմ, բեր. տր.՝ 10,7 սմ, հատ.՝ 9,3 սմ; աղ. I-6) և երկսայր, քառակող, դուրանման բրոնզե ասեղով (1236/84; երկ.՝ 9,6 սմ, հաստ.՝ 0,4 սմ; աղ. I-7): Ներկայացված նյութը պատկանում է ուշբրոնզեդարյան լճաշեն-մեծամորյան մշակույթին և կարող է վերաբերել մ.թ.ա. XIII-XII դդ.: Հենց այդպիսի թվագրում են առաջարկում ներկայացված նյութերի համար նաև հնագետներ Է. Խանզադյանն[9] ու Հ. Մարտիրոսյանը[10]:

---

[8] Այսօր դժվար է պարզել ի սկզբանե կոնկրետ դամբանախցում իրոք եղել են տարաժամանակյա նյութեր և այն կրկնակի կամ եռակի թաղումներ է պարունակել (ինչը չի բացառվում այդ փուլի դամբարանային համալիրների համար), թե այդ ամենը ստացվել է հավաքածուն մի թանգարանից մյուսը տեղափոխելիս պատահաբար ստացված խառնաշփոթի արդյունքում:

[9] **Խանզադյան Է.**, **Մկրտչյան Կ.**, **Պարսամյան Է.**, նշվ. աշխ., էջ 31-32:

[10] **Мартиросян А.**, նշվ. աշխ., էջ. 88, աղ.. 177:

Նույն դամբարանի գույքակազմում են հաշվառված նաև քիչ զոգավոր հատակով, ուռուցիկ իրանով և վզի հիմքում 4 հորիզոնական ակոսագոտիներով սև փայլեցրած սափորը (1236/9; բարձր.՝ 17,5 սմ, բեր. տր.՝ 9,0 սմ, հատ.՝ 7,5 սմ; աղ. I-4), ինչպես նաև երկար, հարթ պոչուկով, ուղիղ ուսերով, երկթեք շեղբով բրոնզե դաշույնը (1236/82; երկ.՝ 17,6 սմ, ուսի լայնքը՝ 2,9 սմ, պոչուկը՝ 4,5x1,0 սմ; աղ. I-8): Այս նյութերն էլ վերաբերում են մ.թ.ա. XIV-XIII դդ., ինչն իր գրքում հաստատում է հնագետ Հ. Մարտիրոսյանը (թեև դաշունը ներկայացնում է որպես Զեյվայի № 2 դամբարանից գտնված):[11]

Ըստ Ը/Ա-ի տեղեկույթի՝ այս նույն դամբարանից է նաև հարթ հատակով, երկկոնաձև փքուն իրանով, շուրթի կլոր դուրս ճկված պսակով, երկու ակոսագոտիների մեջ արված խորակոս ուղղահայաց մատնեքներով սև, թույլ փայլեցրած մակերեսով կճուճը (1236/8; բարձր.՝16,5 սմ, բեր. տր.՝14,6 սմ, հատ.՝10,5 սմ; աղ. I-3) և հարթ հատակով, ցածրանիստ, փքուն իրանով, դուրս թեքված շուրթով, ուսից վզին անցնող ակոսագոտիներով և խորադիր, սերմնանախշ հորիզոնական զարդագոտիով մոխրագույն կճուճը (1236/10; բարձր.՝11,0 սմ, բեր. տր.՝ 17,0 սմ, հատ.՝ 8,0 սմ; աղ. I-2): Այս նյութերն էլ վերաբերում են վաղերկաթեդարյան շրջափուլին և կարող են թվագրվել մ.թ.ա. XI-X դդ.:

Ըստ թանգարանում առկա փաստաթղթի, Զեյվայի (Մեծամորի) № 1 դամբարանում է պեղվել նաև թույլ ուռուցիկ հատակով, ուղիղ կողերով, գորշ, անփայլ քրեղանը (1236/11; բարձր.՝ 4,3 սմ, բեր. տր.՝ 8,5 սմ, հատ.՝ 3,5 սմ; աղ. I-5), որ վերաբերում է միջին բրոնզի շրջափուլին (սևան-արցախյան մշակութային խումբ) և կարող է թվագրվել մ.թ.ա. XVII-XVI դդ.:

Այսպիսով, եթե ըստ Ը/Ա-ի իմի բերենք Զեյվայի (Մեծամորի) № 1 դամբարանի գույքակազմի նկարագրությունը, կստացվի, որ այն մեկ դամբանախցում երեք տարբեր շրջափուլերին բնորոշ նյութեր է պարունակում, որոնց ընդհանուր թվագրումը ներառվում է մ.թ.ա. XVII-IX դդ. ժամանակային սահմաններում:

Առարկաների հաջորդ խումբը, որ ըստ Ը/Ա-ի կարելի է խմբավորել մեկ համալիրում, դա ցամաքուրդային գետի ափին պեղված № 2 դամբարանի նյութերն են: Այս դամբարանի 6 առարկաները (ՀԱՊԹ 1236/1, 2, 3, 4, 5, 83) ևս տարաժամանակյա

[11] **Мартиросян А. А.,** *Армения в …*, 1964, с.. 88, աղ. VI, 1:

են: Դրանց մեջ է միջին բրոնզի շրջափուլի սևան-արցախյան մշակույթին (մ.թ.ա. XVII-XVI դդ.) պատկանող, հարթ հատակով, գնդաձև իրանով, դուրս թեքված կլորավուն շուրթով, իրանի վերին հատվածում գալարադրոշմիչով արված զույգ գծային զարդանախշով մոխրագույն կճուճը (1236/2; բարձր.՝ 13,0 սմ, բեր. տր.՝ 11,5 սմ, հատ.՝ 7,0 սմ; աղ. II-4):

Նույն դամբանախցից են նաև երկկոնիկ իրանով, բարձր վզով, հորիզոնական ակոսագոտիների մեջ արված խորադիր գծանախշերով սև փայլեցրած 2 սափորները (1236/3; բարձր.՝ 15,6 սմ, բեր. տր.՝ 8,3 սմ, հատ.՝ 5,5 սմ, 1236/4; բարձր.՝ 18,0 սմ, բեր. տր.՝ 8,8 սմ, հատ.՝ 6,5 սմ; աղ. II-1,2) և հարթ, շեշտված նստուկով կճուճը (1236/5; բարձր.՝ 15,5 սմ, բեր. տր.՝ 14,0 սմ, հատ.՝8,0 սմ; աղ. II-3), որ վերաբերում են մ.թ.ա. XIV-XIII դդ.:

Ըստ Ը/Ա-ի տեղեկույթի Զեյվայի № 2 դամբարանից է գտնվել տափակ, լայն պոչուկով, բարձր ուսերով, տերևաձև շեղբով, սրածայր, կտրվածքում՝ էլիպսաձև բրոնզե դաշույնը (1236/83; երկ.՝ 21,0 սմ, ուսի լայնքը՝ 4,0 սմ, պոչուկը՝ 3,7x1,8 սմ; աղ. II-6), որ Ա. Փիլիպոսյանը թվագրում է մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսով:[12]

Նույն դամբարանից կա նաև հարթ հատակով, երկկոնիկ իրանով, կարճ, նեղ վզով, շեփորաձև դուրս թեքված շուրթով, շուրթից սկսվող ցցուն ելուստ ունեցող աղեղնաձև մեկ կանթով, իրանի վերին մասում ակոսագոտիների մեջ վերցված մատնեքներով, փոքր, գորշ սափորիկը (1236/1; բարձր.՝15,0 սմ, հատ.՝ 5,5 սմ; աղ. II-5), որ վերաբերում է մ.թ.ա. VII-VI դդ.:

Այսինքն, ըստ Հայոց ազգագրության թանգարանի Ը/Ա-ի, Զեյվայի (Մեծամորի) № 2 դամբարանից հայտնաբերված նյութերը ևս երեք տարբեր ժամանակահատվածներ են ներկայացնում և, ընդհանուր առմամբ, կարող են տեղավորվել մ.թ.ա. XVII/XVI–VII/VI դդ. ժամանակային սահմաններում:

Զեյվա (Կըզըլ-թափա) - Մեծամորում 1959-1962 թթ. Լ. Բարսեղյանի կողմից պեղված նյութերում կան 113 առարկաներ, որ հստակ ֆիքսում չունեն. ուստի, սույն հոդվածում վերջիններս ներկայացվում են ըստ ժամանակագրական հաջորդականության:

[12] **Փիլիպոսյան Ա.**, *Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը*, Եր. 1999, էջ 16:

Վաղ բրոնզի շրջափուլ: Վերոնշյալ հավաքածուի մեջ կան վանակատե, կայծքարե շեղբեր, վանակատե նետասլաքի բեկոր (1236/86; 1236/87; 1236/85), ծակոտկեն բազալտից աղորիքների (1236/77; 1236/81/1-5), քարե կացնի (1236/78), լավ մշակումով բազալտե հավանգների (1236/75; 1236/80) մնացորդներ, որոնց բազմաթիվ զուգահեռները հանդիպում են Շենգավթի, Հառիճի, Այգևանի, Մոխրաբլուրի, Ջրահովտի, նույն Մեծամորի և Հայաստանի վաղբրոնզեդարյան այլ հուշարձանների հնագիտական համալիրներից ու հստակ վերաբերում են մ.թ.ա. III հազարամյակին (աղ. III, նկ. 1-12):

Միջին բրոնզի շրջափուլ: Նույն հավաքածուում հանդիպում են նաև միջինբրոնզեդարյան կարմիրբերդյան մշակույթին բնորոշ գունազարդ (աղյուսագույն մակերեսին սևով արված երկրաչափական բնույթի նախշերով) քրեղանի շուրթի բեկոր (1236/33-1) և սևան-արցախյան մշակույթին պատկանող մոխրագույն-սև, գնդաձև իրանով, կարճ, գլանաձև, փոքր-ինչ դուրս թեքված վզով, շուրթի կլոր պսակով և իրանի վերին հատվածում գալարադրոշմիչով արված խորադիր կետաշար գոտիով զարդարված կճուճի 2 բեկոր (1236/57), և թվագրվում են մ.թ.ա. XVII-XVI դդ. Ժամանակաշրջանով (աղ. IV-1,2):

Ուշ բրոնզի շրջափուլ: Այս հավաքածուի մեջ են նաև սև փայլեցրած մակերեսով և իրանի տարբեր հատվածներում երկրաչափական բնույթի փայլազարդ խորադիր գծային նախշերով սափորների, քրեղանների ամբողջական օրինակներ և բեկորներ (1236/12; 1236/17; 1236/18; 1236/23; 1236/27; 1236/29; 1236/35; 1236/37-3; 1236/43-2; 1236/44-1,2; 1236/49-1,2; 1236/53; 1236/51; 1236/58; 1236/69; 1236/61-1; 1236/69; 1236/73; 1236/74), որոնք իրենց արտաքին հատկանիշներով և պատրաստման առանձնահատկություններով միանշանակ տեղավորվում են մ.թ.ա. XIV-XII դդ. ժամանակային սահմաններում (աղ. IV, նկ. 3-9):

Երկաթի դարաշրջան: Հավաքված նյութերում առանձին ներկայացուցչական խումբ են կազմում մ.թ.ա. XII/XI – IX/VIII դդ. վերաբերող սափորները, կճուճները, քրեղանները, թասերն ու կավանոթները (1236/14; 1236/16; 1236/19; 1236/21; 1236/22; 1236/33; 1236/34; 1236/34-1,2; 1236/37-1,2; 1236/38; 1236/39-1,2; 1236/41-1,2; 1236/45-2; 1236/46-1,2,3,4; 1236/48-2,3; 1236/52; 1236/55; 1236/59; 1236/60; 1236/63բ; 1236/64-2; 1236/65; 1236/67-2; 1236/68; 1236/70-1,2; 1236/72; աղ. V, նկ. 1-11):

Երկաթի լայն տարածման ժամանակաշրջան: Հայոց ազգագրության թանգարանում պահվող երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի նյութերը բաժանվում են 3 փուլի և ունեն հետևյալ թվագրումները:

- Մ.թ.ա. IX-VIII դդ.՝ սև կամ մոխրագույն մակերեսով, նեղ շեփորանման վզով, երկթեք և գրեթե գլանաձև իրանով, նուրբ, կլոր շուրթով, աղեղնաձև կանթով, փայլանախշումով և ակոսագոտիներով զարդարված բեկորներ [սափորի վզի հատված (1236/54 - բարձր.՝ 7,4 սմ, բեր. տր.՝ 7,8 սմ; աղ. VI-1), գավաթի մաս (1236/62 - 8,0x8,5 սմ; աղ. VI-2), քրեղանի բեկոր (1236/63ա - 13,0x7,7x16,5 սմ)]:
- Մ.թ.ա. VIII-VII դդ.՝ սև փայլեցրած մակերեսով, ուղղահայաց և հորիզոնական լայնակոս գծերով զարդարված մեծ կճուճի բեկոր (1236/36 - 10,0x8,0 սմ; աղ. VI-3):
- Մ.թ.ա. VII-VI դդ. նմուշներ են սև, փայլեցրած, նեղ վզով, վրան՝ ուղղահայաց փայլուն գծերով, իսկ հիմքում՝ լայն, ալիքավոր ակոսագոտիներով լցված, գնդաձև իրանով և հարթ հատակով սափորը (1236/13 - բարձր.՝ 20 սմ, վզի տր. շուրթի մոտ՝ 6,3 սմ, հատ. տր.՝ 6,5 սմ), կարմրագույն մակերեսով, ուղղահայաց ուռուցիկ ելուստազարդ ուսերով, դուրս ճկված շուրթից սկսվող ժապավենաձև կանթով, երկու բարակ ակոսագոտիներով շուրթի և կանթի մասով կճուճի բեկորը (1236/42-1; աղ. VI-4) և անհարթ, փոքր-ինչ ներս ընկած սև փայլեցված մակերեսով հատակի բեկորը (1236/61):

<u>Երվանդունիների և աքեմենյան շրջան</u>: Զեյվայի հավաքածուում տեղ է գտել նաև երվանդունիների կան աքեմենյան շրջանին վերաբերող (մ.թ.ա. VI դ.) մեկ, թերի պահպանված կավանոթ: Այն կարմիր, անփայլ մակերեսով, լայնաբերան, պրոֆիլավորված շուրթով, փոքր-ինչ բարձր, հարթ նստուկով, այրվածքի բազմաթիվ հետքերով բեկորային թաս է (1236/50; աղ. VI-5)՝ զարդարված դեպի նստուկը իջնող ուղղահայաց թույլ ակոսագծերով:

<u>Միջնադարյան նյութեր</u>: Հավաքածուում տեղ են գտել նաև միջնադարին (XI-XIII դդ.) վերաբերող նյութեր (1236/29; 1236/41-3; 1236/42-2; 1236/45-1; 1236/51; աղ. VI-6):

<u>Ամփոփում</u>: Ավարտելով 1959-1962 թթ. նախկին Զեյվա (Ղըզըլ թափա)՝ ներկայիս Մեծամոր հնավայրում Լ. Բարսեղյանի իրականացրած նախնական պեղումների արդյունքում հայտնաբերված նյութերի (ՀԱՊԹ 1236/Հ-45) համառոտ վերլուծությունը,

ևս մեկ անգամ նշենք, որ, չնայած սկզբնական շրջանում արված առարկայական ընդհանրական անդրադարձերին, այն առավել համակողմանի և ամբողջական ուսումնասիրության կարիք ունի, իսկ այս հրապարակման նպատակն է ամբողջացնել գիտական շրջանառությունից դուրս մնացած Մեծամոր հնավայրի արտեֆակտերը: Այդ իսկ նպատակով առավել ենք կարևորում այս նյութի գիտական շրջանառության մեջ դրվելը:

Սույն դիտարկումները կարևոր են նաև այն առումով, որ Մեծամոր հնավայրի վերաբերյալ հետագա համապարփակ հրատարակությունների ժամանակ անհրաժեշտ վերահամարակալման արդյունքում, սույն հավաքածուն կամբողջացնի Մեծամոր հնավայրի պեղումների արդյունքների մի կարևոր մասը:

Աղյուսակների ցանկ

1. ***Աղյուսակ I.*** Դամբարան № 1: Մ.թ.ա.XVII-XVI դդ. (5-թաս՝ 1236/11); մ.թ.ա. XIV-XIII դդ. (3-սափոր՝ 9; 7-ասեղ՝ 84; 8-դաշույն՝ 82), մ.թ.ա. XI-IX դդ.(1-սափոր՝ 6; 6-կճուճ՝ 7), մ.թ.ա. XIII-XII դդ.(2-կճուճ՝ 10; 4-կճուճ՝ 8):
2. ***Աղյուսակ II.*** Դամբարան № 2: Մ.թ.ա.XVII-XVI դդ. (4-կճուճ՝1236/2); մ.թ.ա. XIV-XIII դդ. (2-սափոր՝ 3; 3-սափոր՝ 4; 5-կճուճ՝ 5; 6-դաշույն՝ 83); մ.թ.ա. VII-VI դդ. (1-սափոր՝ 1):
3. ***Աղյուսակ III.*** Պատահական գտնված առարկաներ: Մ.թ.ա. III հազ. (1-12; 1-2. խեցու բեկորներ՝ 1236/64 (1), 66 (1); 3,4. սանդեր՝ 75, 80; 4-8. նավակաձև աղորիքների բեկորներ՝ 81(1-3), 77; 9. քարե գործիք (կացին)՝ 78; 10. նետասլաք՝ 85; 11-12. շեղբ-դանակներ՝ 86 և 87):
4. ***Աղյուսակ IV.*** Պատահական գտնված առարկաներ: Մ.թ.ա. XVII-XVI դդ. (1-կճուճի բեկորներ՝ 1236/57; 2-թասի բեկոր՝ 33(1)), մ.թ.ա. XVI-XV դդ. (3-կճուճ՝ 29; 4-կճուճ՝ 51), մ.թ.ա. XIII-XII դդ. (5-կճուճ՝ 1236/12; 6-սափորի բեկոր՝ 35, 7. կճուճի բեկորներ՝ 69), մ.թ.ա. XIII-XI դդ. (8-իրանի բեկոր՝ 44(2), մ.թ.ա. XII-XI դդ. (9-քրեղանի բեկոր՝ 34):
5. ***Աղյուսակ V.*** Պատահական գտնված առարկաներ: Մ.թ.ա. XII-XI դդ. (1-քրեղան՝ 22; 2-կճուճի բեկորներ՝ 52), մ.թ.ա. XI-IX դդ. (3-կճուճի բեկոր՝ 39(2), 4. շուրթի

բեկոր՝ 64(2); 5-կճուճի իրանի բեկոր՝ 65); մ.թ.ա. XI-X դդ. (6-կճուճ՝ 1236/16, 7-ուսի և բռնակի բեկոր՝ 46(2), 10-կճուճի բեկորներ (60), 8. հատակի բեկոր (34(2)), մ.թ.ա. X-IX դդ. (9-գավաթ՝ 14, 11-նախշազարդ բեկոր՝ 37(2)):

6. ***Աղյուսակ VI.*** Պատահական գտնված առարկաներ: Մ.թ.ա. IX-VIII դդ. (1-սափորի վզի բեկոր՝ 1236/54, 2-գավաթի բեկոր՝ 62). մ.թ.ա. VIII-VII դդ. (3-կճուճի իրանի բեկոր՝ 36); մ.թ.ա. VII-VI դդ. (5-սափոր՝13); մ.թ.ա. VI դ. (4-աքեմենյան թասի բեկորներ՝ 50), մ.թ. XI-XIII դդ. (6-միջնադարյան խուփի բռնակ՝ 42(2)):

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Ալիշան Ղ.,** *Այրարատ*, Վենետիկ, 1890:
2. **Բարսեղյան Լ.,** *Ուշ շրջանի մի քանի նորայիայտ պաշտամունքային հուշարձաններ*, «Պատմա-բանասիրական հանդես», Երևան, 1962, № 3:
3. **Խանզադյան Է., Մկրտչյան Կ., Պարսամյան Է.,** *Մեծամոր (Ուսումնասիրություն 1965-66 թթ. պեղումների տվյալներով),* Երևան, 1973:
4. **Մարտիրոսյան Հ.,** *Ուշ բրոնզեդարյան բնակավայրեր և դամբարանադաշտեր*, Հայաստանի հնագիտական հուշարձանները, Բրոնզեդարյան հուշարձաններ, պրակ II, Երևան 1969:
5. **Տեր-Մովսեսյան եպ. Մ.**, *Արարատի և Արագածի գագաթներին*, «Արարատ», Էջմիածին, 1973, № 1:
6. **Փիլիպոսյան Ա.**, *Հին Արևելքի շրջանակավոր դաստակով դաշույններն ու սրերը*, Երևան, 1999:
7. **Мартиросян А. А.**, *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ереван, 1964:

նկ. 1

նկ. 2

նկ. 3

նկ. 4

նկ. 5

նկ. 6

նկ. 7

նկ. 8

Դամբարան № 1: Մ.թ.ա. XVII-XVI դդ. (5); մ.թ.ա. XIV-XIII դդ. (3, 7, 8), մ.թ.ա. XI-IX դդ. (1, 6), մ.թ.ա. XIII-XII դդ. (2 ,4)

նկ. 1

նկ. 2

նկ. 3

նկ. 4

նկ. 5

նկ. 6

Դամբարան № 2: Մ.թ.ա. XVII-XVI դդ. (4); մ.թ.ա. XIV-XIII դդ. (1, 2, 3, 6); մ.թ.ա. VII-VI դդ. (5)

նկ. 1

նկ. 2

նկ. 3

նկ. 4

նկ. 5

նկ. 6

նկ.7

նկ. 8

նկ. 9

նկ. 10

նկ. 11

նկ. 12

Պատահական գտնված առարկաներ (մ.թ.ա. III հազ.)

նկ. 1

նկ. 2

նկ. 3

նկ. 4

նկ. 5

նկ. 6

նկ. 7

նկ. 8

նկ. 9

Պատահական գտնված առարկաներ: Մ.թ.ա. XVII-XVI (1-2); մ.թ.ա. XVI-XII (3-9)

նկ. 1

նկ. 2

նկ. 3

նկ. 4

նկ. 5

նկ. 6

նկ. 7

նկ. 8

նկ.9



նկ. 10

նկ.11

Պատահական գտածոներ: Մ.թ.ա. XII/XI-IX/VIII դդ.

նկ.1

նկ.2

նկ.3

նկ.4

նկ.5

նկ.6

Պատահական գտնված առարկաներ:
Մ.թ.ա. IX-VIII դդ. (1, 2). մ.թ.ա. VIII-VII դդ. (3), մ.թ.ա. VII-VI դդ. (5);
մ.թ.ա. VI դ. (4), մ.թ. XI-XIII դդ. (6):

ՄԻՔԱՅԵԼ ԲԱԴԱԼՅԱՆ
«Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարան,
«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ

ՈՒԱՐՈՒԲԱՆԻՆ, ԲԱԳԲԱՐԹՈՒՆ (ԲԱԳՄԱՇԹՈՒՆ) ԵՎ ՕՁԱՍԱՐԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ «ԽԱԼԴԻԻ ԿԻՆԸ»[1]

Ներածություն: Վանի թագավորության կրոնի, դիցարանի ուսումնասիրության համար կարևոր նշանակություն ունի նաև տերության գերագույն աստված Խալդիի կանանց կերպարների, գործառույթների ուսումնասիրությունը: Չնայած մի շարք արժեքավոր հետազոտություններին, այնուամենանիվ Խալդիի և նրա կնոջը կամ կանանց վերաբերող հարցերը դեռևս դժվար է սպառված համարել:

Արդյո՞ք Ուրարտուի հովանավոր աստվածը սկզբնական շրջանում ունեցել է կողակից: Ըստ Ե. Գրեկյանի՝ Խալդին, ինչպես և նորասորեստանյան Աշշուրը, սկզբնական շրջանում ընկալվել է որպես ամուրի աստվածություն:[2] Կան կարծիքներ, համաձայն որոնց, ուրարտական գերագույն աստվածությունը ունեցել է երկսեռ բնույթ:[3] Մի շարք հետազոտողների կողմից ընդունված է Ուրարտուի գերագույն աստծո կին համարել Ուարուբանիին[4] Այս կարծիքների գլխավոր կռվանը ականավոր ուրարտագետ Գ. Մելիքիշվիլու այն տեսակետն է, համաձայն որի Միերի Դռան արձանագրության մեջ, այսպես կոչված աստվածուհիների շարքում, Ուարուբանին առաջինն է, հետևաբար՝ Վանի թագավորության դիցարանի գերագույն աստծո զուգորդը: Մանրամասն ուսումնասիրելով Միերի Դռան արձանագրության տեքստը՝ Գ. Մելիքիշվիլին հանգեց այն եզրակացության, որ ուրարտական դիցարանը բաղկացած է եղել արական և իգական աստվածություններից: Տեքստում հիշատակվող մեկից մինչև վաթսունչորսերորդ աստվածություններին նա համարում էր արական, իսկ վաթսունչորսից մինչև յոթանասունինը՝ իգական: Այս տարբերակման համար կռվան էր ծառայում այն փաստը, որ տեքստի

---

[1] Դեռևս 2012 թ. մենք հրատարակվել ենք «Ուարուբանիի և Բագբարթուի հարաբերակցության շուրջ» վերնագրով մի հոդված (**Մ. Բաղալյան**, 2012, էջ, 23-39): Ցավոք, հոդվածում տեղ էին գտել տարբեր բնույթի վրիպակներ: Սույն հոդվածը վերը նշված աշխատության լրամշակված տարբերակն է, որտեղ առաջ են քաշվում մի շարք նոր մոտեցումներ և տեսակետներ: Հոդվածի պատրաստման ընթացքում ցուցաբերած համակողմանի օժանդակության համար մեր խորին շնորհակալությունն ենք հայտնում **Ս. Գրիգորյանին**, **Ք. Մարտիրոսյան-Օլշանսկուն** և **Ռ. Սարգսյանին:**

[2] **Grekyan** 2006: 155.

[3] **Հմայակյան** 1990: 35-36:**Çilingiroğlu** 2004: 259. **Baştürk** 2014: 180-186:

[4] Տե՛ս՝ **Հմայակյան** 1990, 38-41: **Grekyan** 2006, 162-163՝ հղված գրականությամբ):

աստվածություններին զոհաբերվող կենդանիների հատվածում բազմիցս կրկնվում էին GU4 «ցուլ» գաղափարագիրը և GUD. ÁB «կով» լոգոգրամը[5]: Քանի որ Ուարուբանին գլխավորում էր այն աստվածությունների շարքը, որոնց GU4. ÁB էր զոհաբերվում (Մելիքիշվիլին GU4. ÁB-ը նույացնում է GUD. ÁB-ի հետ), ապա հայտնի ուրարտագետը վերջինիս համարում էր դիցարանի գերագույն աստվածուհին և Խալդիի կինը՝ այս տեսակետը հիմնավորելով նաև այն հանգամանքով, որ մի շարք ուրարտական արձանագրություններում Խալդին և Ուարուբանին հիշատակվում են միասին:[6] Զարգացնելով իր տեսակետը, Գ. Մելիքիշվիլին կարծում էր, որ աստվածուհիների ցուցակում երկրորդ տեղը համապատասխանաբար պետք է զբաղեցներ դիցարանի երկրորդ աստված Թեյշեբայի կինը, ում անունն ընթերցում է որպես Խուբա՝ համապատասխանեցնելով և որոշ զուգահեռներ անցկացնելով ուրարտական Թեյշեբայի խուռիական զուգահեռ Թեշուբի և երբեմն նրա կին հիշատակվող Խեբաթ աստվածուհու հետ:[7] Ինչ վերաբերում է աստվածուհիների շարքում երրորդը հիշատակված Տուշպուեային, ապա, ըստ Մելիքիշվիլու, վերջինս համարվել է դիցարանի երրորդ գերագույն աստված Շիվինիի կինը:

Ուարուբանիին է նույնացվել Սարգոն II-ի տեքստերում Մուծաձիրի տաճարում որպես Խալդիի կին վկայված Բագբարթուն:[8] Վերջինս, ըստ մի խումբ գիտնականների, հանդիսացել է Ուարուբանիի մուծաձիրյան կերպավորումը:[9] Նույնիսկ շրջանառության մեջ է դրվել Ուարուբանի-Բագբարթու տերմինը:[10] Բոլորովին չբացառելով վերը բերված տեսակետների կարևորությունը, այնուամենայնիվ, հարկ ենք համարում ընդգծել, որ առ այսօր չկա որևէ ուղղակի սկզբնաղբյուր, որում Ուարուբանին վկայված լինի որպես Խալդիի կին: Որպես այդպիսին հիշատակվում է Բագբարթուն, ինչպես նաև՝ Իշպուինիի և Մենուայի թողած Օձասարի արձանագրությունում հիշատակություն կա «Խալդիի կնոջը» կով զոհաբերելու մասին:[11] Արդյո՞ք վերջինս հենց Ուարուբանին է: Արդյո՞ք Ուարուբանին նույն Բագբարթուն է, կամ նրա տեղական դրսևորումը: Եվ, ընդհանրապես, ինչպիսի՞

[5] **Melikišvili** 1965: 441-442.
[6] Նշվ. աշխ.: 443:
[7] Նշվ. աշխ.: 444-445:
[8] **Հմայակյան** 1990, 39: **Grekyan** 2006, 162.
[9] Նույն տեղում:
[10] Տե՛ս՝ օրինակ՝ **Биягов** 1974, 98-106. **Biyagov** 1978, 149-152. **Дьяконов** 1983, 191.
[11] CTU 1: A 3-8.

գործառույթներ են ունեցել «Խալդիի կանայք»: Այս խնդիրները քննարկելու հարցում մենք նպատակահարմար ենք համարել առանձին անդրադառնալ թե՛ Ուարուբանիին, թե՛ Օձասարի արձանագրության «Խալդիի կնոջը» և թե՛ Բագբարթուին:

Խնդիրներ և մեթոդ: Ի տարբերություն Հին Մերձավոր Արևելյան մի շարք տերությունների աստվածություններին և նրանց գործունեությունը բնութագրող բովանդակալից սկզբնաղբյուրների[12]՝ ուրարտական դիցարանի աստվածությունների գործառույթների վերաբերյալ մեզ հասած տեղեկությունները խիստ աղոտ են: Կարծես թե դեռևս մեզ հայտնի չէ որևէ դրվագ կամ պատում, որտեղ ներկայացված կլիներ Վանի թագավորության տարբեր աստվածների կյանքը կամ գործունեությունը: Եթե անդրադառնանք ուրարտական պատկերագրությանը, ապա այստեղ ևս չկա որևէ ուղղակի սկզբնաղբյուր, որը կմատնանշեր այս կամ այն կոնկրետ աստվածության: Օրինակ՝ Ք.ա. XIII դ. թվագրվող Շոշից գտնված բաբելոնյան կուդուրուի վրա (նկ. 1) ներկայացված են աստվածությունների խորհրդանշաններ և պատկերներ, սակայն միաժամանակ նրանցից յուրաքանչյուրի մոտ սեպագրով նշված է, թե որ խորհրդանշանը կամ պատկերը որ աստվածությանն է վերաբերում:[13] Կամ՝ Արբելա քաղաքին ձոնված հիմնի մի հատվածում տեղի Իշթարը հիշատակվում է առյուծի վրա կանգնած:[14] Այս ամենից հետո առավել հավանական է, որ Արբելայի հայտնի բարձրաքանդակներից մեկին առյուծի վրա կանգնած աստվածությունը հենց Իշթարն է: Այս հիմնավորման համար կան և՛ ուղղակի, և՛ օժանդակ սկզնաղբյուրներ: Նախ. կա Արբելային ձոնված տեքստ, և երկրորդ՝ Արբելան համարվում էր Իշթար-Մուլլիսսու աստվածուհու կարևորագույն պաշտամունքային կենտրոնը:[15] Նման օրինակներ Ուրարտուից մեզ հայտնի չեն:

Հարկ ենք համարում նշել, որ աստվածությունների պատկերներով բազմաթիվ ուրարտական առարկաներ չունեն որևէ հնագիտական համատեքստ: Դրանք հայտնի են դարձել ոչ թե հնագիտական պեղումների, այլ ապօրինի գանձախուզական

---

[12] Խեթերի առասպելների մասին տե՛ս՝ Hoffner 1990, խուռիական առասպելների մասին՝ **Wilhelm** 1989: 49-76, նորասորեստանյան տարբեր աստվածություններին նկարագրող հիմների վերաբերյալ տե՛ս SAA III: 1-20.

[13] **Black,Green** 1992, 16, pic. 7.

[14] SAA III: Psalm 8.

[15] **Cornelius** 2009, 32, fig. 3.

գործողությունների, հնությունների շուկաներից թանգարաններում կամ մասնավոր հավաքածուներում հայտնվելու շնորհիվ:[16] Շատ թե քիչ օգտակար են նման այն առարկաները (լանջապանակներ, ճակատակալներ, մարտակառքերի քարշակների պաշտպանիչ վահանակներ և այլն), որոնց վրա կա ուրարտական այս կամ այն արքայի արձանագրությունը: Այս հանգամանքի շնորհիվ դրանք որոշակիորեն կարելի է թվագրել:[17] Սակայն, մյուս կողմից, որքանով կարելի է վստահ լինել, որ նման առարկաներից գոնե մի քանիսը կեղծ չեն կամ էլ դրանք վերաօգտագործվել են ուրարտացիների կողմից: Այս առումով խիստ հետաքրքրական է Վերին Անձավ հնավայրի այսպես կոչված «Ընդունելությունների մեծ դահլիճից» գտնված հինգ օղերից բաղկացած բրոնզե շղթան՝ իր արձանագրություններով: Երկրաչափական բնույթի նախշերով զարդարված, արձանագիր այդ օղերը պարունակում են ասսուրերեն հետևյալ տեքստը. «**Խալդի աստծո ստվերը, Իշպուինին՝ Սարդուրիի որդին, մեծ արքան, հզոր արքան, տիեզերքի արքան, Նաիրի երկրների արքան, այս նվիրատվական առարկան վերցրեց Ուիտերուխիի քաղաքի պահեստից և իր տեր Խալդիին նվիրաբերեց՝ իր բարի ողջության համար»**:[18] Կարելի է ենթադրել, որ Իշպուինին (մոտ. Ք. ա. 830-820 թթ.) այն ավար է վերցրել Ուիտերեխի երկրից, այնուհետև վրան ավելացրել սեպագիր արձանագրություն, այն դարձնելով «ուրարտական» և իր սեփականությունը: Եթե չլիներ Ուիտերուխի երկրից այդ առարկայի վերցնելու հիշատակության փաստը, ապա կարելի էր այն հանգիստ որակել որպես ուրարտական: Իսկ արդյո՞ք Վանի թագավորության բոլոր միապետներն էին այդքան «հետևողական»:

Այս ամենին հակառակ, Վանի թագավորության պատկերագրության մեջ ներկայացված մի շարք աստվածություններ տարբեր հետազոտողների կողմից վերագրվել են այս կամ այն աստվածությանը: Այս առումով, բացառություն չի կազմում նաև Ուարուբանին: Ընդ որում վերջինիս վերաբերող պատկերագրային առարկաների մեծ մասը զուրկ է որևէ հնագիտական համատեքստից: Վանի մոտակայքում՝ Դարաբեյ ամրոցից պատահաբար գտնված աստվածուհու արձանիկը

[16] Այդ մասին մանրամասն տե՛ս՝ **Muscarella** 2013, 621-650.
[17] **Բաղալյան** 2015, 9:
[18] **Belli, Dincol A. Dincol B** 2009, 104.

վերագրվել է Ուարուբանիին:[19] Իսկ ինչու՞ հենց Ուարուբանիին: Գուցե դա Բաբան է, Տուշպուեան կամ մեկ այլ աստվածուհի: Հայտնի է նաև աստվածուհու այլ արձանիկ:[20] Նույն հաջողությամբ այն կարելի է վերագրել ասենք Բաբային, Ադիային և այլն: Նույնատիպ ուրարտական մի շարք առարկաներին (հատկապես թիթեղներին) պատկերված կանացի կերպարներ ևս նույնացվել են Ուարուբանիի հետ:[21] Հարկ ենք համարում նշել, որ այդ թիթեղների ճնշող մասը զուրկ է որևէ հնագիտական համատեքստից: Մյուս կողմից դրանց մեծ մասը, դատելով պատկերագրային առանձնահատ-կություններից, կարծես թե պետք է թվագրվի Ք. ա. VII դ. ոչ շուտ: Բացի այդ, օրինակ, ուրարտական թիթեղներին առյուծի վրա կանգնած աստվածության դիմացի կերպարին Ուարուբանիի հետ նույնացնելը խիստ խնդրահարույց է: Այսպես օրինակ, ըստ Ուրարտուի պատկերագրության լավագույն մասնագետներից մեկի՝ Ու. Զայդլի, Վանի թագավորության կիրառական արվեստում հաճախ հանդիպող առյուծին կանգնած աստվածությունը նման է միջագետքյան Իշթար-Շավուշկա աստվածուհու պատկերագրությանը:[22] Ուստի, ըստ գերմանացի մասնագետի, այդ դրվագներում ներկայացված է ոչ թե Խալդին, այլ ուրարտական «Իշթար-Շավուշկան»:[23]

Սույն հոդվածում փորձել ենք Ուարուբանիին և Բագբարթուին վերաբերող տեղեկությունները ներկայացնել ժամանակագրական հաջորդականության սկզբունքի հիման վրա՝ հարցերը հնարավորինս քննարկելով հինմերձավորարևելյան՝ այս դեպքում նորասորեստանյան զուգահեռների համատեքստում, օգտագործելով համեմատական-վերլուծական, վիճակագրական մեթոդները: Օբյեկտիվության պահանջներից ելնելով՝ փորձել ենք առավելագույնս զերծ մնալ լեզվաբանական, առասպելաբանական-համեմատական-«վերակազմական» նյութի քննարկումներից և հիմնվել բացառապես թեմային ուղղակիորեն առնչվող հնագիտական և դրանց հետ կապակցված գրավոր սկզբնաղբյուրների վրա:

---

[19] **Пиотровский** 1959, 223.
[20] Տե՛ս օրինակ՝ **Seidl** 2004, taf. 38-a-c.
[21] Այդ մասին տե՛ս՝ **Հմայակյան** 1990, 38-39՝ հղված և քննարկված գրականությամբ:
[22] **Seidl** 2005, 167-173.
[23] Նույն տեղում

Ուրարտուում աստվածուհուն վերաբերող ամենավաղ հիշատակությունը?: Վանի թագավորությունում աստվածուհու վերաբերող հնարավոր ամենավաղ հիշատակություն կարող է պարունակել Վանա ժայռի հարավային հատվածում գտնվող համալիրը, որի մի մասն է կազմել կամարաձև խորշը՝ իր ասսուրերեն արձանագրությամբ:[24] Կարծիքներից մեկի համաձայն, այն կերտվել է Սարդուրի I-ի (մոտ. Ք. ա. 840-830 թթ.) կողմից: Կարծիքներ կան, որ վնասված այդ տեքստում հիշատակվում է կենդանիներ զոհաբերելու փաստը, սակայն, դժվար է պարզել, թե որ աստծո անունից կամ ում համար են իրականացվել այդ արարողությունները:[25] Մ. Սալվինի հայտնած կարծիքներից մեկի համաձայն՝ այս արձանագրությունը կարող էր անգամ պատկանել ասորեստանյան միապետներից մեկին և կերտված լինել դեպի Տուշպա վերջինիս ռազմական արշավանքի ժամանակ:[26] Վ. Մայերը ակնարկում է, որ տեքստում կարծես զոհաբերություններ են կատարվելու ինչ-որ աստվածուհու համար:[27] Չի բացառվում, որ այդ աստվածուհին լիներ Ուարուբանին: Սակայն, մենք ավելի հակված ենք կարծելու, որ այդ աստվածուհուն կարող էր համապատասխանել Տուշպուեա/Տուշպունիան, ում անունն անմիջական կապ ունի Վանի թագավորության մայրաքաղաք Տուշպայի հետ:[28]

Ուարուբանի: Հոդվածը չծանրաբեռնելու համար փորձել ենք մեկ աղյուսակի մեջ զետեղել այս աստվածությանը վերաբերող մեզ հայտնի բոլոր հիշատակությունները (աղ. 1): Հիմնվելով Աշոտակերտի և Մհերի Դռան արձանագրությունների վրա՝կարելի է միանշանակ ասել, որ սկսած Իշպուինիի և Մենուայի համատեղ կառավարման շրջանից (մոտ. Ք. ա. 820-810 թթ.), Ուարուբանիի պաշտամունքը կարևոր տեղ է զբաղեցրել ուրարտական վերնախավի կրոնաքաղաքական գաղափարախոսության մեջ: Իսկ Գյուզակի տեքստը վկայում է, որ Ուարուբանիին և Խալդիին նվիրված են եղել ընդհանուր ծիսապաշտամունքային արարողություններ, որոնք ունեցել են սեզոնային բնույթ և կապված եղել խաղողի կամ գինու հետ: Մհերի Դռան, Չելեբիդաղիի և Գյովելեքի արձանագրությունների

[24] **Tarhan** 2007, 762-763.
[25] **УКН:** 297-298. **Salvini** 1982: 327-332. **Dincol, Dincol** 1986: 351-353. **Diakonoff** 1989: 93. CTU 1: A 1-2, 99-100.
[26] **Salvini** 1989: 83.
[27] **Meyer** 2013, 138-140.
[28] **Բաղալյան** 2016, 130, հղ. 95:

հաղորդումները, ինչպես նաև կով զոհաբերելու փաստը հուշում են, որ Ուարուբանին աստվածուհի է, ինչպես և ժամանակին ենթադրել է Գ. Մելիքիշվիլին: Չափազանց հետաքրքիր է նաև, որ Այանիսի, Կարմիր բլուրի և Արգիշթիխինիլի տաճարական արձանագրություններում բազմիցս Ուարուբանին հիշատակվում է Խալդիի հետ (աղ. 1): Ակնհայտ է, որ այդ տաճարներում տեղի ունեցած ծիսապաշտամունքային արարողությունների որոշ փուլեր նվիրված կամ կապված են եղել միայն Խալդիին և Ուարուբանիին: Այանիսի և Կարմիր բլուրի արձանագրություններում հիշատակվում են susi-ի առջև գտնվող ᴱsirhani կառույցում Խալդիի և Ուարուբանիի առջև ինչ-որ գործողություններ անելու մասին: ᴱsirhani-ն հիշատակվում է Այանիսի,[29] Կարմիր բլուրի,[30] Արծկեի,[31] ինչպես նաև՝ Արմավիրի[32] տաճարների կամ տաճարական համալիրների տեքստերի բավական բարդ ընթեռնելի հատվածներում: Վերը հիշատակված արձանագրությունների համատեքստը կարծես ենթադրել է տալիս, որ ᴱsirhani-ն գտնվել է susi-ի դիմաց, որտեղ Խալդիի և Ուարուբանիի առջև պետք է ինչ-որ արարողություններ իրականացվեին: Չի բացառվում, որ ᴱsirhani-ում դրվել են Խալդիի և Ուարուբանիի արձանները[33] կամ նրանց կերպավորող խորհրդանշաններ: Եթե հաշվի առնենք, որ այն գտնվել է susi-ի առջև, ապա չի բացառվում, որ ᴱsirhani-ն կարող է ուղղակի կապ ունենալ Քայալը դերեի,[34] Ալթըն-թեփեի,[35] Այանիսի[36] susi-ների առջև բացված կառույցների հետ: Կարելի է նաև ենթադրել, որ Խալդիի և Ուարուբանիի պաշտամունքի հետ են առնչվել pahazuli կառույցի շինարարության հետ կապված որոշակի արարողություններ:

Կրկին անդրադառնալով Գ. Մելիքիշվիլու վերը նշված տեսակետներին՝ պետք է նշել նաև, որ դրանք հաստատող որևէ ուղղակի սկզբնաղբյուր դեռևս չի հայտնաբերվել: Այս առումով, օրինակ, Ռուսա II–ի (մոտ. Ք. ա. 685-645 թթ.) Այանիսի տաճարի արձանագրությունը խիստ կասկածի տակ է դնում Գ. Մելիքիշվիլու՝ ուրարտական դիցարանի աստվածություններին, և հատկապես գերագույն եռյակի

[29] CTU 1: A 12-1 I, A 12-1II.
[30] CTU 1: A 12-2 II.
[31] CTU 1: A 12-4.
[32] CTU 1: A 12-3.
[33] **Salvini** 2001a, 260.
[34] **Burney** 1966, 71.
[35] **Özgüç** 1966: Pl. IX, 2.
[36] **Çilingiroğlu** 2001, 45.

ներկայացուցիչներին Մհերի Դռան տեքստի այսպես կոչված առաջին երեք աստվածուհիների հետ «ամուսնացնելու վարկածը»: Արձանգրության մի հատվածում հաջորդաբար նշվում են Խալդիին, Թեյշեբային, Շիվինիին, Ուարուբանիին, Խուտուինիին, Լուսնի աստծուն, Խալդյան զենքերին, Խալդյան դարպասին, Էիդուրուին, Բաբային, Ադիային, Սարդիին, Ինուանիին, Աիային, Տուշպունիային և այլ աստվածություններին կենդանական զոհեր մատուցելու կարգադրությունները:[37] Կարելի է նկատել, որ Ուարուբանիի, Բաբայի և Տուշպունիայի անունները չեն հաջորդում իրար: Բացի այդ՝ արձանագրությունում չի նկատվում այսպես կոչված արական և իգական աստվածությունների առանձնացում: Պարզ դարձավ նաև, որ Ուրարտուի դիցարանում ենթադրյալ Խուբա աստվածուհու ճիշտ անունը պետք է ընթերցել որպես Բաբա: Այս հանգամանքն արդեն քիչ հավանական է դարձնում Թեշուբ-Խեթաթ և Թեյշեբա-ենթադրվելիք Խուբա զուգահեռներ անցկացնելու փորձերը:

Հետաքրքիր տեղեկություն են հաղորդում նաև Ուարուբանիին նվիրաբերված[38] և Ուարուբա անվանական տարբերակը պարունակող[39] արձանագիր ուլունքահատիկները: Ցավոք, դրանք զուրկ են հնագիտական համատեքստից: Էրիախի երկրից որպես ավար վերցված ուլունքահատիկի նվիրաբերման փաստն Ուարուբանիին՝ վկայում է վերջինիս կապը ուլունքների հետ: Ընդհանրապես, ուլունքները, մանյակներն ու հմայիլները հանդիսացել են հատկապես էրոտիկ սիրո և տոփանքի աստվածուհիների խորհրդանիշներ:[40] Այս առումով չի բացառվում, որ Ուարուբանին ևս ունեցել է նման գործառույթներ: Հետաքրքիր է նաև այն, որ Այանիսից գտնված բուլլաներից մեկի վրա հիշատակվում է Ուարուբա աստծո մարդկանց մասին:[41] Ըստ Ե. Գրեկյանի՝ այս հաղորդումը կարող է առնչվել կամ անմիջապես աստվածուհուն սպասարկող քրմերի, և կամ էլ նրա տաճարի անձնակազմի հետ:[42] Այն, որ Ուարուբանին իր առանձին ծիսապաշտամունքային

[37] CTU 1: A12-1I, II.
[38] **Dincol, Kavakli,** 1982, 231-235.
[39] **Walker** 1978, 234.
[40] **Փիլիպոսյան** 1998, 64-65:
[41] **Salvini** 2001b, 291, Cb-Ay. 29.
[42] **Գրեկյան** 2004, 328:

կառույցը կարող էր ունենալ, թերևս վկայում է նրան ուլունքահատիկ նվիրաբերելու փաստը:

<u>Օձասարի արձանագրության «Խալդիի կինը»?</u>

Վանի թագավորության գերագույն աստծո կողակցի վերաբերյալ հետաքրքիր տեղեկություն է հաղորդում նաև Նախիջևանի շրջանի Օձասարի արձանագրության տեքստը: Այն ունի հետևյալ բովանդակությունը.

Խալդյան զորությամբ, Իշպուինի Սարդուրորդին, Մենուա Իշպուինորդին, նվաճեցին Արծինիե/ա քաղաքը: Նվաճեցին Արծինե երկիրը, գրավեցին Անիանի քաղաքի երկիրը, ավերեցին [...]եղավ[...]:Հիմնեցին Խալդիին կոթող, Պուլուադի երկրում, կարգ սահմանեցին Խալդիին [եզ] մորթել, կով Խալդիի կնոջը Պ[ուլուադի]?երկրում?... :[43]

Իշպուինիի և Մենուայի այս արձանագրության վերջում հիշատակվում է Խալդիին ցուլ և «Խալդիի կնոջը» կով զոհաբերելու մասին: Ցավոք, արձանագրության վերջին հատվածը բավական վնասված է: Այստեղ Միրյո Սալվինին վերականգնում է «Պ[ուլուադի] երկիր» արտահայտությունը: Ըստ Սալվինիի՝ արձանագրությունում «կնոջը » համատասխանում **sila** բառը: Այն կարող է նշանակել ոչ թե կին, այլ դուստր: Քանի որ նույն արքաների կառավարման շրջանի արձանագրություններում միայն Ուարուբանիին են կովեր զոհաբերվել, որը համարվել է Խալդիի կինը, Մ. Սալվինին կարծում է, որ Օձասարի արձանագրությունում ևս խոսքը գնում է ոչ թե Խալդիի դստեր, այլ կնոջ մասին:[44] Իհարկե, այս մեկնաբանությունը միանգամայն տրամաբանական է, սակայն, այստեղ կարող են լինել այլ մոտեցումներ ևս: Եթե, իրոք, ճիշտ է Սալվինիի վերակազմությունը, ապա գուցե «Պուլուադի երկրում Խալդիի կին» արտահայտությունը, կարող է հուշել, որ այդ տարածաշրջանում առաջնային դիրքերում է եղել ինչ-որ աստվածուհու պաշտամունք: Նույն Իշպուինիի և Մենուային պատկանող Աշոտակերտի և Միհերի Դռան ժայռափոր դռների արձանագրություններում (աղ. 1) հիշատակվում է Ուարուբանիին կով զոհաբերելու մասին, սակայն չի նշվում, որ վերջինս Խալդիի կինը կամ գուցե դուստրն է: Հնարավոր է, որպեսզի Իշպուինին և Մենուան կարողանային ավելի հեշտ կերպով այդտեղ տարածել Խալդիի պաշտամունքը, ուղղակի «ամուսնացրել են» Խալդիին և

[43] CTU 1: A 3-8.
[44] **Salvini** 1998, 97.

այդ աստվածուհուն, ինչի հետևանքով, հավանաբար, վերջինիս որոշ գործառույթներ անցել են Ուրարտական պետականությունը խորհրդանշող աստծուն: Չի բացառվում, որ Օձասարի արձանագրությունը կերտվել է ավելի վաղ, քան Աշոտակերտն ու Մհերի Դուռը: Հնարավոր է, որ ենթադրյալ Պուլուադի երկրի Խալդիի կինը կամ դուստրը հենց Ուարուբանին է, որը որոշակի կրոնաքաղաքական զարգացումների արդյունքում դարձավ Ուրարտուի դիցարանի կարևո

ր աստվածություններից մեկը՝ զուցե և կապվելով Խալդիի հետ: Իհարկե, սրանք սոսկ հիպոթեզներ են և կարող են ժխտվել կամ հաստատվել նոր տվյալներով և ուսումնասիրություններով:

<u>Բագբարթու (Բագմաշթու):</u> Այս աստվածուհու անունը հանդիպում է Սարգոն II-ի տեքստերում, ուր Բագբարթուն հիշատակվում է որպես Խալդի աստծո կին:[45] Դրանցից մեկում նշվում է Խալդիին և Բագբարթուին Սարգոնի ճամբար բերելու մասին:[46] Մեկ այլ հաղորդման մեջ հիշատակվում են Խալդիի և նրա կին Բագբարթուի զարդերի մասին:[47] Հետաքրքիր է Բագբարթուին վերաբերող մեկ այլ տեղեկություն, ըստ որի, Մուծաշիրի Խալդի աստծո տաճարում է գտնվել աստվածուհու կնիքով ոսկե մատանին, որով որոշումներ են հաստատել:[48]

Վերը նշված փաստերը թեև քիչ, սակայն որոշակի հնարավորություն են ընձեռում մի շարք ենթադրություններ անել Բագբարթուի պաշտամունքի և գործառույթների մասին: Ըստ երևույթին, Խալդիին և Բագբարթուին առևանգելու հաղորդումը վկայում է, որ Մուծաշիրի տաճարում են գտնվել վերջիններիս արձանները, կամ նրանց կերպարանավորող խորհրդանիշները: Ըստ Ի. Լոսևայի, Սարգոնի II-ի տեքստերում Խալդիի անունը հիշատակվում է որպես և՛ Ռուսայի, և՛ Մուծաշիրի քրմապետ-արքա Ուրզանայի աստված: Բագբարթուի անունը կարծես թե հիշատակվում է միայն Ուրզանայի համար աստված լինելու համատեքստում: Այս հանգամանքը մատնանշելով, Ի. Լոսևան ենթադրել է, որ Բագբարթուն եղել է տեղական աստվածուհի:[49]

---

[45] ARAB II: 59, 173, 176, 183.
[46] ARAB II: 173.
[47] Նույն տեղում:
[48] Նույն տեղում:
[49] **Лосева** 1962, 309.

Որոշումներ կայացնելու համար ոսկե մատանու հիշատակությունը ենթադրել է տալիս, որ առնվազն Մուծածիրի տաճարում գուշակություններ են արել:[50] Քանի որ այդ մատանին պատկանել է հենց Բագբարթուին, ապա, ամենայն հավանականությամբ, վերջինիս կարելի է վերագրել նաև գուշակությունների հովանավոր աստվածուհու գործառույթը: Այս առումով հետաքրքիր է, որ նորասորեստանյան թագավորությունում գուշակությունների կարևորագույն կենտրոնն էր համարվում Արբելա քաղաքում գտնվող Իշթար աստվածուհու տաճարը:[51] Արբելան պետք է բավական մոտ գտնվեր Մուծածիրին:[52] Շատ հնարավոր է, որ վերը նշված զուգահեռները լինեին Արբելա-Մուծածիր կրոնական փոխազդեցությունների արդյունք: Չպետք է բացառել, որ որոշակի ժամանակներում, երկու աստվածուհիների պաշտամունքը կարող էր ծագել միևնույն տարածքում կամ հոգևոր միևնույն ընկալումների ակունքներից: Այս առումով հետաքրիր է, որ Արբելայի Իշթար-Մուլլիսսուն պատկերվել է իր հորթուկին սնուցող կովի տեսքով:[53] Արբելայում հորթուկը համարվել է թագաժառանգի կենդանական խորհրդանիշը:[54]Ուշագրավ է, որ իր հորթուկին սնուցող կովի տեսարան է պատկերված նաև Մուծածիրի տաճարի առջև (նկ. 2, նկ. 2ա): Բացի այդ, այն, որ Մուծածիրի տաճարում եղել են ցուլի և իր հորթուկին սնուցող կովի բրոնզե արձաններ, վկայում է նաև Սարգոն II-ի տեքստերից մեկը:[55] Սարգոն II-ի տեքստերից մեկում հիշատակվում է, որ Մուծածիրի տաճարում ցուլի և կովի մոտ կանգնած հորթուկի պղնձե արձանները ձուլվել էին Իշպուինիի որդի Սարդուրիի կողմից:[56] Անկախ այն հանգամանքից, թե ով է վերը հիշատակված Սարդուրին,[57] հավանական է թվում, որ արձանախմբի ստեղծումը պետք է վերաբերի առնվազն Իշպուինիի կառավարման, կամ էլ դրանից մի փոքր ուշ ընկած ժամանակներին: Սա նշանակում է, որ այդ ժամանակ Մուծածիրի տաճարական համիլիրի առջև ցուլի և կովի մոտ կանգնած հորթուկի պղնձաձույլ արձանները չէին կարող հենց այնպես դրված լինել:

---

[50] **Пиотровский** 1988, 350.
[51] **Teppo** 2005, 90.
[52] Տե՛ս օրինակ՝ **Բաղալյան** 2014, 158: Քարտեզ 1:
[53] **Parpola** 1997, XL.
[54]**Parpola** 2000, 195.
[55] ARAB II: 22.
[56] ARAB II:173.
[57] Ըստ **Ն. Ադոնցի**՝ գրագրի սխալի հետևանքով Իշպուինի Սարդուրորդին դարձել է Սարդուրի Իշպուինորդի՝ **Ադոնց** 1972: 194:

Իր հորթուկին սնուցող կովի տեսարան պատկերված է նաև Մուծածիրի տաճարի ճակատային հատվածի առջև: Ինչու՞ էին կերտվել այդ արձանները, և ի՞նչ կարող էին դրանք խորհրդանշել: Հին աշխարհում հաճախ կովը համարվում էր տարբեր աստվածուհիների կենդանակերպ մարմնավորումը, իսկ հորթուկը խորհրդանշում գահաժառանգին:[58] Այս առումով, հարկ ենք համարում հատկապես անդրադարձ կատարել Ուրարտուին ժամանակակից նորասորեստանյան տերությանը: Այստեղ, օրինակ, նման կերպ ընկալվում էր Մուլլիսսու աստվածուհին, ում անվանում էին «վայրի կով»: Նա համարվում էր գահաժառանգի աստվածային մայրը և երբեմն պատկերվում էր հորթին սնուցող կովի տեսքով (նկ. 3): Տեսարանային նման հորինվածքում հորթն ասոցացվում էր աստվածուհուց ծնված և նրա կողմից սնուցվող օրինական գահաժառանգի հետ:[59] Այսպես. ասսուրական սկզբնաղբյուրներից մեկի համաձայն, Մուլլիսսուն կերակրել էր Աշշուրբանիպալին:[60] Ըստ մեկ այլ տեքստի՝ Իշթար-Մուլլիսսու աստվածուհին համարվում էր Էսսարհադդոնի մայրը:[61] Ասսուրական դիցաբանական պատկերացումներում թագաժառանգն ընկալվում էր որպես մահկանացու, սակայն ծնված՝ աստվածային մորից: Որոշ տեքստերում Մուլլիսսու աստվածուհին նույնիսկ հիշատակված է որպես Էսսարհադոնի և Աշշուրբանիպալի մայր:[62] Համաձայն մի սկզբնաղբյուրի՝ մինչև յոթ տարեկան դառնալը, ասորեստանյան տերության ապագա միապետին նվիրաբերել են Իշթար աստվածուհու տաճարներից մեկին, որտեղ ծառայող հիերոդուլ-քրմուհիներն էլ, ըստ երևույթին, խորհրդանշաբար համարվել են դիցուհու մայրական կերպարանավորումները:[63] Նորասորեստանյան թագավորության հայր-մայր-որդի խորհրդանշական եռյակը կազմում էին արքան, թագուհին և գահաժառանգը: Նրանցից առաջին երկուսը համապատասխանաբար մարմնավորում էին Աշշուր աստծուն և Իշթար աստվածուհուն:[64] Ըստ երևույթին, կրոնական նման ընկալումները խորթ չեն եղել նաև ուրարտական վերնախավի համար: Մուծածիրի տաճարական համալիրում իր հորթուկին սնուցող կովի արձանները կարող էին լինել տեղի

[58] Այդ մասին մանրամասն տե՛ս՝ **Keel** 1980:
[59] **Parpola** 2000, 195.
[60] SAA IX: XI.
[61] Նշվ. աշխ.: XL:
[62] Նշվ. աշխ.: XXXIX:
[63] **Parpola** 2000, 195.
[64] SAA IX: XXXVIII.

աստվածուհու և ուրարտական գահաժառանգի կենդանակերպ դրսևորումները: Եթե Բագբարթուի պաշտամունքը ունեցել է տեղական բնույթ, ապա, ամենայն հավանականությամբ, հենց վերջինիս էլ խորհրդանշել է կովի արձանը: Ինչպես նշել ենք, Բագբարթուն պետք է ունենար գուշակության աստվածուհուն բնորոշ գործառույթներ: Այս առումով հետաքրքիր է, որ Մուծածիրից ոչ այդքան հեռու գտնվող Արբելա քաղաքի դիցուհի Մուլլիսսու-Իշթարը եղել է գուշակությունների հովանավոր աստվածուհի և, մի շարք ասսուրական տեքստերում, ներկայացվել թագաժառանգին սնուցող կովի տեսքով: Կարծում ենք վերը նշված զուգահեռները արտացոլում են Արբելա-Մուծածիր կրոնական փոխառնչությունները: Ինչ վերաբերում է Մուծածիրում կովի և հորթուկի հետ հիշատակված ցուլի պղնձաձույլ արձանին, ապա այն կարող էր խորհրդանշել տեղի գերագույն աստծուն: Եթե այդ արձանների պատրաստման ժամանակ Մուծածիրի գերագույն աստվածը եղել է Խալդին, ապա հենց վերջինիս հետ էլ պետք է ասոցացվեր ցուլի պղնձաձույլ արձանը: Եթե ճիշտ են մեր ենթադրությունները, ապա Մուծածիրի տաճարական համալիրում գտնվող ցուլի և իր հորթուկին սնուցող կովի բնական չափերի պղնձաձույլ արձանները, առնվազն իրենց կերտման ժամանակ, կերպարանավորել են Խալդիին, հավանաբար՝ Բագբարթուին և ուրարտական գահաժառանգին (ով, իդեպ, ամենայն հավանականությամբ, պետք է թագադրվեր հենց Մուծածիրում) և հանդիսացել է վերը նշված նորասսուրական եռյակի (հայր-մայր-որդի) ուրարտա-մուծածիրյան տարբերակը:

Ինչ վերաբերում է Բագբարթուի զարդերին, ապա հնարավոր է, որ նրա կերպարը անձնավորվել է տաճարի գերագույն քրմուհու հետ: Բագբարթուի պաշտամունքի հետ կարող էր կապված լինել Մուծածիրի տաճարում «իր աստվածայնության հանգստի համար» նախատեսված մահիճը, ինչը, մեր կարծիքով գուցե և ծառայել է «Սրբազան ամուսնության» ծեսի համար:[65]

<u>Որպես վերջաբան:</u> Ամփոփելով՝ հարկ ենք համարում նշել, որ սկզբնաղբյուրների պակասը դեռևս թույլ չի տալիս հստակեցնել Խալդիի և նրա կողակիցների հետ կապված որոշ հարցեր: Օձասարի արձանագրությունում ենթադրյալ «Խալդիի կնոջ» վերաբերյալ մեր առաջ քաշած հիպոթեզները դեռևս

[65] **Բաղալյան** 2014, 146-148:

կարիք ունեն նոր և լրացուցիչ սկզբնաղբյուրների և ուսումնասիրությունների: Իհարկե, միանգմայն տրամաբանական կլինի պնդել, որ Ուարուբանին եղել է Խալդիի կինը, սակայն, այդ առումով, ուղղակի սկզբնաղբյուրները բացակայում են: Նույնը կարելի է ասել նաև բոլոր այն կարծիքների վերաբերյալ, համաձայն որոնց, ուրարտական պատկերագրության որոշ տեսարաններում պատկերված է Ուարուբանին:[66] Դատելով առկա սկզբնաղբյորներից կարելի է ենթադրել, որ Ուարուբանին եղել է Վանի թագավորության կարևորագույն աստվածություններից մեկը, և գուցե վերջինիս պաշտամունքը նույնիսկ չի զիջել Թեյշեբային կամ Շիվինիին: Թերևս դժվար է միանշանակորեն նույնացնել Ուարուբանիին և Բագբարթուին կամ վերջինիս համարել Ուարուբանիի մուծածիրյան կերպավորումը: Ամենայն հավանականությամբ, նրանք տարբեր աստվածություններ են եղել: Հետաքրքիր է, որ Ուրարտուին ժամանակակից Ասորեստանում գերագույն աստված Աշշուրի կին էին համարվում Նինվեի, Աշշուրի և Արբելայի Իշթարները: Վերջիններս, չնայած իրենց անվան նմանությանը, ունեին տարբեր գործառույթներ:[67] Հնարավոր է, որ Վանի թագավորությունում ևս գործել է նման ինստիտուտ:

ՆԿԱՐՆԵՐ

Նկար 1. Շոշից գտնված բաբելոնյան կուդդուրու կոթողը: Գծանկար: Հաջորդիվ՝ **Black, A. Green,** 1992,16, fig. 7.

Նկար 2. Մուծածիրի տաճարը: Նկարված է Է. Ֆլանդինի կողմից: Հաջորդիվ՝ **P. É. Botta** 1849-50, pl. 141.

Նկար 2ա. Մուծածիրի տաճարի առջև պատկերված կովի և հորթուկի արձանները:

Նկար 3. Նիմրուդ: Հորթուկը և իրեն սնուցող կովը: Հաջորդիվ՝ **Parpola** 2000, 93, fig. 4.

---

[66] Տե՛ս օրինակ՝ **Лосева** 1962, 300-311. **Հմայակյան** 1990, 38-39.
[67] **Porter** 2004, 35.

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ադոնց Ն. 1972: *Հայաստանի պատմություն,* Երևան:

Բաղալյան Մ. 2012: *Ուարուբանիի և Բագբարթուի հարաբերակցության շուրջ,* Մերձավոր Արևելք VIII, Երևան, էջ, 23-39:

Բաղալյան Մ. 2014: *«Խալդի և Բագբարթու»: Ուրարտուում «Սրբազան ամուսնության» ծեսի գոյության խնդրի շուրջ*, «Բ. Բ. Պիոտրովսկին և հնագիտությունը» ժողովածու, Երևան, 2014, էջ, 145-160:

Բաղալյան Մ. 2015: *ՈՒրարտուի դիցարանի գերագույն եռյակը (պաշտամունք, խորհրդանշաններ, պատկերագրություն) ըստ հնագիտական սկզբնաղբյուրների,* ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ Է. 00.03 «հնագիտություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար, ՀՀ ԳԱԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտ, Երևան, 2015:

Բաղալյան Մ. 2016: *Խալդի աստծոն մատուցվելիք կենդանական զոհաբերությունների շուրջ*, Պատմություն և հասարակագիտություն. Տարեգիրք 2, Երևան, էջ, 129-141:
Գրեկյան Ե. 2004: *Ուրարտական աստվածապետության առանձնահատկությունների շուրջ. Ուրարտուի «արքաները» (նախնական դիտարկումներ),* ՄՄԱԵԺ XXIII, Եր., էջ, 315-346:

Հմայակյան Ս. 1990: *Վանի թագավորության պետական կրոնը*, Երևան:

Փիլիպոսյան Ա. 1998: *Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. III-II հազ. ծովախեցիները որպես հնագիտական և ազգագրական հետազոտությունների սկզբնաղբյուր*, Հին Հայաստանի մշակույթը, Երևան, էջ, 64-65:

Baštürk M. B. 2014: *Two Faces of Haldi: Questioning the Gender of the Urartian Great God,* Բ. Բ. Պիոտրովսկին և հնագիտությունը: Գիտական հոդվածների ժողովածու նվիրված անվանի ուրարտագետ, հնագետ և արևելագետ Բորիս Բորիսի Պիոտրովսկու հիշատակին, Երևան, 178-194.

Belli O., Dinçol A., Dinçol B. 2009, *Bronze Votive Rings with Assyrian Inscriptions found in the Upper Anzaf Fortress in Van*, Coloquium Anatolicum/Anadolu Sohbetleri VIII, 91-124.

Biyagov L. 1978, *Über die Natur des Gottes Haldi und der Göttin Arubani-Bagbartu,* Oikumene 2, 149-152.

Black J., Green A. 1992: *Gods, Demonsand Symbols of Ancient Mesopotamia*. An Illustrated Dictionary, The British Museum Press.
Botta P. É. 1849-1850: *Monument de Ninive* (decouvert et decrit par M. P. É.Botta, mesure et dessine par M. E. Flandin), 5 vols., Paris.

Burney Ch. 1966: *A First Season of Excavations at the Urartian Citadel of Kayalıdere*. Anatolian Studies 16, London, pp. 55-111.

Cornelius I. 2009: *Aspects of the Iconography of the Warrior Goddess Ištar and Ancient Near Eastern Prophecies*, Images and Prophecy in the Ancient Eastern Mediterranean (eds. M. Nissinen and Ch. E. Carter), 15-40.

Çilingiroğlu A., Salvini M. (eds.) 2001: *Ayanis I: Ten Years' Excavations at Rusahinili Eiduru-kai 1989-1998,* Documenta Asiana 6, Rome.

Çilingiroğlu A. 2001: *Temple Area*, *in* Çilingiroğlu and Salvini (eds.), 37-65.

Çilingiroğlu A. 2004: *Silah, Tohum ve Ateş'*. In Korkut, T. (Hrsg.), Anadolu'da Doğdu. 60. Yaşında Fahri Işık'aArmağan (Istanbul), 257-268.

Çilingiroğlu A. and Darbyshire G. (eds.) 2005: Anatolian Iron Ages 5. Proceedings of the Fifth Anatolian Iron Ages Colloquium held at Van,6-10 August 2001, British Institute of Archaeology atAnkara Monograph 31, London

Diakonoff I. M. 1989: *On Some New Trends in Urartian Philology and Some New Urartian Texts.* AMI 22, 77-102

.

Dinçol A. M., Dinçol B. 1986: *Ein Wiederendeckte assyrische Inschrift auf den Van-Felsen,* AnAr. 10, 351-358.

Dinçol A. M, Kavakli E. 1982: *Van bölge müzesinde bulunan yazıtlı bir Urartu boncoğu*, AnAr. VII, 231-235.

Grekyan Y. 2006: *The Will of Menua and the Gods of Urartu*, AJNES 1, 150-195.
Hoffner H. 1990: Hittite Myths, Atlanta.

Keel O. 1980: *Das böcklein in der milch seiner mutter und verwandtes.* Im Lichte eines altorientalischen Bildmotivs, Orbis Biblicus et Orientalis 33.

Luckenbill D. D. 1927: *Ancient Records of Assyria and Babylonia*, vol. II, Chicago.

Melikišvili G. A. 1965: *Die Götterpaartrias an der Spitze des urartäischen Pantheons,* Orientalia, vol. 34, fasc. 4, 441-445.
Meyer W. 2013: *Assyrien und Urartu II.* Die assyrisch-urartäischen Bilinguen, Ugarit-Werlag Münster.

Muscarella O. W. 2013: *Urartian Metal Artefacts*, An Archaeological Review, Archaeology, Artifacts and Antiquities of the Ancient Near East. Sites, Cultures and Proveniences, Leiden-Boston, Brill, 621-650.

Özgüç T. 1966: *Altıntepe I*: Mimarlık Anıtları ve Duvar Resimleri /Architectural Monuments and Wall Paintings, Ankara, Türk Tarih Kurum Basimevi.

Parpola S. 1997: *Assyrian Prophecies*, State Archives of Assyria IX, Helsinki.

Parpola S. 2000: *Monotheism in Ancient Assyria*, in: Porter 2000, 165-210.

Porter B. N. 2000 (ed.), *One God or Many?* Concepts of Divinity in the Ancient World, Bethesda.

Porter B. N. 2004: *Ishtar of Nineveh and Her Collaborator, Ishtar of Arbela,* in the Reign of Aššurbanipal, in: Nineveh. Papers of the XLIXe Rencontre Assyriologique Internationale, London, 7-11 July 2003. Part One (=Iraq 66), 41-44.

Salvini M. 1982: *Eine vergessene Felsinschrift mit einem Opfertext*, Societies and Languages of the Ancient Near East, Studies in honor of I. M. Diakonoff, Warminster, 327-332.

Salvini M. 1998a.: *Eine urartäische Felsinchrift in der Region Nachičevan*, ZA 88, 94-99.

Salvini M. 2001a: *Inscriptions of Ayanis (Rusahinili Eiduru-kai):* Cuneiform and hieroglyphic. Monumental stoneinscriptions, in: Çilingiroğlu and Salvini 2001, Monumental Stone Inscriptions, 251-270.

Salvini M. 2001b.: *Inscriptions on Clay*, in: Çilingiroğlu and Salvini 2001, 279-318.

Seidl U. 2004: *Bronzekunst Urartus,* Mainz.

Seidl U. 2005: *The Urartian Ištar-Šawška*, in Çilingiroğlu and Darbyshire 2005, 167-173.

Tarhan M. T. 2007*: Tušpa Sitadelindeki Assurca Yazıtlı Adak Nişinde Yeni Bulgular*, Belkis Dinçol ve Ali Dinçola Armağan, VITA, Festschrift in Honor of Belkis Dinçol and Ali Dinçol,762-763.

Teppo S. 2005: *Women and their Agency in the Neo-Assyrian Empire* (Master's Thesis, April 2005), Helsinki.

Walker C. B. F. 1978: *Texts and Fragments*, JCS 30, 234-249.

Wilhelm G. 1989: *The Hurrians*, Aris & Phillips Ltd-Warminster-England.

Биягов Л. 1974: *К вопросу об интерпретаций Халди и Арубани-Багбарту*, ԼՀԳ, 11, 98-106.

Дьяконов И. М. 1983: *К вопросу о символе Халди*, Древний Восток 4, 190-194.

Лосева И. М. 1962: *Некоторые урартские ювилерные изделия с изображением ритуальных сцен (к вопросу об иконографии бога Халди и богини Арубани),* в кн. Пигулевская и др. 1962, 300-311.

Меликишвили Г. А. 1954*: Наири-Урарту,* Тбилиси.

Пиотровский Б. Б. 1959: *Ванское царство (Урарту),* Москва.

Пиотровский Б. Б. 1988: *Урартская мифология,* Мифы народов мира, Энциклопедия, т. 2, Москва, 549-550.

ԱՂՅՈՒՍԱԿ 1

Ուարուբանիին վերաբերող հիշատակությունները (ըստ հնագիտական և գրավոր սկզբնաղբյուրների)

Միապետը	Վայրը	Գործողությունը կամ համատեքստը	CTU
Իշպուինի և Մենուա	Աշոտակերտ	Հիշատակվում է susi-ի կառուցման, ինչպես նաև qudulani-ում Խալդիին ուլ զոհաբերելու (nipsidu-) , ցուլ զոհաբերելու (urpu-), ՈՒարուբանիին՝ կով, ինչպես նաև՝ Խալդյան դարպասներին և զենքերին մեկական ոչխար զոհաբերելու (urpu-) մասին:	CTU 1, A 3-2
Իշպուինի և Մենուա	Մհերի Դուռ	Առաջինն է այսպես կոչված «աստվածուհիների» շարքում, ում համար պետք է զոհաբերություններ իրականցվեն: Հիշատակվում է ՈՒարուբանինն կով և ոչխար զոհաբերելու մասին:	CTU 1, A 3-1$_{21}$
Մենուա	Գյուզակ	Արձանագրության տեքստում հիշատակվում է Խալդյան դարպասների, Խալդի աստծո քաղաքի կառուցման, ինչպես նաև խաղողուտ և պարտեզ հիմնելու մասին: Արձանագրության վերջին հատվածում նշվում է խաղողուտի կամ գուցե գինու հասունացման ժամանակ Խալդիի և Ուարուբանիի համար pulusi-ի առջև ինչ-որ արարողություններ անելու մասին:	CTU 1, A 5-33$_{30-36}$
Արգիշթի I?	Վանի թանգարան	Ուլունքահատիկ, որի վրայի արձանագրությունում Արգիշթին հիշատակում է այն Էրիախի երկրից բերելու և Ուարուբանիին նվիրաբերելու մասին:	CTU 4, D 8-1
Արգիշթի II	Չելեբիբաղի	Այս արձանագրությունում Ուարուբանիի անունը հիշատակվում է երկու անգամ. 1. Թեյշեբային և Շիվինիին զոհաբերություններ կատարելու մասին հաղորդմանը հետևում է Ուարուբանիին մեկ ոչխար, իսկ այնուհետև այլ աստվածություններին կենդանիներ զոհաբերելու հիշատակությունը: 2. Նման հիշատակություն է հետևում արձանագրության մյուս հատվածում, սակայն, Ուարուբանիին և մյուս աստվածություններին ոչխար զոհաբերելու հաղորդմանը նախորդում է գերագույն եռյակին զոհաբերություններ մատուցելու հիշատակությունը:	CTU 4, A 1-11Vo

Ռուսա II	Այանիս	Այանիսի տաճարի առաջին հատվածում հիշատակվում է դիցարանի գերագույն եռյակից հետո Ուարուբանիին կով զոհաբերելու մասին (CTU 1,A 12-1I.): Երկրորդ հատվածում նշվում է Խալդիին ուլ, ցուլ, և Ուարուբանիին կով զոհաբերելու մասին: Այնուհետև՝ pahazuli-ի կառուցման ժամանակ Խալդիին ուլ և Ուարուբանիին կով զոհաբերելու մասին: Այս տեքստում նաև վկայություն կա susi-ի առջև գտնվող sirihani կառույցում Խալդիի և Ուարուբանիի առջև ինչ-որ արարողություններ կատարելու մասին (CTU 1, A 12-1II.): Այանիսի տաճարի արձանագրության տեքստի հինգերորդ հատվածում հիշատակված է տարբեր աստվածություններին կենդանիների զոհաբերություններ մատուցելու մասին, որոնց թվում Ուարուբանին չորրորդն է: Վերջինիս այս անգամ պետք է ոչխար զոհաբերվեր (CTU 1, A 12-1V.):	CTU 1, A 12-1
	Այանիս	Բուլլա, որի վրա հիշատակված է Ուարուբա աստծո մարդու մասին:	CTU 4, CB Ay-39
	Կարմիր բլուր	Կարմիր բլուրի տաճարի արձանագրության առաջին հատվածում, որտեղ թվարկվում են տարբեր աստվածություններին կենդանիներ զոհաբերելու կարգադրությունները, նշվում է Ուարուբանիին կով զոհաբերելու մասին: Այստեղ վերջինս հաջորդում է գերագույն եռյակին: Տեքստի մեկ այլ հատվածում երկու անգամ հիշատակվում է միայն Խալդիին ուլ, ցուլ, իսկ Ուարուբանիին կով զոհաբերելու կարգադրությունը: Այստեղ հիշատակվում է նաև pahazuli-ն (CTU 1, A 12-2.): Այս հատվածին հաջորդող երկրորդ մասում հիշատակվում է Խալդիին ուլ և ցուլ, իսկ Ուարուբանիին կով զոհաբերելու մասին: Այս տեքստում, ինչպես և Այանիսի արձանագրության դեպքում, վկայություն կա susi-ի առջև գտնվող sirihani կառույցում Խալդիի և Ուարուբանիի առջև ինչ-որ արարողություններ կատարելու մասին (CTU 1, A 12-2II.):	CTU 1, A 12-2

	Արգիշթիխինիլի	Արձանագրության տեքստում հիշատակվում է Խալդիին ուլ և ցուլ, իսկ Ուարուբանիին կով զոհաբերելու մասին: Քիչ անց նշվում է Խալդիին ուլ և ոչխար և Ուարուբանիին ոչխար զոհաբերելու մասին: Այստեղ ևս հաղորդում կա pahazuli-մասին:	CTU 1, A 12-3
Ռուսա Էրիմենայորդի	Գյովելեք	Արձանագրության տեքստում երկու անգամ հիշատակվում է դիցարանի աստվածություններին տարբեր կենդանիներ զոհաբերելու մասին: Այստեղ՝ Ուարուբանիին երկու դեպքում էլ հաջորդում է գերագույն եռյակին: Նրան պետք է ոչխար զոհաբերվեր:	CTU 1, A 14-1Vo
Ռուսա Էրիմենայորդի	Սավաջրք	Նույնը, ինչ Գյովելեքի արձանագրության մեջ է վկայված:	CTU 1, A 14-2Vo
Սարդուրի?	Մասնավոր հավաքածու	Սարդիոնից ուլունքահատիկ, որի վրա արձանագրված է ^{md}Úaruba ^{md}Sárduri արտահայտությունը:	CTU 4, D 9-1

ՆԿԱՐՆԵՐ



Նկար 1



Նկար 2

Նկար 2ա



Նկար 3

ԱՇՈՏ ՓԻԼԻՊՈՍՅԱՆ
«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ,
ՀՊՄՀ-ի Հայոց պատմության ամբիոն

ԿԱՎԵ ՊԱՏՎԱՆԴԱՆԻ ՄԱՐԴԱԿԵՐՊ ՄԱՍ ՄԵԾԱՄՈՐԻՑ

Հայաստանի պատմահնագիտական և ճարտարապետական բազմաթիվ հուշարձանների հայտնաբերման, պեղման, նախնական ուսումնասիրման և հիմնավոր վերականգնման աշխատանքների մեջ իր արժանի տեղն ու մեծ վաստակն ունի անվանի պատմաբան, հնագետ, թանգարանագետ, մշակութային գործիչ Լավրենտի Աշոտի Բարսեղյանը: Մարդ, ով իր կյանքն ու գործունեությունն անմնացորդ նվիրաբերել է հայրենի անդաստանի հետազոտման, շենացման ու հանրահռչական սրբազան գործին: Հենց նրա ղեկավարած երիտասարդ հնագետների խումբն է 1959-1962 թթ., Ներքին Զեյվա (ներկայիս՝ Տարոնիկ) բնակավայրի մոտ հետախուզական պեղումներ իրականացրել մի հնավայրի տարածքում, որը հետագայում հնագիտական աշխարհում հայտնի դարձավ Մեծամոր անվամբ: Տեղի միջնաբերդի և բրոնզեդարյան-երկաթեդարյան դամբարանների պեղումների ժամանակ էլ հայտնաբերվել է թրծակավե այն եզակի արձանիկը[1] (աղ. I, նկ. 1: աղ III, նկ. 1), որին փորձել ենք մեկ անգամ ևս անդրադառնալ սույն հոդվածում:

Մարդադեմ արձանիկ-կուռքը պատրաստված է բաց դեղնադարչնավուն կավից և ունի լավ թրծում: Իրանի բարձրությունը՝ 15,5 սմ է, հիմքի երկարությունը՝ 9,0 սմ, իրանի պահպանված հատվածի լայնքը՝ 8,8 սմ (ՀՊԹ, հավաքածու 2233/84)[2]: Գլուխն ամրացված է իրանի պահպանված մասին քիչ թեքությամբ: Երկարուկ, հարթ դեմքի վրա ցայտուն արտահայտված են ցցուն քիթը, ինչպես նաև խորադիր կլոր աչքերն ու կիսաբաց բերանը: Վզին վերադիր, ուռուցիկ ուլունքաշար ունի, որի հատիկները ներկայացված են խորադիր, շեղ կտրվածների տեսքով: Ճիշտ նույն եղանակով տրված են նաև ուսերից իրանի առջևի մասով իջնող զույգ հյուսքերը (կամ հագուստի օձիքի եզրաքուղերը): Համեմատաբար ավելի լայն ու խորը նմանատիպ կտրվածքներ կան

---

[1] **Լ. Ա. Բարսեղյան,** *Ուշ շրջանի մի քանի նորահայտ պաշտամունքային հուշարձաններ*, ՊԲՀ, # 3, Երևան1962, էջ 259, նկ. 3: **А. Мартиросян,** *Армения в эпоху бронзы и раннего железа*, Ер. 1964, рис.74.

[2] ***Arménie (Trésore de l'Arménie ancienne***), Paris - Nantes 1996, p. 93. ***У подножия Арарата*** (каталог выставки), Санкт-Петербург, 2008, с. 64. ***Armenia: The Legend of Being*** (Country, Radiating All the Circles of History), Moscow 2016, p. 77.

նաև իրանի, մեջքի և կողային հատվածի ստորին մակերեսներին[3]: Վզին, անմիջապես ուլունքաշարի կից, խորագծված է 8,0 սմ երկարությամբ և 4,0 սմ լայնքով ուղղանկյունաձև առարկա, որի ողջ մակերեսը պատված է 10 հորիզոնական, խորադիր, զուգահեռ գծերով: Մեծամորի արձանիկը Հայաստանի բրոնզեդայան կավակերտ, ծավալային եզակի գտածոներից է, քիչ ուղղակի զուգահեռներ ունի համաժամանակյա հնագիտական հուշարձաններում, այդ իսկ պատճառով էլ մասնագետները միակարծիք չեն նրա մշակութային պատկանելության և թվագրության հարցերում: Դեռևս 1960-ական թթ. սկզբին իրը հայնաբերած հնագետ Լ. Բարսեղյանն այն վերագրել էր երկաթի դարաշրջանին[4]: Ավելի ուշ Է. Խանզադյանը համաձայնվել էր այդ մոտավոր թվագրությանը[5]: Հնագետ Ս. Եսայանի կարծիքով՝ արձանիկ-կուռքն ուշբրոնզեդարյան է[6]: Ըստ Ժ. Սանտրոյի էլ, այն վերաբերում է մ.թ.ա. XIII-XII դդ.[7]: Գտածոյին նույնպիսի թվագրումներ են տրված նաև Հայաստանի հնագույն մշակույթին վերաբերող Սանկտ-Պետերբուրգի և Մոսկվայի կատալոգներում[8]: Այսուհանդերձ, մեր դիտարկումները թույլ են տալիս ենթադրել, որ արձանիկ-կուռքն ավելի վաղ ծագում պետք է ունենա և, հնարավոր է, որ վերաբերի վաղ բրոնզի շրջափուլին[9]: Եվ ահա թե ինչու:

1. Մանրազնին հետազոտման ժամանակ նկատվում է, որ արձանիկ-կուռքի պահպանված մասի ստորին հատվածը հորիզոնական դիրքով, թերևս շրջանաձև շարունակվել է և, ըստ ամենայնի, ինչ որ հարմարանքի մաս կազմել: Այս առումով մենք հակված ենք կարծելու, որ այն վաղբրոնզեդարյան օջախի պայտաձև, քանդակազարդ հենակ-պատվանդանի մաս կարող է հանդիսացած լինել՝ վերջույթների վրա և/կամ իրանի միջնամասում ուղղահայաց դիրքով ամրացված մարդադեմ ելուստներով (պահպանվել է մեկը): Նման պատվանդանները, որպես տակդիրներ, տեղադրվել են վաղբրոնզեդարյան կավակերտ կլոր օջախների եզրերին

---

[3] **Խանզադյան Է. Վ., Մկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս.**, *Մեծամոր (Ուսումնասիրություն 1965-1966 թթ. պեղումների արդյունքներով),* Երևան 1973, էջ 139-140, նկ. 142-143:

[4] **Լ. Ա. Բարսեղյան,** *Ուշ շրջանի մի քանի…*, էջ 259:

[5] **Խանզադյան Է. Վ., Մկրտչյան Կ. Հ., Պարսամյան Է. Ս.**, *Մեծամոր…,* էջ 141:

[6] **С. Есаян,** *Скульптура Древней Армении*, Ереван 1980, с. 23, 69, табл. 23.

[7] **J. Santrot,** *Divinité feminine assise,* in “Arménie: Trèsors de l' Armémie ancienne”, Paris-Nantes 1996, # 56.

[8] ***У подножия Арарата*** (каталог выставки), Санкт-Петербург, 2008, с. 64, # 24. ***Armenia: The Legend of Being*** (Country, Radiating All the Circles of History), Moscow 2016, p. 77, # 43.

[9] **Ա. Փիլիպոսյան, Լ. Գևորգյան, Ա. Արզարյան, Ա. Զաքյան**, *Մեծամոր (Պատմահնագիտական ակնարկ),* Երևան 2015, էջ 11-12:

և կրակի վրա պահել կենցաղային և/կամ ծիսական նպատակներով իրենց վրա դրված կաթսաները: Մարդադեմ վերջույթներով նմանատիպ պատվանդանները լավ ներկայացված են Հայաստանի և հարակից շրջանների, մասնավորապես Ամիրանիս գորայի[10] (աղ. II նկ. 10), Չինիս հույուկի[11] (աղ. II, նկ. 6), Պուլուր-Սաքյոլի[12] (աղ. II նկ. 1, 5, 8), Էլյազըղ-Բերկրի (աղ. II նկ. 4), Թաբարա էլ Աքրադի[13] (աղ. II նկ. 3) հնագիտական համալիրներում: Սրանք վերաբերում են վաղ բրոնզի շրջափուլին և տեղավորվում են մ.թ.ա. IV հազ. վերջից մինչև մ.թ.ա. III հազ. կեսը ներառող ժամանակահատվածում: Բոլորի մոտ էլ մարդադեմ վերջույթները կատարված են նույն եղանակով. դեմքերը հարթ են, քթերը՝ ցցուն, աչքերը՝ խորադիր, փոսիկավոր: Ուշագրավ է, որ նեոլիթյան, էնեոլիթյան և վաղբրոնզեդարյան արձանիկների ու կուռքերի պատրաստման վերը նշված հատկանիշները բնորոշ են նաև Հին Մերձավոր Արևելքի և Միջերկրականի ավազանի այլ շրջաններին ևս[14]: Մասնավորապես այդպիսին են Փոքր Ասիայի արևմտյան շրջաններից (Էսքիշեհիր, Ափիոն-գարահիսար, Իսփարթա, Իքիզթեփե)[15], Խրամիս դիդի գորայից[16], Սարդինիայից[17], Կիկլադյան կղզիներից[18], Կուկուտենի-Տրիպոլյեից (Ռումինիա)[19], Քաթնայից (Սիրիա)[20], հայտնի վաղբրոնզեդարյան-միջինբրոնզեդարյան արձանիկ-կուռքերը (աղ. 1): Ըստ որում, դրանց մի մասը՝ մեծամորյան օրինակի նման, նաև վզնոցներ են կրում (աղ. 1, նկ. 2, 3, 5, 11, 15), իսկ Իքիզթեփեի արձանիկը վզնոցից ու կախիչից զատ նաև խորադիր կտրվածքներ ունի իրանի ստորին հատվածի մակերեսին (աղ. 1, նկ. 7): Այսինքն, Մեծամորից պատահաբար հայտնաբերվածն իր արտաքին տեսքով, պատրաստման եղանակով,

---

[10] **N. Shanshashvili, G. Narimanishvili,** *Dynamics and Nature of the Relations between South Caucasus and Aegean World in the Bronze Age*, in "Aegean World and South Caucasus: Cultural Relations in the Bronze Age", International Workshop, Tbilisi 2016, pp. 13-14.

[11] **N. Shanshashvili, G. Narimanishvili,** *Dynamics and Nature…,* աղ. V, նկ. 2:

[12] **H. Z. Koşay,** *Keban Project. Pulur excavations 1968-1970.* Ankara 1976, pl. 19, pl. 21.

[13] **S.Hood,** *Excavations at Tabara El Akrad, 1948-49*, AS, # I, London 1951, pp. 113-147.

[14] **A. Özdoğan**, *Çayönü*, in "Neolithic in Turkey: The Cradle of Civilization" New Discoveries Plates (ed. by **M. Özdoğan** & **N. Başgelen**), Istanbul 1999, p. 30, fig. 43.

[15] **M. Korfmann**, *Eine Weibliche Göttheit in der Frühbronzezeit Anatoliens*, PZ, Berlin 1979, pp. 187-200. **Y. Yakar**, *The Late Prehistory of Anatolia: The Late Chalcolithic and Early Bronze Age*, part I, BAR International Series 268 (i), Oxford 1985, pp. 132-133, fig. IX-3, 4,11-16, pp. 430-432, fig. XXVIII-4.

[16] **М. В. Менабде, Т. В. Кигурадзе, З. К. Кикодзе,** *Результаты работ Квемокартлийской археологической экспедиции (1976-1977 гг.),* Археологические экспедиции государственного музея Грузии, т. VI, Тбилиси 1978, с. 27-45, табл. VII, рис. 1-3 (на груз. яз., рез. на русском).

[17] **J. Thimme**, *Art and Culture of the Cyclades*, Karlsruhe, 1977, nos. 65-72, pp. 436-440, ill. 231-233.

[18] http://mini-girlz.tumblr.com/post/124357715514/ancient-cypriot-bronze-age-terracotta-idol-2700-bc

[19] **А. П. Погожева,** *Антропоморфная пластика Триполья.* Новосибирск: Наука, 1981.

[20] www.pinterest.com/pin/439523244867353056/

իրանի ստորին հատվածում արված խորադիր կտրվածքներով, մանյակ-վզնոցի առկայությամբ և կրման ձևով, ինչպես նաև ենթադրվող գործառույթով կարծես թե համապատասխանում է մերձավորարևելյան ու միջերկրածովյան օրինակներին և, ըստ այդմ, կարող է վերաբերել մ.թ.ա. IV-III հազ. վաղերկրագործական՝ Կուր-արաքսյան մշակույթին: Հարկ է ավելացնել նաև, որ նման վերջույթներով պայտաձև պատվանդանները երբեմն նաև ոչ մեծ ավազանատիպ հավելումներ են ունենում առջևի հատվածում[21], որում, ըստ ամենայնի, արարողությունների ժամանակ դրվել են նվերներ, հեղումներ կատարվել, և/կամ այրվել է կրակ: Այդպիսիք, մասնավորապես, հայտնի են Պուլուր (Բլուր)-Սաքյոլից (աղ. II նկ. 1, 5) և, դարձյալ, վերաբերում են վաղբրոնզեդարյան՝ կուր-արաքսյան մշակույթին:[22] Հատկանշական է, որ նույն մշակույթին վերաբերող հայաստանյան հուշարձաններում (Շենգավիթ, Հառիճ, Ամասիա, Մոխրաբլուր, Կառնուտ, Գյումրի, Մեծ Սեպասար և այլն)[23] հանդիպում են նաև կենդանակերպ վերջույթներով պատվանդաններ (աղ. II նկ. 9), ինչը թույլ է տալիս խոսել այս և վերը նշված վաղբրոնզեդարյան խնդրո առարկա արտեֆակտերի կոնկրետ (և իրարից տարբերվող) պաշտամունքային գործառույթների մասին:

2. Կարևոր է նաև այն, որ գույնով, կավի բաղադրությամբ, թրծման որակով, պատրաստման ձևով և կիրառման ենթադրվող եղավակով խնդրո առարկա մարդադեմ արձանիկ-կուռքն ընդհանրություններ ունի քառանիստ, վերմանասում թույլ ելուստավոր, իրանին շրջանաձև փոսիկներ ունեցող պատվանդանի 3 ոտք-հենակների հետ: Սրանք ևս հատնաբերվել են Մեծամորի սրբարաններից մեկի օվալաձև օջախի մեջ:[24] Պատվանդանի նույնատիպ ոտք ի հայտ է եկել նաև Այգևանի վաղբրոնզեդարյան բնակավայրի կուրարաքսյան կլոր կացարանի 1980-ական թթ. պեղումների ընթացքում (արշավախմբի ղեկավար՝ Ս. Եսայան), այրված

---

[21] Չի բացառվում, որ այդպիսի կառուցված է ունեցել նաև մեծամորյան օրինակը:

[22] **H. Z. Koşay,** *Keban Project. Pulur excavations 1968-1970.* Ankara 1976, pl. 19. **Y. Yakar**, *The Late Prehistory of Anatolia: The Late Chalcolithic and Early Bronze Age*, part II, BAR International Series 268 (ii), Oxford 1985, pp. 430-433, fig. XXVIII-3, 5. **N. Shanshashvili, G. Narimanishvili,** *Dynamics and Nature of the Relations between South Caucasus and Aegean World in the Bronze Age*, in "Aegean World and South Caucasus: Cultural Relations in the Bronze Age", International Workshop, Tbilisi 2016, pp. 13-14, pl. IV-5, pl. V-4.

[23] **С. Есаян,** *Скульптура…,* с. 69, табл. 6, рис. 1-3, табл. 8, рис. 5, табл. 10, рис. 1-4, табл. 11, рис. 1-4. **R. Badalyan, J. Santrot,** *Support de Fover aux Bèliers*, "Arménie: Trèsors de l' Armémie ancienne", Paris-Nantes 1996, p. 47, # 18. **L. Eganyan,** *Mets Sepasar, un habitat du Bronze ancient sur le plateau d' Ashotsk,* "Dans les montagnes d'Arménie, Rouen 2007, pp. 59-61, p. 141, fig. 32, fig. 33a-d.

[24] **Ա. Փիլիպոսյան, Լ. Գևորգյան, Ա. Արզարյան, Ա. Զաքյան**, *Մեծամոր (Պատմահնագիտական ակնարկ),* Երևան 2015, աղ. XIX, նկ. 3:

մշակութային շերտի մեջ և հստակ թվագրվում է մ.թ.ա. III հազ. կեսով: Այսինքն, մեծամորյան օրինակներն էլ կարող են թվագրվել նույն ժամանակաշրջանով:

3. Մեծամորի մարդադեմ արձանիկ-կուռքի իգական բնույթը և միևնույն ժամանակ կրակարանի մաս հանդիսանալու հանգամանքը, կարելի է հիմնավորել նաև հնուց պահպանված և օջախին առնչվող պաշտամունքային մի շարք տվյալներով: Հնագիտական հետազոտությունները ցույց են տալիս, որ հին հասարակություններում օջախը կիրառվել է նաև թաղման արարողությունների ժամանակ, որպես դիակիզման (կրեմացիա) ծեսի իրականացման կարևոր միջոց: Մասնավորապես Միջին Ասիայի (Հարավային Տաջիկստանի) Տուլխար բնակավայրի մ.թ.ա. I հազ. սկզբի հասարակությունը դիակիզման ծեսի ժամանակ արական սեռի հանգուցյալներին այրել է սեղանաձև, իսկ կանանց՝ շրջանաձև օջախների մեջ:[25]

Շատ ժողովրդների համար, հնուց անտի, օջախը տան պաշտամունքի կարևոր ատրիբուտն էր՝ աշխարհի խորհրդանշական կենտրոնը[26]:

Հին Հունաստանում օջախի հովանավորը դիցուհի էր՝ Հեստիան, աստվածներ Քրոնոսի և Ռեայի դուստրը, Զևսի, Պոսեյդոնի, Պեմետրայի և Հադեսի քույրը: Նրա անունը հին հունարենից ստուգաբանվում է որպես «կրակարան, օջախ, ատրուշան»: Զոհաբերվող կենդանին խոզն էր[27]:

Հին Հռոմում այդ գործառույթն իրականացնում էր Վեստա դիցուհին: Նրան նվիրված տաճարում միշտ անմար էր սրբազան կրակը, իսկ տաճարի կույս քրմուհիները՝ վեստալուհիները, դրա մշտարթուն պահապաններն էին[28]: Յուրաքանչյուր տարվա վերջին օրը, հանդիսավոր ծիսակատարության ընթացքում, հանգցվում էր հին կրակն ու նոր տարվա առաջին օրը (հնում՝ մարտի 1-ին) սրբազան համարվող ծառերի փայտակտորների իրար շփմամբ՝ վառվում նորը: Այս առումով Մ. Աբեղյանը գրում էր. «Երկրի վրա կրակ վառելու, ավելի ճիշտ շփումով երկու փայտից սրբազան կրակ հանելու գործողությունը նախնական հայացքով նմանեցրած է

---

[25] **J. P. Mallory**, *In Search of the Indo-Europeans: Language, Archaeology, and Myth*, London 1989, p.53.

[26] **В. В. Иванов, В. Н. Топоров,** *Славянские языковые моделирующие семиотические системы*, Москва 1965, с. 168. **Ե. Լալայան**, *Բորչալուի գաւառ,* ԱՀ, գիրք X, Թիֆլիս 1903, էջ 247: **Ե. Լալայան**, *Վարանդա,* ՀԱ, գիրք Բ, Թիֆլիս 1907, էջ 115:

[27] **А. А. Тахо Годи,** *Гестия,* в кн. “Мифы народов мира”, т. I, Москва 1987, с. 299. **R. S. Beekes,** *Etymological Dictionary of Greek*, Leiden-Boston, Brill 2009, p. 471. **M. Kajava,** *Hestia Hearth, Goddess, and Cult,* CPh, vol. 102, Harvard 2004, pp. 1–20. **R. S. Beekes**, *Etymological Dictionary of Greek*, Brill, 2009, p. 471. http://sigils.ru/symbols/ochag.html; http://www.theoi.com/Ouranios/Hestia.html

[28] **J. Hughes,** *Larousse Desk Reference Encyclopedia*, London 1995, p. 215.

սերելու, ծնելու գործողությանը, և վեդաներում ոչ միայն կրակ հանելն իբրև ծնունդ է նկարագրված, այլ և երկու շփելու փայտերը, որոնք նկարագրվում են իբրև մարդու մարմին, պաշտամունքի մեջ անձնավորված իբրև հայր ու մայր են ըմբռնվում և նոցանից առաջացրած կրակն իբրև որդի»[29]: Վեստայի տաճարից բերված կրակից էին վառվում հռոմեական նոր բնակավայրերում հիմնված կրակարանները[30]: Ավանդաբար Վեստային են նվիրաբերվել նաև մասնավոր տների նախասրահները (vestibulum): Նրան նվիրված տոնը (Վեստալիա) նշվել է ամեն տարվա հունիսի 7-15-ն ընկած ժամանակահատվածում (առավել հաճախ հունիսի 9-ին): Այդ օրը երևելի հռոմեացիները՝ պատրիկները, բոկոտն այցելել են Վեստայի տաճար և իրենց տների բարօրության համար դիցուհուց օրհնություն ու հովանավորություն խնդել: Վեստան պատկերվել է քողածածկ դեմքով, ձեռքին՝ թաս, գայիսոն, ջահ և պալադիում (զինավառ աստվածուհու՝ Աթենասի-Պալասի անդրի)[31]: Օվիդիոսի կարծիքով **Vesta** անունը ծագել է լատիներեն **vi stando**՝ «իշխանությունը գլխավորող» արտահայտությունից: Մեկ այլ ստուգաբանության համաձայն այն կարող է ձևավորված լինել լատիներեն **uestio**՝ «հագուստ, զգեստ, շոր» և հունարեն **ἑστία**՝ «օջախ, կրակարան» բառերից[32]:

Այս առումով ուշագրավ է, որ հայոց ազգագրական ծեսերում ևս, ընդգծվում է կնոջ, օջախի (թոնրի), հագուստի և կրակի խորհրդանշական կապը: Մասնավորապես Արևմտյան Հայաստանի Դարույնք (Բայազետ) բնակավայրից Սևանի ավազան գաղթած հայերը հին ավանդույթի համաձայն՝ թոնրին, որպես սրբազան հովանավորի, ուխտ էին անում, որ քանի դեռ ամուլ հարսը երեխա չի ունեցել, նորածնի համար նախապես շորեր չեն պատրաստի: Եվ երբ պարզ էր դառնում, որ հարսը հղի է, այնժամ նրա գոգնոցը թոնրի ակն էին խրում և սպասում, մինչև որ երեխան ծնվի: Այնուհետև գոգնոցը հանում էին թոնրի ակից, նրանով փաթաթում նորածնին ու պահում այնքան, մինչև որ հարսը կարողանում էր վեր կենալ և հարևաններից կտորներ խնդրելով՝ շոր կարում երեխայի համար[33]:

---

[29] **Մ. Աբեղյան,** *Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու հայոց պատմության մեջ* (արտատպված «Արարատ» ամսագրից), Վաղարշապատ 1899, էջ 147:
[30] **J. Maringer,** *Fire in Prehistoric Indo-European Europe*, JIES, # 4, fall 1976, pp. 178-180.
[31] **M. Dixon-Kennedy,** *Encyclopedia of Greco-Roman Mythology, New York* 1998, p. 318.
[32] **W. Burkert,** *Greek Religion.* Harvard University Press 1985, p.415.
[33] **Ե. Լալայան**, *Նոր-Բայազետի գավառ*, Ա Հ, գիրք XVII, Թիֆլիս, 1908, էջ 31:

Այս ամենը թույլ է տալիս ենթադրել, որ ժամանակին օջախի վրա դրված՝ կնոջ դեմքով Մեծամորի կավակերտ կանացիակերպ պատվանդանի (և/կամ կրակարանի) մասը ևս, արդեն վաղերկրագործական՝ կուր-արաքսյան հանրության մոտ կարող էր ինչ որ ձևով առնչվել օջախի, ընտանիքի և/կամ կրակի պաշտամունքի հետ:

4. Մեծամորի խնդրո առարկա արձանիկ-կուռքի պատրաստման ժամանակաշրջանն ու մշակութային պատկանելությունն առավել հիմնավոր և հավաստի ներկայացնելու համար, մեր կարծիքով, կարևոր նշանակություն ունի նաև արձանիկի վզնոցին ամրացված ուղղանկյունաձև կախիկին վերաբերող զուգահեռների քննարկումը:

Բանն այն է, որ Մերձավոր Արևելքի (այդ թվում նաև Հայկական լեռնաշխարհի) և Միջերկրականի ավազանի մ.թ.ա. III-I հազ. բնակատեղիների, տաճարական համալիրների և դամբարանային կառույցների պեղումների ընթացքում հայտնաբերվել են իրանի քառանիստ կառուցվածքով ինքնատիպ արտեֆակտեր, որ մասնագիտական գրականության մեջ պայմանականորեն «cippi՝ սիպպի» անվանումն են ստացել: Սրանք քարից, կավից, փայտից, մետաղից և այլ նյութերից պատրաստված առարկաներ են, մշտապես առնչվել են հոգևոր պատկերացումների հետ և, կախված չափսերից (3-5 սմ-ից մինչև 2,5 մ), օգտագործվել են որպես կախիկներ (հմայական պահպանակներ), արձաններ կամ կոթող-մահարձաններ: Սրանք բավական լայն տարածում ունեն, հիմնականում առանձնանում են իրանի քառանկյունաձև կառուցվածքով ու մարդակերպ մանրամասներ պարունակող հատկանիշներով:

Վաղագույն դրսևորումները վերաբերում են մ.թ.ա. IV-III հազ. սահմանագծին և մ.թ.ա. III հազ. առաջին քառորդին ու հայտնաբերվել են Սիրիա-Պաղեստինյան աշխարհի (Թել Բրակ, Ղամիշլի) հնավայրերից: Սրանք հիմնականում քարից պատրաստված, ոչ մեծ չափսերի (5-15 սմ բարձրությամբ և 2 սմ հաստությամբ) առարկաներ են[34]: Սիպպիների փոքր չափսերը, ինչպես նաև քառանկյունաձև իրանի և ոճավորված վերնամասի միացման հատվածում երբեմն նկատվող թույլ ակոսները

[34] **Mallowan M.,** *Excavations at Brak and Chagar Bazar*, “Iraq”, vol. IX, London 1947. **Mallowan M.,** *Early Mesopotamia and Iran*, London1965. **Հ. Մարտիրոսյան**, *Գիտությունը սկսվում է նախնադարում*, Երևան 1978, էջ 59-62, նկ. 62: **Oates J.,** *Tell Brak in the Fourth and Third Millennia: From Uruk to Ur III* (in “Tall al-Hamidiya 2”), Freiburg 1990, pp. 133-147. **А. Погожева,** *Антропоморфная пластика Триполья*, Новосибирск 1983, с. 110, 118-119, табл. 35, рис. 19-23

հուշում են, որ վերջիններս թելի կամ ոլորաքուղի օգնությամբ կարվել են հագուստին կամ կրվել որպես կախիկ:

Հաջորդ տարածքը, որտեղից հայտնի են սիպպիները՝ Միջերկրականի ավազանի արևելյան հատվածն է: Դրանց մի մասը պատահական գտածոներ են, որ պահվում են Չիկագոյի և Նիկոսիայի թանգարաններում[35], իսկ մյուսները հայտնաբերվել են Էգեյան ծովի, Կիկլադների (աղ. I, նկ. 6, 10, 14, 15), Կիպրոսի (մասնավորապես Լապիթոսի և Վունուս-Բելլապաիսի) (աղ. I, նկ. 11) և Սարդինիայի (աղ. I, նկ. 12) վաղ և միջին բրոնզի շրջափուլերի դամբարանային համալիրներում:[36] Սրանք բացառապես կավից պատրաստված, կարմիր, փայլեցրած մակերեսով և խորադիր երկրաչափական բնույթի նախշերով արտեֆակտեր են, որոնց չափերը տատանվում են 15-35 սմ միջև: Սրանց կիրառությունը Միջերկրականի ավազանում փաստված է նաև մ.թ.ա. I հազ. երկրորդ կեսի հնագիտական համալիրներում: Վերջիններս դարձյալ ոչ մեծ չափերի կախիկներ են և երբեմն հունարեն կամ լատիներեն նվիրատվական տեքստեր են կրում իրանի դիմահայաց հատվածում:[37]

Նմանատիպ սիպպիներ հանդիպում են նաև Եգիպտոսում: Սրանց ամենավաղ օրինակներն այստեղ երևան են գալիս XI-XII հարստությունների օրոք (մ.թ.ա. III հազ. վերջ - մ.թ.ա. II հազ. սկիզբ), ընդունելություն գտնում XVII-XIX հարստությունների փարավորների մոտ (մ.թ.ա. II հազ. առաջին կես) և հատկապես լայն տարածում ստանում XXI-XXX հարստությունների և Պտղոմեոսների ժամանակաշրջաններում[38] (աղ. III, նկ. 3-8): Ուշագրավ է, որ նրանց մի մասի վերին հատվածում առկա է ընտանիքի և հովանավոր Բեսի քանդակը[39], որով սիպպիները նաև պահապանի գործառույթ են ձեռք բերում: Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները, նրանց

---

[35] **Karageorghis J.,** *La Grande Déesse de Chypre et son Culte,* Lyon-Paris 1977, tab. 16-f, tab. 17-e, f.

[36] **Schaeffer C.,** *Stratigraphie Comparée et Chronologie de l'Asie Occidentale,* London 1948. Tab. 204, fig. 23. **Karageorghis J.,** *La Grande Déesse de Chypre et son Culte,* Lyon-Paris 1977, tab., tab. 15-17.

[37] **Hodjash S., Berlev O.,** *The Egyptian Reliefs and Stelae*, Leningrad 1982, p. 245. **Nicolaou K.,** *Archaeological News from Cyprus 1971,* "AJA", vol. 77, pt. 1, Princeton 1973, p. 52. Nicolaou K., Archaeological News from Cyprus 1972, AJA, vol. 77, pt. 4, Princeton 1973, p. 426.

[38] **R. K. Ritner,**. *Horus on the Crocodiles: a Juncture of Religion and Magic in Late Dynastic Egypt,* in "Religion and Philosophy in Ancient Egypt", ed. William Kelly Simpson. New Haven: Yale University Press, 1989. 103-116. **Sternberg-el Hotabi, Heike,** *Der Untergang der Hieroglyphenschrift. Schriftverfall und Schrifttod im Ägypten der griechisch-römischen Zeit,"Chronique d'Égypte"*69, 1994, 218-248. **J. Quack,** *Review of Sternberg-el Hotabi 1999,* "Orientalische Literaturzeiting" 97:6, 2002, 713-739. **Hodjash S., Berlev O.,** *The Egyptian Reliefs…,* pp. 28, 58, 202-203, 208, 216, 218, 241-242, 244-275, fig. 136-139, 144, 154, 178-183, 185-190, 192-195.

[39] ***D. A. Mackenzie,*** *Egyptian myth and legend, The Gresham Publishing, London 1907, p. 312.*

կիրառությունը Եգիպտոսում դադարում է վաղ միջնադարում, ինչը բացառված չէ, որ կապված է մուսուլմանության տարածման հետ:

Նույն տարբերակին վերաբերող սիպպիներ վկայված են նաև Հայկական լեռնաշխարհում: Ամենավաղ օրինակներից մեկը հայտնաբերվել է Շենգավթի պեղումներից: Քառանկյունաձև իրանով, մարդակերպ ելուստ-վերնամասով այս սիպպին օժտված է կանացի ընդգծված հատկանիշներով և վերաբերում է Կուր-արաքսյան մշակութի շենգավիթյան փուլին (մ.թ.ա. III հազ. երկրորդ կես)[40]: Մեկ այլ օրինակ հայտնաբերվել է Օշականի գյուղի Նոր Օշական թաղամասի մերձակայքում գտնվող միջինբրոնզեդարյան (Թռեղք-վանաձորյան մշակույթ՝ վաղ փուլ) թիվ 10 վերգետնյա դամբարանաբլրից (աղ. III, նկ. 2) և թվագրվում է մ.թ.ա. III հազ. վերջին քառորդով[41]: Մոխրադեղնավուն տուֆից պատրաստված այս գտածոյի (երկ.՝ 8 սմ, լայնքը՝ 6 սմ, հաստ.՝ 2 սմ) ուղղանկյունաձև իրանի դիմային մասը քիչ ուռուցիկ է և ամբողջապես ծածկված ուղղահայաց, հորիզոնական և անկանոն իրար հատվող խորադիր գծերով[42]: Թերևս մ.թ.ա. III-II հազ. են վերաբերում նաև Գեղամա (Սև սար), Արագածի և Սյունյաց (Ուղտասար) լեռների ժայռապատկերներում հանդիպող (աղ. V, նկ. 1-3) քառանկյունաձև իրանով կնացիակերպ սիպպիատիպ պատկերները:[43]

Սիպպիատիպ կախիկները հանդիպում են նաև Հայկական լեռնաշխարհի մ.թ.ա. II հազ. երկրորդ կեսի և մ.թ.ա. I հազ. սկզբի հնագիտական համալիրներում: Նման մի սիպպի փորագրված է Կարմիր բերդի վաղերկաթեդարյան թիվ 14 դամբարանի պեղումներից հայտնաբերված կնոջ տուֆե մահարձանի կրծքին (արձանի գլուխը կոտրվել է անտիկ դարաշրջանում դամբարանում կատարված երկրորդ թաղման ժամանակ, պահպանված մասի բարձրությունը 0,85 մ է) և ըստ ուղեկցող հնագիտական նյութի, վեաբերում է մ.թ.ա. XI-IX դդ.: Մեկ այլ հետաքրքիր սիպպի հայտնաբերվել է Օշականի թիվ 46 դամբարանի պեղումների ժամանակ, պատրաստված է բրոնզի թիթեղից և, ըստ Ս. Եսայանի, վերաբերում է Վաղ Երկաթի

---

[40] **Սարդարյան Ս.,** *Նախնադարյան հասարակությունը Հայաստանում*, Երևան 1967, էջ 200, նկ. 3: **Есаян С.,** *Скульптура…*, табл. 1, рис. 5.

[41] **Փիլիպոսյան Ա., Բիյագով Լ.,** *Նոր Օշականի կախիկ-պահպանակը*, ՀԳՆՆԱԲՀԱ, Եր. 1995, էջ 91-94:

[42] Այսինքն, իր արտաքինով, նախշազարդմամբ և անգամ որոշ չափերով, այն, կարծես թե համընկնում է Մեծամորի արձանիկ-կուռքի վզին փորագրված առարկային:

[43] **Կարախանյան Գ., Սաֆյան Պ.,** *Սյունիքի ժայռապատկերները*, Երևան 1970, աղ. 285, նկ. 2: **Մարտիրոսյան Հ., Իսրայելյան Հ.,** *Գեղամա լեռների ժայռապատկերները,* Երևան 1971, էջ 64, նկ. 62: **Մարտիրոսյան Հ.,** *Գիտությունը սկսվում է…*, էջ 59-67, նկ. 60-64, 67-68:

շրջափուլին:[44] Թերևս Ուշ Բրոնզի շրջափուլի վերջին և/կամ Վաղ Երկաթի շրջափուլին են վերաբերում նաև Կարմիր բլուրի բնակատեղիի մինչուրարտական շերտից հայտնաբերված և սիպպիատիպ հատկանիշներ կրող, կանացիակերպ կուռքերը[45], որ հացահատիկի, ընտանիքի և պտղաբերության պաշտամունքի հետ են առնչվում: Այս առումով, չի բացառվում, որ նման հատկանիշներ կարող էր ունենալ նաև ուրարտական ᴰBaba (նախկին անվանումը՝ ᴰHuba) դիցուհին, որն անվանապես և, թերևս, գործառույթներով առնչվում է շումերական համանուն դիցուհու հետ: Վերջինս համարվում էր մարդկանց և կենդանիների պտղաբերության հովանավորը («Արգասավորության տիրուհին») և հայտնի էր նաև «Մայր աստվածուհի» անվամբ:[46]

Ի մի բերելով սիպպիների վերաբերյալ ներկայացված նյութերը կարելի է եզրակացնել, որ արտեֆակտերի այս տեսակը մ.թ.ա. IV հազ. վերջում առաջին անգամ հանդես գալով Սիրիա-Պաղեստինյան աշխարհի մերձտավրոսյան շրջանում, մ.թ.ա. III հազ. ընթացքում տարածվում է Հյուսիս-արևելյան Աֆրիկայի (Եգիպտոս), Հայկական լեռնաշխարհի, Փոքր Ասիայի, Միջերկրականի ավազանի (Կիպրոս), և Արևելյան Եվրոպայի հնագիտական համալիրներում:

Սիպպի-հմայիլների ինքնատիպ կառուցվածքը, չափերով մեծ օրինակների՝ որպես թաղման արարողության ատրիբուտ՝ մահարձան, օգտագործելը, ինչպես նաև բազմաթիվ նմուշների վրա պահպանված հիերոգլիֆային, պունիկյան, հունարեն և լատիներեն տեքստերի վերլուծությունը թույլ են տալիս պնդել, որ վերջիններիս նաև հմայական հատկություններ են վերագրվել:

Սիրիա-Պաղեստինյան աշխարհի Թել-Բրակ (Ռաս-Էլ-Այն) բնակավայրի Էնկի-Հայա (Էա) աստծո (ստորգետնյա համաշխարհային օվկիանոսի, քաղցրահամ ջրերի աստված, մարդկանց, կենդանիների, ցորենի ու համաշխարհային օրինակարգի ստեղծող) տաճարում հայտնաբերված սիպպիների ձևի և պատկերագրական մանրամասների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ սրանք Մեծ մոր, Ծննդկանի,

---

[44] **Есаян С., Калантарян А.,** *Ошакан I*, Ереван1988, с. 83-84, табл. 69, рис. 6

[45] **Мартиросян А.,** *Идолы из раскопок Кармир-Блура*, “ИФЖ”, Ереван 1958, # 2, с. 114-139. **Мартиросян А.,** *Город Тейшебаини*, Ереван 1961, с. 69. **Кушнарева К.,** *Древнейшие памятники Двина*, Ереван 1977, с. 62-62, рис. 79. **Իսրաելյան Հ.,** *Պաշտամունքն ու հավատալիքները ուշբրոնզեդարյան Հայաստանում*, Երևան 1973, էջ 143-145, նկ. 81, 82: **Есаян С.,** *Скульптура…,* табл. 24-25.

[46] **Ս. Այվազյան**, *Ուրարտական դիցանունների ստուգաբանություններ*, Բանբեր հայագիտության, 2017, # 1 (13), էջ 38-39:

Երկվորյակներ ծնող դիցուհու և անմիջապես երկվորյակների ոճավորված արձանիկ-կախիկներ են հանդիսանում և առնչվել են վերջիններիս պաշտամունքի հետ[47]:

Մերձավոր Արևելքի արևմտյան հատվածներում մ.թ.ա. II հազ. կեսերին նման կանացակերպ քարե սիպպի-հմայիլները կապվում էին նաև Լուսնի դիցուհու պաշտամունքի հետ (աղ. III, նկ. 6)[48]:

Եթե Սիրիա-Պաղեստինյան աշխարհի ու Փոքր Ասիայի սիպպի-հմայիլների ծիսական բնույթի մասին հնարավոր է միայն ենթադրություններ անել, ապա Եգիպտոսից հայտնաբերված օրինակները լավ փաստագրված և ավանդաբար պահպանված տեղեկատվական հիմք ունեն՝ արձանագիր տեքստեր: Եգիպտական սիպպիներին վերագրվել են Բեսի (ընտանիքի հովանավոր աստված) և Հորուսի (երկնքի աստված)[49] գերբնական հատկությունները: Իզուր չէ, որ հնում Նեղոսով կամ Սահարայի անապատով ուղևորվելիս ճամփորդողներն իրենց հետ պարտադիր վերցրել են նման հմայիլներ՝ օձերի, կարիճների, մժեղներից խայթոցներից և կոկորդիլոսներից պաշտպանված լինելու համար (աղ. III, նկ. 3-8, աղ. IV, նկ. 1-4): Ըստ հին եգիպտացիների պատկերացումների, սիպպիները կարող էին բուժել խայթոցներն ու կծոտումները, զերծ պահել վարակիչ հիվանդություններից[50]:

Հայկական լեռնաշխարհի ցեղախմբերը ևս սիպպի-հմայիլներին և սիպպի-կոթողներին (աղ. III, նկ. 1-2, աղ. IV, նկ. 11-15, աղ. V, աղ. VI, նկ. 1-3) չարխափան և հմայական հատկություններ են վերագրել: Մեծ Մոր հետ կապվող սիպպիատիպ կոթողների պաշտամունքի բացառիկ հուշարձանը դարձյալ Մեծամորն է: Վերջինս միջնաբերդի կառույցներից մեկը Հին Արևելքի և Միջերկրականի ավազանի այն եզակի տաճարական համալիրներից է, որի երկրորդ սրբարանում բացված կավակերտ վիթխարի արձանախումբը ներկայացվում է կանոնակարգված և իրար նկատմամբ որոշակի հիերարխիկ կապի մեջ գտնվող սիպպիատիպ ծավալային հորինվածք (աղ. VI, նկ. 1-3): Սրբարանի կենտրոնում Մեծ Մոր (ծննդկանի) սիպպիատիպ արձանն է, որի իրանին (որովայնի հատվածում) ամրացված է

---

[47] **В. Иванов**, *Близнечные мифы,* МНМ, т. 1, Москва 1991, с. 174-176. **В. Топоров**, *Козел,* МНМ, т. 1, Москва 1991, с. 663-664.

[48] **G. Caton-Thompson,** *The Tombs And Moon Temple Of Hureidha (Hadhramaut)*, London 1944, 157-184.

[49] **F. Fleming, A. Lothian,** *The Way to Eternity: Egyptian Myth*. Montreal 1997, pp. 80–81.

[50] **Bonnet H.,** *Skarabäus* (in "Reallexikon der Ägyptischen Altertumskunde"), Berlin 1952. **Hodjash S., Berlev O.,** *The Egyptian…,* pp. 244-246.

համեմատաբար փոքր չափերով մեկ այլ նույնատիպ կերտվածք: Նրանց ստորոտում օղակաձև կրակարանն է, որին արևմտյան կողմից, մի մակարդակ ավելի ցած, միանում է մեկ այլ կրակարան ևս: Այսինքն, տեղում առկա են և Մեծ մոր խորհրդանշական արձանը և օջախները, որոնց փոխկապակցված պաշտամունքը տարածաշրջանում փաստված է առնվազն վաղ բրոնզի շրջափուլից: Հայկական լեռնաշխարհում սիպպի-հմայիլների և սիպպի-արձանների (նաև մահարձանների) կապը Մեծ Մոր (Ծննդկանի) պաշտամունքի հետ, մեր կարծիքով, վկայում է նաև Արգիշթիխինիլի-Արմավիրի պեղումներից հայտնաբերված տուֆե արձանը (աղ. IV, նկ. 11), որի իրանի վերին կեսին (որովայնի հատվածում) փորագրված են մեկը մյուսին ագուցված 2 սիպպիատիպ պատկերներ, իսկ ստորինին՝ թերևս դրանց իմաստը խորհրդանշող «երկվորյակներ» գաղափարագիրը[51]:

Հայ ազգագրության մեջ քննարկված սիպպիների ինքնատիպ դրսևորումները հայտնի են «դաղդղան», «հեքյալ», «հմայիլ, համայիլ», «փռշնի» անվանումներով:[52] Հետաքրքիր է, որ ըստ ժողովրդական հավատալիքների, նման պահպանակները պատրաստվում էին միայն գարնանամուտին (բնության զարթոնքի ժամանակ), այն էլ գիշերային ժամերին՝ նախքան լույսի բացվելը, քանի որ, ըստ ավանդական պատկերացումների, խավարում դեգերող ոգիները նրանց էին շնորհում իրենց մոգական ուժը: Լուսադեմին՝ աքաղաղի կանչի հետ միասին, ոգիներն անհետանում էին, իսկ նրանց կախարդանքը՝ վերանում: Աշխատանքի ընթացքում արգելվում էր խոսելն ու փայտի վրայից փռշին ու թեփը փչելը: Այն միայն թափ էր տրվում: Եթե գործածման ընթացքում հմայիլ-պահպանակը ճեղքվում էր, համարվում էր, որ այն իր վրա է վերցրել կրողին ուղղված չար աչքը: Ճաքած պահպանակը, ըստ սովորության, կորցնում էր իր մոգական ուժը և այլևս չէր օգտագործվում: Հայաստանի Պատմության և Գավառի Երկրագիտական թանգարաններում ներկայումս պահվում են Ախալքալաքի, Ախալցխայի, Աշոցքի, Շիրակի, Լոռվա, Սևանի ավազանի, Ապարանի, Թալինի, Սիսիանի, Կապանի և այլ շրջանների գյուղերից հավաքված, քառանկյունաձև կամ շրջանաձև իրանով ավելի քան 70 հմայական պահպանակներ-

---

[51] **Ա. Мартиросян**, *Аргиштихинили*, Ереван 1974, с. 162, рис. 102. **Кушнарева К.**, *Древнейшие…,* с. 104, рис. 86. **Есаян С.,** *Скульптура …,* табл. 48, рис. 2. **Փիլիպոսյան Ա.,** *Արգիշթիխինիլիից հայտնաբերված տուֆե արձանը*, ՀՀՄշ., դ. 1, Երևան 2001, էջ 37:

[52] **Իսրայելյան Ա.,** *Փայտե փորագրազարդ հմայական պահպանակներ*, ԳՏ, # 11, Երևան 1983, էջ 26: **Իսրայելյան Ա.,** *Փայտե պահպանակ,* ԿԼԱ, # 7-8, Երևան 1988, էջ 45:

դաղդղաններ (աղ. VII): Կախված օգտագործման ձևից, սրանց չափերը կարող են լինել մեծ կամ փոքր: Խոշորներն ամրացվել են տան շեմին, գոմի սյանը, գոմեշի պարանոցին: Միջին չափի հմայական պահպանակները կախվում էին կովի, եզան, երբեմն ոչխարի, խոյի վզից, եղջյուրներից, տիկից, խնոցուց: Փոքրերը կապվում էին երեխաների օրորոցին կամ կարվում հագուստի թիկունքին:[53]

Ի մի բերելով վերը շարադրվածը կարելի է ասել, որ Հայաստանի պատմամշակութային ժառանգության նվիրյալ Լ. Բարսեղյանի կողմից Մեծամոր հնավայրի տարածքում 1960-ական թթ. սկզբին հայտնաբերված կավե մարդադեմ առարկայի հատվածը հաստատապես կնոջ արձանիկ է: Այն, ըստ ամենայնի, կուր-արաքսյան վաղբրոնզեդարյան օջախի վրա դրվող հենակ-պատվանդանի մաս է հանդիսացել, կիրառական նշանակությունից զատ ունեցել նաև պաշտամունքային դեր և ներկայացրել այն հատկանիշներն ու գործառույթերը (օջախի, ընտանիքի, ծննդի, պտղաբերության և այլնի հովանավոր), որ բնորոշ են Մեծ Մայր դիցուհուն:

[53] **Իսրայելյան Ա.,** *Փայտե պահպանակ,* ԿԼԱ, # 7-8, Երևան 1988, էջ 45:



1 2 3 4 5

6 7 8 9 10

11 12 13 14 15 16

Կանացակերպ արձանիկներ: **1.** Մեծամոր **(Հայաստան):** 2. Էսքիշեհիր, 3. Ափիոն-Գարահիսար, 4. Ալաջահույուկ, 7, 16. Իքիզթեփե, 13. պատահական **(Փոքր Ասիա):** 5. Քաթնա **(Սիրիա):** 6. Կարպատոս կղզի, 10, 14. Կիկլադյան կղզիներ **(Էգեյան ծով):** 8. Կուկուտենի-Տրիպոլե **(Ռումինիա):** 9.Վինչա (**Բուլղարիա**): 11. **Կիպրոս:** 12. **Սարդինիա:** 15. Մինչէլամական ժամանակաշրջան **(Հարավարևմտյան Իրան):**



Վաղբրոնզեդարյան օջախների մարդակերպ և կենդանակերպ վերջույթներով հենակ-պատվանդաններ: **1, 5, 8.** Պուլուր (Բլուր)-Սաքյոլ, 4. Էլյազըղ-Բերկրի **(Պատմական Արևմտյան Հայաստան՝ ժամանակակից Թուրքիա): 2.** Պատահական, 3. Թաբարա էլ Աքրադ, 6. Չինիզ հույուկ **(Փոքր Ասիա):** 7. Մարկի Անոլիա **(Կիպրոս):** 9. Կառնուտ **(Հայաստան):** 10. Ամիրանիս Գորա **(Վրաստան):**



1

2

3

4

5

6

7

8

Միպպի հմայիլներ-կախիկներ: **1.** Մեծամոր (մ.թ.ա. III հազ.), 2.Նոր Օշական (մ.թ.ա. XXI-XIX դդ.), 3-8 Եգիպտոս (Նոր թագավորության շրջան՝ մ.թ.ա. II հազ. երկրորդ կես):


1

2

3

4

5

6

7

8

9

10


11

12

13

14


15

1-4. **Եգիպտոս**: 5. Սիդոն **(Պաղեստին): 6.** Հուրեյդա **(Հորդանան):** 7-10. **Կիպրոս (Միջերկրայք):** 11. Արգիշթիխինիլի, 12, 13 Կարմիր բլուր (մինչուրարտական բնակատեղի), 14. պատահական, 15. Դվին **.(Հայաստան):**



Գեղամա (Սև սար), Արագածի և Սյունյաց (Ուղտասար) լեռների ժայռապատկերներ

1

2



3

Մեծամորի II սրբարանի լուսանկարները և սրահի վերակազմությունը (ըստ Է. Խանզադյանի):

ԱՂՅՈՒՍԱԿ VII



Հմայական պահպանակ-դաղդղաններ Հայաստանի տարբեր մարզերից:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱՀ – Ազգագրական Հանդէս, Թիֆլիս:

ԳՏ – Գիտություն և տեխնիկա ամսագիր, Երևան:

ԵՊՀ – Երևանի պետական համալսարան:

ԹԳՄԱՀ – «Թանգարան» գիտատեսական և մեթոդական ամենամյա հանդես, Երևան:

ԼՀԳ – Լրաբեր հասրակական գիտությունների

ԿԼԱ – Կուլտուր-լուսավորական աշխատանք, Երևան:

ՀԱԱՊՊԹ – Հայաստանի ազգագրության և ազգային-ազատագրական պայքարի պետական թանգարան, Սարդարապատ:

ՀԱՎ – Հայաստանի ազգային արխիվ, Երևան:

ՀԳՆՆԱԲՀԱ – Հանրապետական գիտական նստաշրջան նվիրված 1990-1994 թթ. ազգագրական և բանագիտական հետազոտությունների արդյունքներին, Երևան 1995:

ՀՀ ԱԳՆ – Հայաստանի Հանրապետության Արտաքին գործոց նախարարություն:

ՀՀ ԳԱԱ ՀԱԻ – Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Հնագիտության և ազգագրության ինստիտուտ:

ՀՀ ԳԱԱ ԱԻ – Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի Արևելագիտության ինստիտուտ:

ՀՀՀ – Հայաստան հնագիտական հուշարձաններ, մատենաշար, Երևան:

ՀՀՄշ. – Հայաստանի հնագույն մշակույթը, Երևան:

ՀՊՄՀ – Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարան

ՄՄԱԵԺ – Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, Երևան:

ՆԱՀ – Նոր ազգագրական հանդես, Երևան:

ՊԲՀ – Պատմա-բանասիրական հանդես, Երևան:

«Պահպանության ծառայություն» ՊՈԱԿ – ՀՀ մշակույթի նախարարության «Պատմա-մշակութային արգելոց-թանգարանների և պատմական միջավայրի կահպանության ծառայություն» պետական ոչառևտրային կազմակերպություն

ՏՀԳ – Տեղեկագիր հասարակական գիտությունների, Երևան:

AJA – American Journal of Archaeology, Princeton.

AJNES – Aramazd: Armenian Journal of Near Eastern Studies, Yerevan.

AnAr – Anadolu Araštırmaları (Jahrbüch für Kleiasiatische Forchung), Istanbul.

ARAB II – Luckenbill D. D. 1927, *Ancient Records of Assyria and Babylonia,* volume II, Chicago.

AS – Anatolian Studies, London.

ASPU – Armenian State Pedagogical University after Kh. Abovyan.

BAR – British Archaeological Report, London.

CPh – Classical Philology, Harvard.

CTU I – Salvini M., *Corpus Dei Testi Urartei,* volume I, *Le Inscrizioni su Pietra e Roccia*, Documenta Asiana VIII/I, Roma, 2008.

CTU IV – Salvini M., *Corpus Dei Testi Urartei*, volume IV, *Inscrizioni su Bronzi, Argila e Altri Supporti Nueve Inscrizioni su Pietra Paleografia Generale*, Documenta Asiana VIII/IV, Roma, 2012.

JIES – Journal of Indo-European Studies, Washington.

JCS - Journal of Cuneiform Studies, Boston.

SAA III – Livingstone A., 1989: Court Poetry and Literary Miscellanea.

SAA IX – Parpola S., *Assyrian Prophecies,* State Archives of Assyria, # IX, Helsinki 1997.

ZA - Zeitschrift fur Assyriologie und Vorderasiatische Archaologie.

АГПУ – Армянский Государственный Педагогический Университет имени Х. Абовяна.

ИКН – Историко-культурное наследие, Ереван.

ИФЖ – Историко-филологический Журнал, Ереван.

МГУ – Московский Государственный Университет.

МНМ – Мифы Народов Мира, т. 1-2, Москва 1991-1992.

НС – “Наследие и современность” информационный сборник Российского НИИ культурного и природного наследия им. академика Д. С. Лихачёва, Москва.

РМЭ – Российская Музейная Энциклопедия, Москва.

УКН – Меликишвили Г.А.: Урартские клинообразные надписи, Москва 1960.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ – СОДЕРЖАНИЕ

1. Ս. ԴԵՎԵՋՅԱՆ, Ֆ. ԲԱԲԱՅԱՆ – *Գիտնականը, թանգարանագետը, ընկերը*
С. ДЕВЕДЖЯН, Ф. БАБАЯН – *Ученый, музеевед, друг* _____ 3-8

2. Ալ. ԳՐԻԳՈՐՅԱՆ – *Լավրենտի Բարսեղյանի թանգարանագիտական գործունեությունը Խ. Աբովյանի անվան Հայկական պետական մանկավարժական համալսարանում*
Ал. ГРИГОРЯН – *Музееведческая деятельность Лаврентия Барсегяна в Армянском государственном педагогическом университете имени Х. Абовяна* _____ 9-17

3. Լ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ – *Լավրենտի Բարսեղյանի գործունեությունը պատմական հուշարձանների վերականգնման ասպարեզում*
Л. КИРАКОСЯН – *Деятельность Лаврентия Барсегяна в сфере реставрации исторических памятников* _____ 18-23

4. Ս. ԱՌԱՔԵԼՅԱՆ – *Պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պահպանության գործի դրվածքը Խորհրդային Հայաստանում 1980-ական թթ. վերջերին*
С. АРАКЕЛЯН – *Постановка дела сохранения недвижимых памятников истории и культуры в Советской Армении в конце 1980-ых гг.* _____ 24-31

5. Դ. ՊՈՂՈՍՅԱՆ – *Արգելոց-թանգարանների ցանցի ձևավորումը Հայաստանում 1980-1990-ական թթ.*
Д. ПОГОСЯН – *Формирование сети музеев-заповедников в Армении в 1980-1990-ых гг.* _____ 32-44

6. Ս. ՊՈՂՈՍՅԱՆ – *Լավրենտի Բարսեղյանի ավանդը Հայոց ազգագրության թանգարանի հիմնադրման և կայացման գործում*
С. ПОГОСЯН – *Вклад Лаврентия Барсегяна в дело основания и становления Музея этнографии Армении* _____ 45-56

7. Ար. ԳՐԻԳՈՐՅԱՆ – *Լ. Բարսեղյանի «Մոսկովյան նախագիծը»*
Ар. ГРИГОРЯН – «*Московский проект» Л. Барсегяна* _____ 57-70

8. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ – *Հայոց գորգի պահպանման, ցուցադրման և ուսումնասիրման թանգարան - գիտահետազոտական կենտրոն ստեղծելու մասին*
А. ПОГОСЯН – *О создании Музея и научно-исследовательского центра по сохранению, экспонированию и исследованию армянского ковра* _____ 71-78

9. Հ. ՊԻԿԻՉՅԱՆ – *Հայկական երաժշտական մշակույթի պատմության թանգարանի «Սարդարապատյան տեսլականը»*
Р. ПИКИЧЯН – «*Сардарапатское видение» Музея истории армянской музыкальной культуры* _____ 79-86

10. Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ – *История и перспективы организации музея под открытым небом в Армении*
Լ. ԳԵՎՈՐԳՅԱՆ – *Հայաստանում բացօթյա թանգարանի կազմակերպման պատմութ-յունն ու հեռանկարները* _____ 87-98

11. Լ. ԱԼԵՔՍԱՆՅԱՆ –*Հայոց ազգագրության թանգարանում պահվող Զեյվայի (Ղըզըլ թափա) հնագիտական հավաքածուն (դասակարգման և տիպաբանման փորձ)*
Л. АЛЕКСАНЯН – *Археологическая коллекция из Зейвы (Кызыл тепе) Музея этнографии Армении (опыт периодизации и типологии)* _____ 99-113

12. Մ. ԲԱԴԱԼՅԱՆ – *Ուարուբանին, Բագբարթուն (Բագմաշթուն) և Օձասարի արձանագրությունում հիշատակված «Խալդիի կինը»*
М. БАДАЛЯН – *Уарубани, Багбарту (Багмашту) и “Супруга бога Халди” из Оцасарской надписи* _____ 114-135

13. Ա. ՓԻԼԻՊՈՍՅԱՆ – *Կավե պատվանդանի մարդակերպ մաս Մեծամորից*
А. ПИЛИПОСЯН – Антропоморфная часть глиняной подставки из Мецамора ____ 136-155

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ _____156-157

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ _____158-159

ՀՀ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԳԵԼՈՑ-ԹԱՆԳԱՐԱՆՆԵՐԻ ԵՎ
ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՇԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ»
ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

hushardzan.am